

ԼՈՒՅՍ


Մշակութային և հասարակական ամսագիր

لويس

LOUYS

Armenian Monthly

ISSN 1682-5446



Հովիկ Էդգարյան
1925-2016

216, Հոկտեմբեր 2016 թ. No 216, October 2016 شماره ۲۱۶ آبان ماه ۱۳۹۵

Այս համարում

Հայերեն բաժին

1- Խմբագրական.....	0
2- Իրանահայ համայնք.....	1
3- Հայաստանի Հանրապետություն.....	4
4- Արևմտյան Հայաստան.....	16
5- Մփյուռք.....	20
6- Միջազգային.....	23
7- Հասարակական.....	24
8- Մշակույթ.....	32

Պարսկերեն բաժին

Արցախի պատմություն.....	0-2
Գրականություն- Ռուբեն Հովսեփյան.....	3-4

Շապիկի առաջին էջում՝ Հովիկ Էդգարյան

Վերջին էջում՝ Էդ. Բաղդասարյանի նոր գրքերը

Համար 216, Հոկտ. 2016 No. 216, Oct. 2016

ماهنامه لویس - شماره ۲۱۶ آبان ماه ۱۳۹۵

Մշակութային և հասարակական ամսագիր

ԼՈՒՅՍ

Արտոնատեր և գլխավոր խմբագիր՝

Էդ. Բաղդասարյան

Խմբագրական կազմ՝

Թամար Փանոսյան, Վանիկ Բաղդասարյան

Թամ Ղարախանյան, Վաչիկ Վարդանյան

Էմմա Բեգիջանյան, Հովիկ Վարդումյան,

Սաթենիկ Ավետիսյան, Անդրանիկ Խեչումյան

Փոստարկը 15875-9488 Թեհրան - Իրան

Էլեկտրոնային փոստ՝ louys_monthly@yahoo.com

Ինտերնետային հասցեն՝ www.louysonline.com

LOUYS

Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

Edic Baghdasarian

www.Edic-Baghdasarian.com

WEB master: **Baruyr Baghdasarian**

POBox 15875-9488 Tehran – Iran

E-mail : louys_monthly@yahoo.com

Internet : www.louysonline.com

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են

չհամընկնել խմբագրության տեսակետներին:

Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին

պարտադիր է:

ماهنامه لویس

صاحب امتیاز ، مدیر مسئول و سردبیر: ادیک باغدادساریان

نشانی نشریه : تهران صندوق پستی ۱۵۸۷۵-۹۴۸۸

پست الکترونیکی: louys_monthly@yahoo.com:

نشانی اینترنت: www.louysonline.com

Հայաստանի խորհրդարանում տեղի ունեցած ահաբեկչությունից անցել է 17 տարի



17 տարի առաջ՝ հոկտեմբերի 27-ին, ոճրագործների խումբը՝ Նաիրի Հունանյանի գլխավորությամբ, ներխուժեցին Հայաստանի Ազգային ժողովի նիստերի դահլիճ և դիմահար կրակոցներով սպանեցին կառավարության և խորհրդարանի անդամներին:

Ահաբեկչության գոհ դարձան երկրի վարչապետ, Սպարապետ Վազգեն Սարգսյանը, խորհրդարանի նախագահ Կարեն Դեմիրճյանը, ԱԺ փոխնախագահներ Յուրի Բախշյանն ու Ռուբեն Միրոյանը, օպերատիվ հարցերի նախարար Լեոնարդ Պետրոսյանը, խորհրդարանի պատգամավորներ Արմենակ Արմենակյանը, Հենրիկ Աբրահամյանը և Միքայել Քոջանյանը:

Ահաբեկիչների նկատմամբ դատավարությունը տևեց 2001-2003 թվականները: 6 ահաբեկիչները, այդ թվում՝ նրանց ղեկավար Նաիրի Հունանյանը, նրա եղբայր Կարեն Հունանյանը, նրա քեռին՝ Վռամ Գալստյանը, Դերենիկ Բեջանյանը, Էդիկ Գրիգորյանը և Աշոտ Կնյազյանը դատապարտվեցին ցմահ ազատազրկման: Համլետ Ստեփանյանը դատապարտվեց 14 տարվա ազատազրկման:

3 տարի տևած դատավարությունն այդպես էլ չկարողացավ կամ չջանկացավ վեր հանել ահաբեկչության կազմակերպիչներին և մինչ օրս էլ հասարակությունը լուրջ կասկածներ ունի կազմակերպիչների մասով:

Իրանահայ համայնք

Ոչ ևս է

Իրանահայ նշանավոր բերեգերծ, հրատարակիչ, ազգային բարերար, երաժշտագետ, դաշնամուրի ճարտարագետ, բանաստեղծ՝

Հովիկ Էդգարյանը



Իրանահայ գրողների միության նախկին անդամ Հովիկ Էդգարյանի երկար տարիներ եղել է գրողների միության քարտուղարության եւ նախագահության կազմում: Հ. Էդգարյանը հրատարակել է մի շարք աշխատություններ: Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրինությունը բարձր գնահատելով Հ. Էդգարյանի ծառայությունները հայ մշակութային արժեքները կորստից փրկելու եւ հայրենիք ուղարկելու գործում՝ նրան շնորհել է Մեսրոպ Մաշտոցի հուշամեդալ:

Հայաստանի Մշակույթի նախարարության Խնկո-Ապեր անվան գրադարանը հրատարակել է Էդգարյանին նվիրված մի կենսամատենագիտական գրքույկ : Հովիկ Էդգարյանը ծնվել էր 1925թ. Չարմահայ գավառում: Սովորել է նոր Ջուղայում, ապա Լոնդոնում: Հիմնադրել է Թեհրանի 'Բաֆֆի' եւ 'Նոր Անի' դպրոցները: Իր հիմնած Էդգարյան գրական ֆոնդը մինչ օրս հրատարակել է շուրջ 40 անուն գրքեր հայ տարբեր գրողներից, իսկ նրա գրական-բանաստեղծական գործերը հրատարակվել են մի քանի գրքերով. 'Խոսում են Կենդանիները' (Թեհրան, 1980թ.), 'Ծաղկածովի երանգները' (Թեհրան 1980թ.), 'Լուսաշող' (Թեհրան, 1984թ.), 'Եթերային' (Թեհրան, 1998թ.):

Հովիկ Էդգարյանը 1993 թ. հոկտեմբերի 20-ին ընտրվել էր Հայաստանի գրողների միության անդամ (վկայական 333): Հ. Էդգարյանը հասարակական-մշակութային գնահատելի աշխատանք էր կատարել երկար տարիների ընթացքում, հայ մարդկանց իրար մոտեցնելու, նրանց տրամադրելով իր տեղեկությունները, հազարավոր գրքեր ու մամուլ նվիրելով մյուսներին ծանոթացնելով իրար հայ մտավորականներին ու գրողներին, եւ գրական ու մշակութային զանազան

բարեգործություններ, որին չկարողացան հանդուրժել համայնքում իշխող 'կուսակցական դիկտատորն': Նա կյանքին հրաժեշտ տվեց 2016թ. Հոկտեմբերի 2—ին, Թեհրանում:

«Լույսի» խմբագրությունը իր խորին վշտակցությամբ է հայտնում Հովիկ Էդգարյանի վախճանման կապակցությամբ:



Աջից՝ Լույսի խմբագիրը և Հովիկ Էդգարյանը Թեհրան 2011 թ.

ՄՆՀԱՉԴ

Խոր վշտով համակաճ յայտնում ենք մեր շատ սիրելի եւ բանկագին

ՅՈՎԻԿ ԷԴԳԱՐԵԱՆԻ

ցաւակ մահը, որը տեղի ունեցաւ կիրակի, հոկտ. 2-ին:

Թաղումը կը կատարուի ուրբաթ, հոկտ. 7-ին, կ. յ. ժամը 2-ին, Նոր Բուրաստան գերեզմանատանը:

Յուղարկաւորներից խնդրում է նոյն օրը, կ. յ. ժամը 1-ին ներկայ գտնել ներթոյիշեալ հասցեին գերեզմանատուն մեկնելու համար:

ՀԱՍՏԷ՝

Մաջիդիէ, Երկրորդ 16-մետրանոց պող., Ջառին Դոբայի փողոցին կից:

Ցաւակցութիւնները գերեզմանատանը եւ Հ. Մ. Ա. «Նայիրի» միութեան «Սուքերեան» սրահում:

ՍԳԱԿԻՐՆԵՐ՝

Լուդիգ, Զելեն, Լարիսա, Երիկ եւ Աճխտ Էդգարեաններ որդիներ, հարսը եւ թոռները:

Բաֆֆի, ժակլին եւ Արթին Էդգարեաններ որդիներ, հարսը եւ թոռը:

Մարիէտ, Արամ եւ Դոմինիկ Արմաղանեաններ դուստրը եւ թոռները:

Կարեն, Արմեն եւ Արա Ջարգարեաններ քրոջ որդիները ընտանեօք:

Դիանա, Ջակլի եւ Ռուբիկ Մարտիրոսեաններ քեցին եւ որդիները ընտանեօք:

Ժասմէն Միհասեան խնամին ընտանեօք:

Լիսա Արմաղանեան խնամին ընտանեօք: Եադգարեան, Մեհրաբեան, Խաչատրեան, Մինասեան, Դաբեան, Մարտիրոսեան, Ջարգարեան, Բաբունեան եւ Սկրտունեան ընտանիքներ հարազատները:

Հարկ է հիշեցնել որ Իրանահայ գրողների միությունը հիմնականում հիմնադրվեց ‘Նոր Էջականների’ կողմից որոնք ընդհանրապես պատկանում էին ոչ-դաշնակցական եւ ձախակողմյան խավին, սակայն երբ 1958 թվականին հիշյալ կուսակցությունը ձեռք բերեց իրանահայ համայնքի հասարակական-կրոնական իշխանությունը, յուրացրեց համայնքի զանազան կառույցները, որոնցից էր նաեւ գրողների միությունը, ժամանակի ընթացքում, հետագան այլախոհ անդամները, եւ եթե ԻԳ-միության նախագահությունը իրանահայ բանաստեղծ եւ գեղարվեստական գրողների ձեռքում էր, հետագայում անցավ գուտ դաշնակցական տարերին, որոնցից ոմանք բանասեր-պատմաբաններ էին, օրինակ Անդրե Տեր Օհանյան, եւ Արսեն Մամյանը, որոնք թեեւ գնահատելի գործ են կատարել իրանահայ պատմագրության ասպարեզում, սակայն գրողների միությունը նախագահելու անհրաժեշտ հանգամանքներից գուրկ էին:

Մյանով, որակագրկվեց ԻԳ միությունը այդպիսին լինելուց, եւ այդպիսի կարծրամիտ մոտեցում ցուցաբերվեց Հովիկ Էդգարյանի նկատմամբ, որի հետեւանքով նա հրատարակեց հետեւյալ ‘բաց նամակը’.

‘Բաց նամակ իրանահայ գրողների միության Թեհրան, 10 ապրիլ 1984

Որովհետեւ Իրանահայ Գրողների Միությունը, իր արդի վարչությունով, բացարձակ բացասական դիրք է բռնել իմ դեմ, ուստի եւ սույն գրությունը ներկայացնում եմ իմ հրաժարականը, տալով որոշ բացատրություն առ ի տեղեկություն հարգելի հանրության:

Ես, Հովիկ Էդգարյանս, մտել եմ այդ միության մեջ որպես սովորական անդամ եւ հասել եմ քարտուղարության եւ փոխ-նախագահության աստիճանին: Ամենայն շանասիրությամբ աշխատել եմ միության վարկը բարձրացնելու համար, մտածելով որ միությունը գտնվում է իր կոչումի բարձրության վրա. մինչդեռ ինձ համար պարզվեց, որ իրականում Իրանահայ Գրողների Միությունը միայն ու միայն ‘դաշնակցական’ գիծ է տանում եւ հալածանքի է ենթարկում իր ոչ-կուսակցական անդամներին:

Ի դեմ ‘տաշած’ պատրվակը իմ մի հոգվածի բացատրական բաժնի մասին էր, որ տպված էր Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի խոսքերի վրա՝ Իրանահայ կրոնական թեմերն Ս. Էջմիածնից բաժանելու եւ Անթիլիասի Կաթողիկոսությանը կցելու առթիվ, որը ամենայն պարզությամբ գրել էի Լոնտոնից եւ որ տպվել էր ‘Բուլխ’ կիսամյա հանդեսում, 15 հուլիս 1983 թվականին, որը եւ ոչինչով չէր առնչվում Իրանահայ Գրողների Միությանը, սակայն այդ միությունը դատ բացավ իմ դեմ 7 հոկտեմբեր 1988 թ. ու, սակայն, հակառակ իր անդամների պնդումներին, չկարողացավ ինձ արտաքսել միությունից ու միմիայն երեք ամսով ‘կախակայեց’ ու մինչ օրս էլ խուսափում է ինձ որեւէ գրություն տալու այդ առթիվ: Այժմ էլ շարունակում է հեյուրանքներն, գրպարություններն ու հեռախոսային սպառնալիքներն իմ դեմ:

Ի գիտություն հետաքրքրվողների հայտնեմ, որ ես ամենայն անկողմնակալությամբ մինչեւ հիմա իմ մեկենասությամբ հրատարակել եմ 14 գրքեր, որոնց մեջ են եւ սույն միության դաշնակցական անդամների գործերը:

Եթե պիտի այսպես շարունակվի, խորհուրդ կը տամ Ի. Գ. Մ.-ի անունը փոխել ու միմիայն գրել՝ ‘Իրանահայ Դաշնակցական Գրողների Միություն’, որպեսզի ինձ նման միամիտ մարդիկ չանդամագրվեն ու դատի էլ չքաշվեն:

Արդյո՞ք կուսակցական շինելն հանցանք է...

Հովիկ Էդգարյան՝

‘Բաց նամակը’ մնաց անպատասխան, ինչը սովորություն էր համայնքում գործող ‘իշխանավարներին’: Ուստի Հ.

Էդգարյանը հրատարակեց մի այլ գրություն որը բերում ենք այստեղ, իհարկե բացատրության կարիք չենք զգում, քանի որ այդ նամակները պերճախոս վկաներ են.

‘Իրանահայ գրողների միության լուծված պատասխանը ու նրանց արբանյակների հալածիչ գործունեությունը

. Մեր 15 հուլիս 1984 ի համարով հրատարակել էինք իրանահայ գրող եւ հրատարակչական գործի մեկենաս ու բարերար Հովիկ Էդգարյանի ‘Բաց նամակ’-ը Իրանահայ Գրողներու Միութենեն իր հրաժարական պատճառներուն եւ զինք մեկուսացնելու միտող աշխատանքներում մասին: Այսօր ի տես իր դեմ կիրարկվող ‘Լուծված քաղաքականության’ եւ շարունակվող կամայականություններուն, ան երկրորդ բաց-նամակով մը կուզա իր արդար ընդգլգումը հայտնելու այդ մասին: (Խ.)

Թեեւ լուծվունը համաձայնության նշան է, բայց արժե գրել: Ամիսներ սպասեցի պատասխանի, բայց հեյուրանք լսեցի միայն...

Ամիսներ անցավ իմ երկրորդ ‘դատավարությունից’ Իրանահայ Գրողների Միության մեջ ու իմ հրաժարվելուց եւ այդ միությունից մեկուսացվելուց: Կրկին նույն խավարամիտ հոսանքը սկսեց հալածանք եւ դավադրություն ‘Հայ Ժողովրդական Թատրոն’-ի ընկերակցության մեջ իմ հանդեպ, որը թեեւ բաժնետիրանական ընկերակցություն է ու նվաստ ամենամեծ բաժնետերերից եմ (վաթսուն անգամ ավելին՝ քան ինձ հալածող ու մեկուսացնող ամենամեծ տարրը), մի նոր ‘Դատավարություն’-ով կազմալուծեցին նոր ընտրված կազմը, որում ես էլ էի ընտրվել ու մի այլ կազմ՝ ընտրեցին... տիկնանցից: Այդ կազմի ‘գործունեությունից’ յոթ ամիս անցել է ու ոչ մի դրական աշխատանք... տիկնիկայնին խաղ՝ տիկնիկասեր անձերի կողմից ‘Հայ Ժողովրդական Թատրոն’ մակագրությամբ: Նաեւ դավադրություն մի այլ միության մեջ, որին շատ սիրելով՝ խուսափում եմ անունը տալու: Մինչեւ անգամ օրացույցների հրատարակչներին էլ հրահանգեցին, որ իմ գրվածքներին տեղ չտան իրենց օրացույցներում:

... Եւ այսպես՝ սկզբից ի վեր ‘Իրանահայ’ Գրողների Միությունը շարունակաբար իր մասին հորջորջել է, որ անկուսակցական միություն է, ոչ մի հատվածական կողմնակալ դիրք չունի, որ բոլոր-բոլոր տարբեր հայացքների տեր մարդիկ անխտրականորեն եւ հարազատորեն հավասար մասն են կազմում միության ընտանիքին եւ հենց նույն սկզբունքով էր, որ հանցավորի սյունին գամեցին ‘Նոր էջ’ գրական խմբակցությանը, նույնիսկ նրանց երեւակայական ‘Չախ’ անվանելով եւ այլն եւ այլն, ...

Ուրեմն որպես լրացում նախկին մեր գրության ասենք, որ նախ ‘Իրանահայ’ գրողների Միությունը իրավասու չէ այդ ընդհանրական անունը իրեն վերապահելու. ես շատ-շատ կարող է կոչվել ‘Գրողների Միություն’ Իրանում, կամ ‘Մի խումբ համախոհ գրողների միություն’, կամ ինչպես նախկինում եմ գրել... եւ այլն...

Ամենամոտիկ փաստը ‘Նոր էջ’-ականներից հետո հենց իմ խնդիրն եմ օրինակ բերում, որ միության մեջ մի քանի փոքրոգի անձինք, նկատելով որ չլինի թե մի օր ես նախագահ դառնամ եւ իրենք նեղ փառասիրության հիվանդագին աթոռամոլությունից զրկվեն՝ խուճապի մատնվեցին, ձեռնուտտի ընկան, մի քանի հոգի իրար ձեռք ձեռքի տվին ու չեզոքացրին ինձ. Ի հարկե՝ ոչ այն պատճառաբանությամբ որ ‘հակադաշնակցական’ եմ, նման բան չէին կարող ասել, քանի որ ես ոչ մի տեսակի ‘հակա’ չեմ, այլ՝ դաշնակցական չեմ:

Արդյո՞ք կուսակցությունը, որ բազում տարիների անցյալ ունի, նրանց պատասխանատվության չի կանչում, որ կուսակցության

անունը շահագործում են անձնական նեղ, չնչին փառասիրության համար:

Իրանահայ Գրողների Միության քսաներեքերորդ տարեդարձի հանդեսին, Պ. Արսեն Մամյանը՝ նախագահը, իրենց գործունեության ամեն ինչը զեկուցեց, բացի՝ դատարան կազմելը ու դատավարություն կատարելը: Նույն այդ հանդեսում պնակ էին պատեցնում Ի.Գ.Մ. ի գիրքը հրատարակելու համար, ու վեհանձույթուն (ավելի ճիշտ՝ երես) շունեին իմ այդ ֆոնդից օգտվելու: Այդ առթիվ հաջորդ ժողովում բողոքեց Գրիշ Դավթյանը:

Իրենց՝ գլուխ գործոցներից՝ ես մի այլ՝ հերոսություն՝ Մի ինչ որ գաղտնի շրջաբերական է հղվում իրանահայ երեք կրոնական թեմերին, Թեհրան, Նոր Զուղա եւ Թավրիզ, եւ ինձ մեղավոր են ներկայացնում...

Մինչդեռ եղել եմ եւ կամ հավատացյալ քրիստոնյա եւ քահանայի զավակ: Հենց նույն լուսահոգի քահանայինը, որը իր ժամանակին ամենակրթված ու ամենաներկայանալին լինելուց բացի, կալվածայի համալսարանի քննիչ լինելուց բացի, ամենաազգանվեր հոգեւորականն էր ու երեսուն տարի քահանայություն անելով, այդ կուսակցությունը շփոթեց նրան Ավագության աստիճան տալին, որովհետեւ, գիտակցելով հոգեւորականի բարձր կոչումը, որ Հոգեւորականը չպիտք է կուսակցական լինի ու պետք է գործ ունենա ժողովրդի բոլոր խավերի հետ հավասարապես, ուստի եւ նախքան քահանա ձեռնադրվելն հրաժարվել էր Դաշնակցությունից: Եւ առավել, նա Նոր Զուղայի ներգաղթի գրասենյակում հայերին արձանագրում էր Հայաստան ճամբելու համար: Ու այդ քենը մնացել էր Դաշնակցական՝ ազգայինների՝ սրտում...

Իրանահայ Գրողների Միության անդամակցության շրջանին ամեն առիթով օգտակար եմ եղել եւ զորավիզ հանդիսացել... Նշեմ հենց միայն, որ գրողների գրքերից իմ նյութական միջոցներով լույս ընծայելուց բացի, իմ անվամբ այդ ֆոնդի իրավունքն էլ իրանահայ Գրողների Միությանն էի տվել, որ հրատարակչությունը շարունակվեր: Իսկ ամենազխտավորը՝ ուզում էի իմ միջոցներով միությանն օժտել սեփական կենտրոն-հավաքատեղիով: Խելացիները՝ փուշ մը՝ խելք շունեցան գոնե իմ այդ առատաձեռնությունից, նվիրումից եւ պատրաստակամությունից օգտվելու:

Իմ կողմից մտավորական ծերերի համար մի ազգային ծերանոց հիմնելու կապակցությամբ, որի խնդիրը բերնի ծամոն են դարձրել, ես դրամը պահ էի դրել Թեհրանի Հայոց Ազգային Առաջնորդարանում, ու երկու եւ կես տարի այդ գումարն մնալուց հետո՝ Թեմական խորհուրդն՝ իր 11-285 թիվ նամակում ինձ գրեց որ՝ «... ժամանակին մամուլի միջոցով հանրությանը տեղյակ է պահվել ձեր կողմից կատարված հատկացումից...», ցավ ի սիրտ ճիշտ չէր, եւ չարամիտները չէին թողել, որ հաղորդագրություն տպվեր մամուլում, ապա, չիրականանալով իմ ցանկությունը ստիպված այդ դրամն հետ վերցրի:

Մի կազմակերպված պայքար կուսակցության անդամների կողմից՝ մեկ չեզոք անձի դեմ, մեկի դեմ՝ որ իր ամբողջ նյութական, ֆիզիքական եւ կրթական ու բարոյական կարողությունները գործի է դրել ի նպաստ հայ ժողովրդի ու հայ մշակույթի: Անձիս են սպառնում, որովհետեւ գրել եմ թե ինչ որ օտար կազմակերպություն մեր թեմերը անջատեց Ս. Էջմիածնից: Ուրեմն ես՝ ապազգային եմ, ինչպես հորջորջում են շարախոսները:

Ու վերջապես ձեռնարկել են միությունների ու կազմակերպությունների կանոնադրերն փոխելու եւ իրենց ցանկացած կետերն մտցնելու, որպեսզի ուզած դեպքում հեռացնեն ո՛ւմ որ ցանկանան եւ իրենց մարդիկը տեղադրեն: Սա եւս մի նոր՝ Արշավ՝ է...

Ուրեմն, ի զուր ենք աշխատում խաղաղ հունի մեջ պահելու հայ համայնքային կյանքը, քանի դեռ կան այդ դավադիրները ու ոչ-կուսակցականներին հալածողները:

Թող միայն ես չլինեմ գանգատալից գրողը, թող լուսության շապավիհնե մյուս դժգոհները: Թող գրեն ի լուր ամենքի:

Թեհրան, 19 նոյեմբեր 1981թ.

Հովիվ Էդգարյան՝

1985 թ. փետրվարին Ի. Գ. Միության ամենատարեց անդամը հրատարակեց հետևյալ բողոքագիրը, որը եւս պարզապես ներկայացնում է իրականությունը:

Բողոք եւ առաջարկ

Այսու, Իրանահայ գրողների Միության ամենաերեց ու երկար տարիների անդամ Բագրատ Բուդաղյանս, խստիվ քննադատում եմ միության անդամների արարքը, որ մի բջիջ կազմեցին ու հալածանքի ենթարկեցին մյուսականս նվիրյալ անդամ, գրող ու տասնյակ գրքերի մեկենաս Պարոն Հովիվ Էդգարյանին ու նրա հեռանալու պատճառը դարձան, որով եւ հատվածականություն ստեղծվեց ու քայքայվեց միությունը ու այսօրվա դժբախտ օրին հասավ, որ վերջին հավաքին յոթ հոգի պիտի ներկա լիներ: Հիշյալ բջիջն էլ, որ կազմած էր վահե կազարյանով, Ստելլա Բաղունյանով, Էմմա եւ Պերճուհիով ցրիվ եկավ ու այդ՝ անդամները՝ թափառական դարձան աշխարհի զանազան երկրներում, հենց այդ անբարեխիղճ աշխատանքի ամոթից ու այդ նույն ամոթանքը մնաց եւ կը մնա ընդմիշտ Ի. Գ. Միության սեփականությունը: Ի. Գ. Մ. անճարակ նախագահ Պարոն Արսեն Մամյանն էլ, փոխարեն կանխելու, դարձավ նրանց ձեռքի խաղալիքը ու նրանց ծափովը պարեց... Երկու անգամ դատի կանչեցին Պարոն Էդգարյանին ու ամենաստոր պրոպագանդը կատարեցին այդ նվիրյալ ու գործունյա մարդու հասցեին, այս քաղաքական տագնապալի օրերով:

Հիշյալ Պարոն Էդգարյանը կարողացավ սփյուռքյան թերթերում երկու անգամ մեզ խայտառակել ու մենք չկարողացանք պատասխանել, քանի որ նա էր ճիշտ ու իրավացին:

Հիշյալ Պարոնը արդեն ձեռնարկել է մի շենք է կառուցում ու պիտի իր շուրջը հավաքի արժանի գրողներ, մեծ ու բեղմնավոր գրական աշխատանք սկսելով, որի արարքով լրիվ պիտի չբանա այս միության անունը ու թուքն ու ամոթանքը պիտի վայելենք մենք, պատմության մեջ ընդմիշտ սեւացած մի միություն պիտի համարվի մեր քայքայված միությունը:

Այսու առաջարկում եմ լուծարել ենթարկել այդ քենոտ կազմը, այսինքն այսօրվա վարչությունը, որը այլևս անելիք չունի, որը հենց առաջին օրից էլ ապօրինի էր ընտրվել, քանզի վերջին տարիներում թե նախագահ եւ թե փոխ-նախագահը միությանը մասնակցող անդամ չէին ու կազմակերպված, հենց եկան ու ընտրվեցին վարչության մեջ: Քարտուղարուհին էլ հայերեն չմանալով իր փոխարեն Պ. Ժորժ Մարտիրոսյանն է արձանագրությունները կազմել: Արդյո՞ք իրանահայ գրողների միության քարտուղարուհին չպիտի հայերեն իմանա՞... Արդյո՞ք հողը չի եկել այդ միության գլխին. Նոր կանոնագիրն էլ հենց իրենք, այդ քենոտ կազմը կազմեց ու պարտադրեց, որ իրենց աթոռը ամբանար:

Առաջարկում եմ նոր կազմ ընտրել ու մամուլով տեղյակ պահել հանրությունը, ինչպես նաեւ Պարոն Էդգարյանից էլ մամուլով ներողություն խնդրել, որպեսզի հնարավոր լինի գեթ մի փոքր չափով ծածկել մեր ամոթը:

Բագրատ Բուդաղյան

17 փետրվար 1985թ.

Պատճենը՝ Ալիք օրաթերթին՝

Հայաստանի Հանրապետություն

Նոր «հոկտեմբերի 27»-եր չեն բացառվում, քանի «Հոկտեմբերի 27-ը» բացահայտված չէ. Արամ Սարգսյան



Գործող իշխանությունները ոչինչ չեն արել, որ «Հոկտեմբերի 27»-ը բացահայտվի: Այսօր ոճրագործությունից 17 տարի անց էլ, ըստ սպանված սպարապետ Վազգեն Սարգսյանի եղբոր՝ Արամ Սարգսյանի, նույնիսկ անջատված մասով մինչևեւ հիմա ոչինչ չի արվել:

«Իշխանությունները համարում են, որ բացահայտված է, բայց այդպես չէ: «Հոկտեմբերի 27»-ի ոճրագործությունը գոնե պատվիրատուների առումով բացահայտված չէ: Եվ քանի բացահայտված չէ, նոր «հոկտեմբերի 27»-եր բացառված չեն այս երկրի համար: Այն մարդիկ էլ, որոնք որոշակի ազդեցություն են ունեցել, իրենց բավարարված են համարում, բայց իրենց խղճի առաջ շատ հարցեր ունեն տալու», - ասաց Արամ Սարգսյանը:

Վազգեն Սարգսյանի եղբոր կարծիքով, անհետօրինակություն է գործի բացահայտումը թողնել սպանվածների ընտանիքների վրա: Ըստ Արամ Սարգսյանի՝ պետք է իշխանություններն ուսումնասիրեն բոլոր վարկածներն ու բացահայտեն: Թե ինչու սպանեցին Վազգեն Սարգսյանին եւ մյուսներին, Արամ Սարգսյանի կարծիքով, ոչ մի վարկած բացառել պետք չի:

Հիշեցնենք, որ 17 տարի առաջ՝ հոկտեմբերի 27-ին, ոճրագործների խումբը՝ Նաիրի Հունանյանի գլխավորությամբ, ներխուժեցին Հայաստանի Ազգային ժողովի նիստերի դահլիճ եւ դիմահար կրակոցներով սպանեցին կառավարության եւ խորհրդարանի անդամներին:

Ահաբեկչության զոհ դարձան երկրի վարչապետ, Սպարապետ Վազգեն Սարգսյանը, խորհրդարանի նախագահ Կարեն Դեմիրճյանը, ԱԺ փոխնախագահներ Յուրի Բախշյանն ու Ռուբեն Միրոյանը, օպերատիվ հարցերի նախարար Լեոնարդ Պետրոսյանը, խորհրդարանի պատգամավորներ Արմենակ Արմենակյանը, Հենրիկ Աբրահամյանը եւ Միքայել Քոթայանը:

Ահաբեկիչների նկատմամբ դատավարությունը տեւեց 2001-2003 թվականները: 6 ահաբեկիչները, այդ թվում՝ նրանց ղեկավար Նաիրի Հունանյանը, նրա եղբայր Կարեն Հունանյանը, նրա քեռին՝ Վրամ Գալստյանը, Դերենիկ Բեջանյանը, Էդիկ Գրիգորյանը եւ Աշոտ Կնյազյանը դատապարտվեցին ցմահ ազատազրկման: Համլետ Ստեփանյանը դատապարտվեց 14 տարվա ազատազրկման:

3 տարի տեւած դատավարությունն այդպես էլ չկարողացավ կամ չցանկացավ վեր հանել ահաբեկչության կազմակերպիչներին եւ մինչ օրս էլ հասարակությունը լուրջ կասկածներ ունի կազմակերպիչների մասով:

Կարեն Դեմիրճյանից ու Վազգենից վախեցան. Ռիմա Դեմիրճյանը վատահ է, որ հոկտեմբերի 27-ը չի բացահայտվի



Ոճրագործությունից անցել է 17 տարի, բայց մենք գիտենք այնքան, որքան 1999 թվականի հոկտեմբերի 27-ին, ոչ մի բան չբացահայտվեց: Այս մասին, այսօր՝ հոկտեմբերի 27-ին, Կոմիտասի անվան պանթեոնում, լրագրողների հետ գրույցում նշել է Կարեն Դեմիրճյանի այրին՝ Ռիմա Դեմիրճյանը:

«Ես կարծում եմ, որ նման հանցագործությունները չեն բացահայտվում, նույնիսկ եթե իմանում են: Քենեդիի սպանությունը մինչ օրս չի բացահայտվում, թեւ շատերը գիտեն, ենթադրում են: Ես օրինակ մի բան գիտեմ, որ ինքը շատերին խանգարում էր եւ դրսում, եւ ներսում: Սա, ընդհանարպես, գլոբալ քաղաքականության հարց է, այստեղի հետ այնքան չի կապված, որքան դրսի: Ճիշտ է, հայերի ձեռքերով են կատարել, բայց հայերը շատ թշնամիներ ունեն, երեւի տեսան, որ հատկապես երբ միացան Վազգենի հետ, դա հզոր ուժ էր դրանից վախեցան», - ասաց նա:

Ռիմա Դեմիրճյանը կարծում է, որ եթե «Հոկտեմբերի 27»-ի ոճրագործությունը չլիներ, ուրիշ Հայաստան կունենայինք. «Ես չեմ ստի, որ ամեն ինչ լավ կլիներ, որովհետեւ ժամանակները դժվար են, ղեկավարելը շատ դժվար է, բայց զգալի չափով ուիշ կլիներ: Կարեն Մերոբիչը մի հարցազրույցում ասել է՝ իշխանությունը դժվար գործ է, բայց նաեւ հաճելի, եթե ուզում ես ծառայել ժողովրդիդ ու երկրիդ: «Հոկտեմբերի 27»-ը բոլոր ոլորտների վրա քայքայիչ ազդեցություն ունեցավ: Մինչևեւ հիմա շարունակվում է: Այդ հանցագործությունն ուղղակի խափանեց մեր ամբողջ կյանքը, ոչ միայն մեր անձնականը, հասարակության հավատը, նպատակաւսացությունը»:

Ռիմա Դեմիրճյանը չի հավատում, որ «Հոկտեմբերի 27-ը» երբեւէ կբացահայտվի. «Ես միշտ ասել եմ, որ դա կարող է պատահականորեն ստացվի, որովհետեւ այնպիսի ուժեր են խառնված...: Ծատ մտածված էր ամեն բան, ինչ՞ու պետք է գային ԱԺ, ինչու պետք է ասելին, թե պատահական ենք սպանել: Ոնց էր պատահական սպանել, երբ ստուգողական կրակոց է եղել: Ամեն ինչ մտածված էր մինչևեւ վերջ, սա շատ հմուտ կազմակերպված քաղաքական սպանություն էր»:

Հիշեցնենք, որ 17 տարի առաջ՝ հոկտեմբերի 27-ին, ռճրագործների խումբը՝ Նաիրի Հունանյանի գլխավորությամբ, ներխուժեցին Հայաստանի Ազգային ժողովի նիստերի դահլիճ եւ դիմահար կրակոցներով սպանեցին կառավարության եւ խորհրդարանի անդամներին:

Ահաբեկչության զոհ դարձան երկրի վարչապետ, Սպարապետ Վազգեն Սարգսյանը, խորհրդարանի նախագահ Կարեն Դեմիրճյանը, ԱԺ փոխնախագահներ Յուրի Բախշյանն ու Ռուբեն Միրոյանը, օպերատիվ հարցերի նախարար Լեոնարդ Պետրոսյանը, խորհրդարանի պատգամավորներ Արմենակ Արմենակյանը, Հենրիկ Աբրահամյանը եւ Միքայել Քոթանյանը:

Ահաբեկիչների նկատմամբ դատավարությունը տեւեց 2001-2003 թվականները: 6 ահաբեկիչները, այդ թվում՝ նրանց ղեկավար Նաիրի Հունանյանը, նրա եղբայր Կարեն Հունանյանը, նրա քեռին՝ Վռամ Գալստյանը, Դերենիկ Բեջանյանը, Էդիկ Գրիգորյանը եւ Աշոտ Կնյազյանը դատապարտվեցին ցմահ ազատազրկման: Համլետ Ստեփանյանը դատապարտվեց 14 տարվա ազատազրկման:

3 տարի տեւած դատավարությունն այդպես էլ չկարողացավ կամ չցանկացավ վեր հանել ահաբեկչության կազմակերպիչներին եւ մինչ օրս էլ հասարակությունը լուրջ կասկածներ ունի կազմակերպիչների մասով:

Ամեն ինչ արվեց «Հոկտեմբերի 27»-ի ռճրագործությունը կոծկելու համար. Ստեփան Դեմիրճյան



Ամեն ինչ արվեց «Հոկտեմբերի 27»-ի ռճրագործությունը կոծկելու համար: Այս մասին, այսօր՝ հոկտեմբերի 27-ին, ԱԺ-ի այգում «Հոկտեմբերի 27-ի» ողբերգության 17-րդ տարելիցի արարողության ժամանակ լրագրողների հետ զրույցում նշել է ՀԱԿ խմբակցության պատգամավոր Ստեփան Դեմիրճյանը:

«Այո, կարող ենք արձանագրել, որ ցանկություն չի եղել բացահայտելու: Դա առաջին հերթին վերաբերում է այն իշխանություններին, որոնց ժամանակ տեղի ունեցավ ռճրագործությունը», -ասաց նա:

Նա կարծիք հայտնեց, որ եթե չլիներ «Հոկտեմբերի 27-ը», մենք միանգամայն ուրիշ երկրում կայրեինք. «Հոկտեմբերի 27-ի բացասական հետևանքներն առ այսօր իրենց զգացնել են տալիս և հաղթահարված չեն»:

Ստեփան Դեմիրճյանը չի բացառում, որ դրսի ուժերը ներգրավված են եղել ռճրագործության իրագործման մեջ. «Բայց ամեն դեպքում այդ ռճրագործությունը կատարվել է ներսի ստահակների միջոցով»:

Հիշեցնենք, որ 17 տարի առաջ՝ հոկտեմբերի 27-ին, ռճրագործների խումբը՝ Նաիրի Հունանյանի գլխավորությամբ, ներխուժեցին Հայաստանի Ազգային ժողովի նիստերի դահլիճ եւ դիմահար կրակոցներով սպանեցին կառավարության եւ խորհրդարանի անդամներին:

Ահաբեկչության զոհ դարձան երկրի վարչապետ, Սպարապետ Վազգեն Սարգսյանը, խորհրդարանի նախագահ Կարեն Դեմիրճյանը, ԱԺ փոխնախագահներ Յուրի Բախշյանն ու Ռուբեն Միրոյանը, օպերատիվ հարցերի նախարար Լեոնարդ Պետրոսյանը, խորհրդարանի պատգամավորներ Արմենակ Արմենակյանը, Հենրիկ Աբրահամյանը եւ Միքայել Քոթանյանը:

Ահաբեկիչների նկատմամբ դատավարությունը տեւեց 2001-2003 թվականները: 6 ահաբեկիչները, այդ թվում՝ նրանց ղեկավար Նաիրի Հունանյանը, նրա եղբայր Կարեն Հունանյանը, նրա քեռին՝ Վռամ Գալստյանը, Դերենիկ Բեջանյանը, Էդիկ Գրիգորյանը եւ Աշոտ Կնյազյանը դատապարտվեցին ցմահ ազատազրկման: Համլետ Ստեփանյանը դատապարտվեց 14 տարվա ազատազրկման:

3 տարի տեւած դատավարությունն այդպես էլ չկարողացավ կամ չցանկացավ վեր հանել ահաբեկչության կազմակերպիչներին եւ մինչ օրս էլ հասարակությունը լուրջ կասկածներ ունի կազմակերպիչների մասով:

Պատգամավորները մեկ րոպե լռությամբ հարգել են 1999թ. հոկտեմբերի 27-ի ահաբեկչության զոհերի հիշատակը



Հայաստանի Ազգային ժողովի պատգամավորներն այսօր մեկ րոպե լռությամբ հարգել են 1999 թվականի հոկտեմբերի 27-ին խորհրդարանում իրականացված ահաբեկչության զոհերի հիշատակը:

1999թ. այս օրը խորհրդարան ներխուժած ահաբեկիչների խումբը գնդակահարեց ԱԺ խոսնակ Կարեն Դեմիրճյանին, վարչապետ Վազգեն Սարգսյանին, ԱԺ փոխխոսնակներ Յուրի Բախշյանին եւ Ռուբեն Միրոյանին, օպերատիվ հարցերի նախարար Լեոնարդ Պետրոսյանին եւ պատգամավորներ Արմենակ Արմենակյանին, Միքայել Քոթանյանին եւ Հենրիկ Աբրահամյանին:

ԱԺ-ում հոկտեմբերի 27-ի զոհերին նվիրված հուշակոթողի մոտ հիշատակի արարողություն է տեղի ունեցել

Հոկտեմբերի 27-ի ողբերգության 17-րդ տարելիցի կապակցությամբ Ազգային ժողովի այգում 1999թ.

հոկտեմբերի 27-ի գոհերի հիշատակին նվիրված հուշակոթողի մոտ տեղի է ունեցել հիշատակի արարողություն:

Ազգային ժողովի նախագահ Գալուստ Սահակյանը, պատգամավորները, ԱԺ աշխատակազմը ծաղիկներ խոնարհեցին հոկտեմբերի 27-ի ոճրագործության հետևանքով զոհված գործիչների հիշատակին:



2016 թվականի հոկտեմբերի 27-ին ՀՀ ԱԺ նախագահ Գալուստ Սահակյանը, ԱԺ փոխնախագահներ Էդուարդ Շարմազանովը և Հերմինե Նաղդայանը, ԱԺ պատգամավորները, զոհված գործիչների հարազատները, այդ թվում՝ Ստեփան Դեմիրճյանն ու Արմեն Արմենակյանի կինը՝ Արմինե Արմենակյանը, խորհրդարանի աշխատակազմի ներկայացուցիչները, խորհրդարանում հավատարմագրված լրագրողները ծաղիկներ են դրել ոճրագործության գոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթողին և լույսավորում են խոնարհումով հարգել նրանց հիշատակը:

ԱԺ նախագահ Գալուստ Սահակյանը 1999 թվականի հոկտեմբերի 27-ին տեղի ունեցածը որակել է ողբերգություն՝ պետության և մեր ժողովրդի համար:

Հիշեցնենք, որ 17 տարի առաջ՝ հոկտեմբերի 27-ին, ոճրագործների խումբը՝ Նաիրի Հունանյանի գլխավորությամբ, ներխուժեցին Հայաստանի Ազգային ժողովի նիստերի դահլիճ և դիմահար կրակոցներով սպանեցին կառավարության և խորհրդարանի անդամներին:

Ահաբեկչության գոհ դարձան երկրի վարչապետ, Սպարապետ Վազգեն Սարգսյանը, խորհրդարանի նախագահ Կարեն Դեմիրճյանը, ԱԺ փոխնախագահներ Յուրի Բախշյանն ու Ռուբեն Միրոյանը, օպերատիվ հարցերի նախարար Լեոնարդ Պետրոսյանը, խորհրդարանի պատգամավորներ Արմենակ Արմենակյանը, Հենրիկ Աբրահամյանը և Միքայել Քոթանյանը:

Ահաբեկիչների նկատմամբ դատավարությունը տևեց 2001-2003 թվականները: 6 ահաբեկիչները, այդ թվում՝ նրանց ղեկավար Նաիրի Հունանյանը, նրա եղբայր Կարեն Հունանյանը, նրա քեռին՝ Վռամ Գալստյանը, Դերենիկ Բեջանյանը, Էդիկ Գրիգորյանը և Աշոտ Կնյազյանը դատապարտվեցին ցմահ ազատազրկման: Համլետ Ստեփանյանը դատապարտվեց 14 տարվա ազատազրկման:

3 տարի տևած դատավարությունն այդպես էլ չկարողացավ կամ չցանկացավ վեր հանել ահաբեկչության կազմակերպիչներին և մինչ օրս էլ հասարակությունը լուրջ կասկածներ ունի կազմակերպիչների մասով:

Հայաստանն ու Ռուսաստանը մարտական տանկերի մոդերնիզացման մեծածավալ ծրագիր են սկսել



Հայաստանն ու Ռուսաստանը սկսել են հիմնական մարտական տանկերի մոդերնիզացման մեծածավալ ծրագիր: Տանկերը կարդիականացվեն մինչև S-72R4 մակարդակի, որով երկուսն էլ ունենում «Տանկային բիաթրոն»-ի մասնակից թիմերը: Հատկանշական է, որ ավելի վաղ ՀՀ ՊՆ-ն պլանավորում էր տանկերի արդիականացման պայմանագիր կնքել լեհական Bumar Łabedy ընկերության հետ:

ՀՀ ՊՆ մամուլի խոսնակ Արծրուն Հովհաննիսյանը «Իզվեստիա»-ի հետ զրույցում հայտնել է, որ տանկերի կատարելագործման աշխատանքներն արդեն սկսվել են: Նրա խոսքով՝ արդիականացված մարտական մեքենաների քանակն ու արդիականացման ժամկետները չեն նշվում: Պարբերականի իրազեկ աղբյուրները հայտնել են, որ խոսքը մի քանի տասնյակ միավոր տեխնիկայի մասին է:

«Տանկերը կարդիականացվեն մինչև բիաթրոնային մակարդակի, այսինքն՝ S-72R4, որը բարելավված մաներային բնութագրեր և մարտական ցուցանիշներ ունի: Ընդ որում, աշխատանքները կընթանան Հայաստանում, ինչը հայկական կողմին թույլ կտա դրանք պակաս ծախսատար դարձնել, այսինքն՝ ավելի շատ տանկեր արդիականացնել», - ասել է պարբերականի զրուցակիցը:

Բ4 մոդելն ունի «Մոսնա-Ու» ժամանակակից բազմալիքային նշանառություն, որը տանկն ավելի է ադապտացնում գիշերային գործողություններին: Որպեսզի տանկի հրամանատարն ավելի լավ տեսնի իրավիճակը, S-72-ի բիաթրոնային տարբերակի վրա տեղադրվել է շրջանային տեսադաշտի կոմպակտ համալիր, որը թույլ է տալիս օրվա ցանկացած ժամի նկատել թիրախն ու հայտնել այդ մասին: Այն նաև կարող է աշխատել կառավարվող գեներով և հեռակառավարմամբ պայթող սպառազինություններով:

Անկախ ռազմական փորձագետ Ալեքսեյ Խլոպոտովը պարբերականի հետ զրույցում նշել է, որ հոկտեմբերին Երեւանում կայացած ArmHiTec-2016 ցուցահանդեսի S-72R4 արդիականացված տանկը հազեցած էր հենց հեռակառավարվող գնդացրային սարքով, ինչը նշանակում է,

որ հնարավոր է այն տեղադրել արդիականացվող S-72-ի վրա:

«Եթե համեմատենք S-72R4 տանկը S-90-ի հետ, ապա բիաթրոնային տարբերակը գերազանցում է շարժունակությամբ՝ ի շնորհիվ ավելի հզոր շարժիչի եւ թեթեւ գանգվածի: Բ4-ը նաեւ կրակի կառավարման ավելի արդյունավետ համակարգ ունի, մեծացրած տեսադաշտ եւ ավելի լավ է հարմարեցրած գիշերային մարտական գործողություններին բազմալիքային նշանառության հաշվին: Միաժամանակ S-90-ը ավելի լավ է պաշտպանված հաստ զրահով եւ ունի հրամանատարի հեռակառավարվող գնդացրային սարք, որը թույլ է տալիս կրակ բացել առանց դիտանցքից դուրս գալու», – ասել է Խոլպոտովը:

«Նախքան Ռուսաստանի հետ պայմանագիրը Հայաստանը պլանավորում էր S-72-ը արդիականացնել լեհական Bumar Łabedy ընկերության հետ PT-72U ծրագրով, – պարաբանում է «Օտվագա 2004» ինտերնետ նախագծի գլխավոր խմբագիր Վիտալի Մոխսեւը, – 84 տանկի արդիականացման պայմանագիրը, որոշ տվյալներով, Երեւանին պետք է արժենար 100 մլն դոլար: Սակայն ռուսական «Տանկային բիաթրոնին» մասնակցելուց հետո հայ տանկիստները շատ լավ կարծիք էին կազմել S-72R4 արդիականացված տարբերակի մասին, ինչն էլ ազդել էր երկրի ռազմական ղեկավարության որոշման վրա»:

Օրվա գլխավոր լուրերը՝ «մեկ տողով».

Որերգական պատահար Հյուսիսային Օսիայում: Առավոտյան ժամը 04:30-ի սահմաններում Վլադիկավկազ-Բեյլան շրջանցիկ ճանապարհին **Մոսկվա-Երեւան երթուղու ավտոբուսը բախվել է «Սկանիա»** բեռնատարին: Պատահարի հետեւանքով **5 մարդ է զոհվել**, 27 վիրավոր կա: Տուժածներից 4-ը երեխաներ են: Ներկայում տարբեր **հիվանդանոցներում 9 տուժած կա**, այդ թվում՝ 4 երեխաները: Նրանցից երկուսը վերակենդանացման բաժանմունքում են, մեկի վիճակը բժիշկները ծանր են գնահատում: Տուժածների խոսքով՝ վթարի պահին ուղեւորների մեծ մասը քնած է եղել: Մինչ փրկարարների ժամանումը տուժածներին առաջին օգնություն են ցուցաբերել եւ ավտոբուսից դուրս բերել հենց ուղեւորները: Ռուսաստանում Հայաստանի ղեսպանության տվյալներով զոհերից երկուսը Հայաստանի, երեքը՝ Ռուսաստանի քաղաքացիներ են: Չոհված ռուսաստանցիների թվում են **երիտասարդ մարզիկ ու նրա մարզիչը**, որոնք Հայաստան էին գալիս՝ կարատեի մրցումների մասնակցելու:

Ռուսաստանի նախագահը հանձնարարել է տեղափոխության ենթակա ուղեւորներին Երեւան հասցնել Ռուսաստանի ԱԻ նախարարության օդանավով: Երեւանում գտնվող Ռուսաստանի տրանսպորտի նախարարն այսօր Մերժ Սարգսյանի հետ հանդիպմանը տեղեկացրել է իրականացվող աշխատանքների մասին:

Երեկոյան «**Չվարթինգ**» օդանավակայանում **վայրէջք է կատարել** ռուսական օդանավը: Նույն ինքնաթիռով Հայաստան է տեղափոխել նաեւ պատահարի հետեւանքով զոհված ավտոբուսի վարորդ Յուրա Պոդոպյանի դին:

Հյուսիսային Օսիայի ներքին գործերի նախարարության նախնական տվյալներով՝ ուղեւորատար ավտոբուսի վարորդը կորցրել է կառավարումը, ինչի հետեւանքով էլ բախվել է մայրեզրին կանգնած բեռնատարին: Այլ աղբյուրի

համաձայն՝ **վարորդը քնել է դեկին**: Հարուցվել է քրեական գործ՝ ճանապարհային երթեւեղության կանոնները խախտելու փաստով: Քննչական խումբ է ստեղծվել:

Ռուսական աղբյուրների հաղորդմամբ՝ վթարի ենթարկված փոխադրամիջոցն **առանց Ռուսաստանի տրանսպորտի նախարարության թույլտվության է աշխատել**: Բացի այդ, վարորդները տարբեր ժամանակներում վարչական պատասխանատվության են ենթարկվել՝ ամրագոտի չկապելու եւ արագությունը գերազանցելու համար: Ավտոբուսը մեծ արագությամբ բախվել է բեռնատարին: Բախումն այնքան ուժեղ է եղել, որ դրա կցորդում եղած թեթեւ մարդատար ավտոմեքենաները դուրս են թռել:

ՀԱՊԿ կանոնադրական մարմիններում նախագահությունն այսօր **Հայաստանից փոխանցվել է Բելառուսին**: Հանդիսավոր արարողությունը կայացել է Երեւանում՝ ՀԱՊԿ անդամ պետությունների արտաքին գործերի, պաշտպանության նախարարների եւ ազգային անվտանգության խորհուրդների քարտուղարների համատեղ նիստում:

Երեւանում կայացել է ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի նիստը, որին մասնակցելու նպատակով այսօր Հայաստան են ժամանել նաեւ Ռուսաստանի եւ Բելառուսի նախագահները:

Օդանավակայանում **Վլադիմիր Պուտինին** դիմավորել է Մերժ Սարգսյանը, իսկ **Ալեքսանդր Լուկաշենկոյին**՝ Գագիկ Ծառուկյանն ու Մուրեն Կարայանը: Ավելի ուշ արդեն պետությունների ղեկավարները նախագահականում էին: **Մերժ Սարգսյանը դիմավորել է գործընկերներին**, իսկ հետո միասին լուսանկարվել են:

ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի **նիստի մեկնարկին** Մերժ Սարգսյանը բոլորի անունից առողջություն է մաղթել Նուրսուլլան Նազարբաեյին: Նիստում Ղազախստանը ներկայացրել է վարչապետը:

Նստաշրջանի օրակարգի առանցքում են եղել ՀԱՊԿ անցյալ տարվա զագաթաժողովների որոշումների իրականացման ընթացքը, ինչպես նաեւ Կազմակերպությունում նախագահության ընթացքում Հայաստանի կողմից առաջադրված առաջնահերթությունները: Ակնկալվում էր, որ նիստում կազմակերպության նոր գլխավոր քարտուղար է ընտրվելու: Սակայն **հարցը հանվել է օրակարգից** եւ կքննարկվի տարեվերջին, Սանկտ Պետերբուրգում:

Ֆրանսիայի Սենատն ընդունեց Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծը: «Հավասարություն եւ քաղաքացիություն» կոչվող օրինագծի փոփոխություններին կողմ է արտահայտվել 156 պատգամավոր, դեմ՝ 146-ը:

Այսպիսով, Ֆրանսիայում պատիժ է սահմանվում մարդկության դեմ գործած բոլոր հանցագործությունները, այդ թվում՝ Հայոց ցեղասպանությունը ժխտելու եւ հերքելու համար: Ֆրանսիական խորհրդարանի ստորին պալատը՝ Ազգային ժողովը, այս օրինագիծն ընդունել էր ամռանը:

Ճանապարհային պատահար, այնուհետեւ վիճարանություն Գյումրիում, որն ավարտվել է փոխհրահանգությամբ: Իրար բախված «ԲՄՎ» եւ «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենաների վարորդները սկսել են վիճել, որը խմբակային խուլիգանության է վերածվել: Որոշ մասնակիցների մոտ զենք է եղել: Չնայած ականատեսները մեր թղթակցին պատմել են, որ կրակոցի ձայներ են լսել,

սակայն քննչական կոմիտեն դեռևս չի հաստատում այս փաստը:

Միջադեպի մասնակիցներից մեկը փախուստի դիմելիս հարեւանությամբ գտնվող մանկապարտեզի բակ է նետել SS տեսակի ատրճանակը: Դեպքի վայրում նաև արյան հետքեր են հայտնաբերվել, սակայն ոչ ոք հիվանդանոց չի դիմել: **Քրեական գործ է հարուցվել:**


Վարուժան Սուքիասյանն այլևս Փուտրոյի Հայաստանի ազգային **հավաքականի գլխավոր մարզիչը չէ:** 2018 թվականի Աշխարհի առաջնության ընտրական փուլի երկրորդ տուրում ռուսիացիներից կրած 0:5 հաշվով տնային պարտությունից հետո Սուքիասյանը հայտարարել էր, որ Ֆեդերացիայի պահանջի դեպքում հրաժարական կտա: Այդ խաղից 3 օր անց էլ Հայաստանի հավաքականը Վարչավայում 1:2 հաշվով պարտվեց Լեհաստանին թիմին: Սուքիասյանը Հայաստանի հավաքականը գլխավորում էր 2015 թվականի դեկտեմբերի 10-ից: Նրա գլխավորությամբ Հայաստանի հավաքականը 7 հանդիպում է անցկացրել՝ կրելով 4 պարտություն, տանելով 2 հաղթանակ եւ մեկ հանդիպում ավարտելով ոչ ոքի: Աշխարհի առաջնության ընտրական փուլում մեր հավաքականը պարտվել է բոլոր երեք խաղերում:

Հոկտեմբերի 14-ին **դոլարի վերելքը կանգ է առել**, այն նույնիսկ փոքր-ինչ էժամացել է: Արդյունքում դոլարի փոխարժեքը կազմել է 476 դրամ, եվրոյինը՝ 525, ռուբլունը՝ 7 դրամ 57 լումա, ֆունտինը՝ 581 դրամ:

Հոկտեմբերի 15-ի գիշերը շրջանների զգալի մասում, ցերեկը՝ Վայոց ձորում, Սյունիքում եւ Արցախում, **սպասվում է անձրև:** Օդի ջերմաստիճանն աստիճանաբար կնվազի 7-9 աստիճանով: Երեւանում հոկտեմբերի 15-ին սպասվում է կարճատև անձրև, հնարավոր է ամպրոպ:

Մարդիկ չեն էլ պատկերացնում, թե ինչ մասշտաբներով է փոխվելու մեր իրականությունը. ՀՀ նախագահ

Մարդիկ դեռ չեն էլ պատկերացնում, թե ինչ մասշտաբներով է փոխվելու մեր իրականությունը սահմանադրական բարեփոխումների եւ նոր կառավարման մոդելի անցման հանգամանքը: Այս մասին, այսօր՝ հոկտեմբերի 6-ին, կառավարության նիստում հայտարարել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը:



«Սահմանադրական բարեփոխումներով մենք դե ֆակտո մեր երկրում սկսել ենք համակարգային փոփոխությունները:

Այս տեսանկյունից ներկա կառավարությունը լրջագույն դերակատարություն է ստանձնում. այն է՝ դառնալ այս փոփոխությունների լոկոմոտիվը, դառնալ այս փոփոխությունների շարժիչ ուժն ու իրականացնողը», -ասել է ՀՀ նախագահն ու հավելել. «Կառավարման կիսանախագահական համակարգից անցումը խորհրդարանական կառավարման, փոխում է ոչ միայն երկրի կառավարման մոդելը, այլև առաջին հերթին հավաքական մտածողության եւ հավաքական վերաբերմունքի փոփոխության հարց է լուծում: Միզուցե, մարդիկ ամբողջովին չեն էլ պատկերացնում, թե ինչ մասշտաբներով է փոխվելու մեր իրականությունը սահմանադրական բարեփոխումների եւ նոր կառավարման մոդելին անցման հանգամանքը»:

Սուրիկ Խաչատրյանն աշխատանքից ազատվեց



Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանն ազատվեց աշխատանքից: Նման որոշում կայացվեց այսօր՝ հոկտեմբերի 6-ին, Կառավարության նիստում:

Ըստ որոշման՝ Սուրիկ Խաչատրյանն ազատվում է սեփական դիմումի համաձայն:

Որոշման նախագիծը կառավարությունում ներկայացրել ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարար Դավիթ Լոքյանը: Որոշումն ուժի մեջ մտնելու համար այն պետք է հաստատի ՀՀ նախագահը:

Նշենք, որ ըստ մամուլի տեղեկությունների, ՀՀ-ականները նշում են, որ Սուրիկ Խաչատրյանը նման որոշում է կայացրել առողջական խնդիրների պատճառով: Նշվում է, որ Սուրիկ Խաչատրյանին մարզպետի պաշտոնում փոխարինելու է Վահե Հակոբյանը:

Հիշեցնենք, որ Սուրիկ Խաչատրյանը 2013 թվականին մեկ անգամ արդեն ազատվել է Սյունիքի մարզպետի պաշտոնից՝ իր առանձնատան մոտ տեղի ունեցած արյունալի իրադարձություններից հետո:

Հայկական ընկերությունը շափյուղայից հրթիռների թասակ-ծածկոցներ է արտահանում Գերմանիա եւ Իսրայել

«Լազերային տեխնիկա» հայկական ընկերությունը շափյուղայից թասակ-ծածկոցներ է արտադրում ինքնանշանառող հրթիռների համար եւ դրանք արտահանում Գերմանիա ու Իսրայել:

«Լազերային տեխնիկա» ՓԲԸ բյուրեղների անհի դեպարտամենտի ղեկավար Սամվել Գյուլբուրդյանը հայտնեց, որ թասակ-ծածկոցներն ամբողջությամբ արտադրվում են Հայաստանում:

Թասակը հրթիռի գլխիկը պաշտպանում է արտաքին ազդեցությունից եւ բարելավում դրա անբողիքանմիկան: Ընկերությունն ինքն է արհեստական շափյուղա անեցնում եւ տալիս անհրաժեշտ ձեւը:



«Իհարկե, եւ Գերմանիայում, եւ Իսրայելում կա նման տեխնիկայի սեփական արտադրություն: Բայց մենք գնի եւ որակի լավ հարաբերություն ունենք», - ասել է ինժեները: Բացի այդ, ընկերությունը Բաղդասարովի մեթոդով բյուրեղներ անեցնելու խորհրդային տեխնոլոգիաներ է կիրառում (հորիզոնական ուղղված մեթոդով): Արտասահմանում այն զարգացում չի գտել անեցման գործընթացի կառավարման բարդության պատճառով: «Այստեղ շատ բան կախված է սարքերի հետ աշխատելու մասնագետի կարողությունից: Իսկ Արեւմուտքում նախընտրում են անցնել ամբողջովին ավտոմատացված համակարգի: Այդպես աշխատելը հեշտ է, բայց բյուրեղների որակը հարաբերականորեն ցածր է, իսկ չափերը՝ փոքր», - պարզաբանել է նա: «Լազերային տեխնիկա» ՓԲԸ-ն 100 տոկոսով ՀՀ ՊՆ ձեռնարկությունն է:

Թուրքիան իր բացահայտ միակողմանի դիրքորոշմամբ տեղ չունի բանակցային գործընթացում. ԱԳՆ



Թուրքիան բացի Հայաստանի հետ սահմանը եւ վերջ դնի Ադրբեջանի սադրիչ եւ սպակառուցողական քայլերի խրախուսումը: Այդ մասին ասել է Հայաստանի ԱԳ փոխնախարար Շավարշ Քոչարյանը՝ մեկնաբանելով Թուրքիայի ԱԳՆ արձագանքը ՌԴ արտագործնախարար Սերգեյ Լովրովի՝ հոկտեմբերի 14-ին Երեւանում արված հայտարարությանը: «Հոկտեմբերի 14-ին Երեւանում ընդունված ՀԱԳԿ անդամ-երկրների նախագահների՝ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ հայտարարությունն աջակցություն է հայտնել Վիեննայի եւ Սանկտ Պետերբուրգի համաձայնություններին՝ ուղղված

հակամարտության գոտում իրադրության սրում թույլ չտալուն, իրավիճակի կայունացմանը եւ խաղաղ գործընթացի առաջ մղման համար պայմանների ստեղծմանը: Բացառապես խաղաղ կարգավորումը պետք է հիմնված լինի միջազգային իրավունքի երեք հանրահայտ սկզբունքների՝ ուժի կամ դրա սպառնալիքի չկիրառման, պետությունների տարածքային ամբողջականության եւ ժողովուրդների իրավահավասարության եւ ինքնորոշման իրավունքի վրա», - նշել է Քոչարյանը:

Նրա խոսքով, ՌԴ դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցում արտահայտված է այդ հայտարարությամբ, այլ ոչ թե ադրբեջանական լրատվամիջոցներով հրամցվող Թուրքիայի արտագործնախարարության կողմից Սերգեյի Լովրովի խոսքերի այլասերմամբ. որակավորում, որին նախկինում ԼՂ բանակցային գործընթացը խեղաթյուրելու համար արժանացել էր ադրբեջանական կողմը: «Թուրքիան իր բացահայտ միակողմանի դիրքորոշմամբ տեղ չունի եւ պետք է հեռու պահվի Լեռնային Ղարաբաղի բանակցային գործընթացից: Միակ դրական ազդեցությունը, որ Անկարան կարող է ունենալ ԼՂ կարգավորման հարցում, այն է, որ Թուրքիան բացի Հայաստանի հետ սահմանը եւ վերջ դնի Ադրբեջանի սադրիչ եւ սպակառուցողական քայլերի խրախուսումը», - նկատել է ԱԳ փոխնախարարը:

«Հայոց պետականությունը՝ միասնության առանցք». մեկնարկել է Լրագրողների 8-րդ համահայկական համաժողովը



Երեւանում այսօր՝ հոկտեմբերի 20-ին մեկնարկեց «Հայոց պետականությունը՝ միասնության առանցք» խորագրով Լրագրողների 8-րդ համահայկական համաժողովը, որը հոկտեմբերի 20-22-ը կանցկացվի Երեւանում, իսկ 23-24-ը՝ Ստեփանակերտում: Համաժողովը կազմակերպել է ՀՀ սփյուռքի նախարարությունը Լրագրողների համահայկական համաժողովները համակարգող խորհրդի եւ Լրատվամիջոցների համահայկական ընկերակցության, Հայաստանի ժուռնալիստների միության հետ համատեղ: Լրագրողների 8-րդ համահայկական համաժողովը նվիրված է Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի հանրապետությունների անկախության 25-ամյակին: Համաժողովին բացման արարողությանը ներկա էին ՀՀ մշակույթի նախարար Արմեն Ամիրջանը, Հայաստանի հանրային ռադիոյի տնօրեն Արման Մաղաթեյանը, ՀՀ

Նախագահի մամուլի քարտուղար Վլադիմիր Հակոբյանը, նախագահի աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ Ալեքսան Հարությունյանը եւ այլ պաշտոնատար անձինք:

Ընթերցվեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի ուղերձը, որը ներկայացրեց նախագահի աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ Ալեքսան Հարությունյանը, որում մասնավորապես ասված էր. «Ջերմորեն ողջունում եմ Լրագրողների համահայկական 8-րդ համաժողովի մասնակիցներին, կազմակերպիչներին եւ հյուրերին: Ուրախ եմ, որ լրագրողները հերթական համաժողովը հրավիրել են հայրենիքում:

Խորհրդանշական է, որ ներկա համաժողովը նվիրված է հայկական երկու հանրապետությունների անկախության 25 ամյակներին եւ տեղի է ունենում մի ժամանակահատվածում, երբ Հայաստանում իրականացվում են հիմնարար եւ համակարգային բարեփոխումներ: Այս համատեքստում յուրովի է իմաստավորվում նաեւ համաժողովի խորագիրը՝ «Հայոց պետականությունը՝ միասնության առանցք»: Մեկնարկելով Երևանում համաժողովն աշխատանքները շարունակելու է մեր արդար պայքարի ու նորագույն հաղթանակների միջնաբերդում՝ Արցախ աշխարհում:

Հայ մամուլը սկսվեց «Ազդարարով», որ հայրենի հողի վրա չէր տպագրվում: Այս իրողությունն ինքնին արտացոլում էր մի պատմական իրավիճակի, որ չէր կարող նախանձելի համարվել: Այնուհետեւ մեր լրատվության պատմությունը հարստացավ բազմաազգար լրատվամիջոցներով եւ դարձավ հայ մշակույթի, այդ թվում՝ քաղաքական մշակույթի հայելին: Հայկական լրատվամիջոցները թե՛ Հայրենիքում, եւ՛ աշխարհի բոլոր ծագերում եկեղեցու եւ դպրոցի հետ միասին եղել եւ մնում են հայ ոգու ու ինքնության պահպանման հիմնասյուները»:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի օրհնության խոսքը փոխանցեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արտաքին հարաբերությունների բաժնի տնօրեն Տեր Նայթան արք. Հովհաննիսյանը:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը: Նա շնորհակալություն հայտնեց աշխարհի 31 երկրից համաժողովին մասնակցելու ժամանած 140 լրագրողներին:

«Անցնող ապրիլյան պատերազմին մենք համահայկական լրատվադաշտի համերաշխ եւ միասնական աշխատանքի ականատեսը դարձանք: Այս համաժողովի նպատակը համահայկական տեղեկատվական դաշտի ընդլայնումն ու կատարելագործումը պետք է լինի, լրատվական ներուժի համախմբումը եւ արդյունավետ կիրառումը Հայաստանի զարգացման, ՀՀ միջազգային վարկանիշի բարձրացման, Միդլեռնում հայապահպանության, համահայկական հիմնախնդիրների լուծման գործընթացում», - ընդգծեց ՀՀ սփյուռքի նախարարը:

Առաջին նիստի թեման էր «Համահայկական տեղեկատվական միասնական ցանցի ձեւավորման կառուցակարգերը եւ լրատվամիջոցների համագործակցության ուղիները ճգնաժամային պայմաններում»:

Նիստը վարեցին Հայաստանի ժուռնալիստների միության նախագահ Աստղիկ Գեւորգյանը, «Հորիզոն» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Վահագն Գարագաշյանը (Կանադա), «Զարթոնք» օրաթերթի գլխավոր խմբագիր Սեւակ

Հակոբյանը (Լիբանան), «Հայրենիք» շաբաթաթերթի խմբագիր Արարատ Ղուկասյանը (Բսպանիա):

Լիբանանի «Ազդակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Ծահան Գանտահարյանը հանդես եկավ «Ճգնաժամային տեղեկատվությունը եւ հայկական լրատվադաշտը» թեմայով:

279.20.10.2016թ.

Մեկնարկեց Լրագրողների 8-րդ համահայկական համաժողովը

Հոկտեմբերի 20-ին մեկնարկեց «Հայոց պետականությունը՝ միասնության առանցք» խորագրով Լրագրողների 8-րդ համահայկական համաժողովը, որը **հոկտեմբերի 20-22-ը** կանցկացվի **Երևանում**, իսկ **23-24-ը՝ Ստեփանակերտում**:

Համաժողովը կազմակերպել է ՀՀ **սփյուռքի նախարարությունը** Լրագրողների համահայկական համաժողովները համակարգող խորհրդի և Լրատվամիջոցների համահայկական ընկերակցության, Հայաստանի ժուռնալիստների միության հետ համատեղ: Լրագրողների 8-րդ համահայկական համաժողովը նվիրված է Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հանրապետությունների անկախության 25-ամյակին:

Համաժողովին բացման արարողությանը ներկա էին ՀՀ մշակույթի նախարար Արմեն Ամիրջյանը, Հայաստանի հանրային ռադիոյի տնօրեն Արման Մաղաթեյանը, ՀՀ Նախագահի մամուլի քարտուղար Վլադիմիր Հակոբյանը, Նախագահի աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ Ալեքսան Հարությունյանը և այլ պաշտոնատար անձինք:

Ընթերցվեց ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի ուղերձը, որը ներկայացրեց Նախագահի աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ Ալեքսան Հարությունյանը, որում մասնավորապես ասված էր. «Ջերմորեն ողջունում եմ Լրագրողների համահայկական 8-րդ համաժողովի մասնակիցներին, կազմակերպիչներին և հյուրերին: Ուրախ եմ, որ լրագրողները հերթական համաժողովը հրավիրել են հայրենիքում:

Խորհրդանշական է, որ ներկա համաժողովը նվիրված է հայկական երկու հանրապետությունների անկախության 25 ամյակներին և տեղի է ունենում մի ժամանակահատվածում, երբ Հայաստանում իրականացվում են հիմնարար և համակարգային բարեփոխումներ: Այս համատեքստում յուրովի է իմաստավորվում նաև համաժողովի խորագիրը՝ «Հայոց պետականությունը՝ միասնության առանցք»: Մեկնարկելով Երևանում համաժողովն աշխատանքները շարունակելու է մեր արդար պայքարի ու նորագույն հաղթանակների միջնաբերդում՝ Արցախ աշխարհում:

Հայ մամուլը սկսվեց «Ազդարարով», որ հայրենի հողի վրա չէր տպագրվում: Այս իրողությունն ինքնին արտացոլում էր մի պատմական իրավիճակի, որ չէր կարող նախանձելի համարվել: Այնուհետեւ մեր լրատվության պատմությունը հարստացավ բազմաազգար լրատվամիջոցներով և դարձավ հայ մշակույթի, այդ թվում՝ քաղաքական մշակույթի հայելին: Հայկական լրատվամիջոցները թե՛ Հայրենիքում, եւ՛ աշխարհի բոլոր ծագերում եկեղեցու և դպրոցի հետ միասին եղել եւ մնում են հայ ոգու ու ինքնության պահպանման հիմնասյուները»:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի օրհնության խոսքը փոխանցեց Մայր Աթոռ Սուրբ

Էջմիածնի արտաքին հարաբերությունների բաժնի տնօրեն Տեր Նայթան արք. Հովհաննիսյանը:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը: Նա շնորհակալություն հայտնեց աշխարհի 31 երկրից համաժողովին մասնակցելու ժամանած 140 լրագրողներին: Նախարարը կարևորեց համաժողովի համար ընտրված թեման՝ «Հայոց պետականությունը՝ միասնության առանցք», որի շրջանակներում կինչն գեկույցներ ու կծավալվեն քննարկումներ: «Անցնող սայրիլյան պատերազմին մենք համահայկական լրատվադաշտի համերաշխ և միասնական աշխատանքի ականատեսը դարձանք: Այս համաժողովի նպատակը համահայկական տեղեկատվական դաշտի ընդլայնումն ու կատարելագործումը պետք է լինի, լրատվական ներուժի համախմբումը և արդյունավետ կիրառումը Հայաստանի զարգացման, ՀՀ միջազգային վարկանիշի բարձրացման, Սփյուռքում հայապահպանության, համահայկական հիմնախնդիրների լուծման գործընթացում»,- ընդգծեց ՀՀ սփյուռքի նախարարը:

Առաջին նիստի թեման էր «Համահայկական տեղեկատվական միասնական ցանցի ձևավորման կառուցակարգերը և լրատվամիջոցների համագործակցության ուղիները ճգնաժամային պայմաններում»:

Նիստը վարեցին Հայաստանի ժուռնալիստների միության նախագահ Աստղիկ Գևորգյանը, «Հորիզոն» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Վահագն Գարազաշյանը (Կանադա), «Զարթոնք» օրաթերթի գլխավոր խմբագիր Սևակ Հակոբյանը (Լիբանան), «Հայրենիք» շաբաթաթերթի խմբագիր Արարատ Ղուկասյանը (Իսպանիա):

Լիբանանի «Ազդակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Շահան Գանտահարյանը հանդես եկավ «Ճգնաժամային տեղեկատվությունը և հայկական լրատվադաշտը» թեմայով: «Նոյյան տապան» մեդիա հոլդինգի տնօրեն Տիգրան Հարությունյանն անդրադարձավ համահայկական տեղեկատվական ցանցի ձևավորման փուլերին և արդի պայմաններում զարգացման առանձնահատկություններին: Չեխիայի «Օրեր» ամսագրի թղթակից Աննա Կարապետյանն ներկայացրեց տեղեկատվական անվտանգության մարտահրավերներն ու հրատապ խնդիրները:

Լիբանանի Հայ երիտասարդաց ընկերակցության մամուլ և տեղեկատվության պատասխանատու Ահարոն Շիրումյանն անդրադարձավ հայ մամուլի համագային հայեցակարգի մշակման անհրաժեշտությանը:

Առաջին նիստի վերջին գեկույցը «Արմենպրես» լրատվական գործակալության տնօրեն Արամ Անանյանին էր: Նա ներկայացրեց «Լրատվության ապագան: Ժամանակակից լրատվական միտումները՝ համահայկական տեղեկատվական միասնական ցանցի ձևավորման համատեքստում» թեման:

Համաժողովը ուղիղ հեռարձակվում է համացանցով, ինտերակտիվ է. աշխարհի տարբեր երկրներից հայ լրագրողները մասնակցում են համաժողովի աշխատանքներին համացանցի միջոցով:

Մինչ համաժողովի բացումը տեղի ունեցավ «Սրբուհի Տյուսաբ» նամականիշի մարման հանդիսավոր արարողությունը:

Մարումն իրականացրին ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական

տեխնոլոգիաների նախարարի տեղակալ Գագիկ Թադևոսյանը և «Հայփոստ Թրասթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի կառավարող տնօրեն Խուան Պարլո Գեյջոյանը: Մարման պաշտոնական արարողությունը տեղի ունեցավ ՀՀ սփյուռքի նախարարության «Մեր մեծերը» ծրագրի շրջանակներում:

2016 թվականի հոկտեմբերի 20-ին «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերությունը շրջանառության մեջ դրեց 1 նամականիշ՝ նվիրված արևմտահայ գրող, հրապարակախոս, հայ առաջին վիպասանուհի Սրբուհի Տյուսաբի 175-ամյակին:

21.10.2016թ.

Լրագրողների 8-րդ համաժողովն ամփոփեց իր երկօրյա աշխատանքները Երևանում

Հոկտեմբերի 21-ին Լրագրողների համահայկական 8-րդ համաժողովի աշխատանքները շարունակվեցին «Տեղեկատվական անվտանգության խնդիրներն արտակարգ իրավիճակներում» ինտերակտիվ քննարկումով, որին մասնակցում էին ոլորտի առաջատար փորձագետները:

Քննարկման մոդերատորն էր մեդիա փորձագետ Սամվել Մարտիրոսյանը:

Հանրային ռադիոյի տնօրեն Արման Սաղաթեյանը, կարևորելով ժամանակակից աշխարհում ռադիոյի դերը՝ որպես հուսալի տեղեկատվության աղբյուր, նշեց. «Ռադիոն եղել է, կա և մնում է տեղեկատվության տարածման ամենահուսալի, ամենակայուն համակարգերից մեկը: Ինչ վերաբերում է արտակարգ իրավիճակներում տեղեկատվական անվտանգության խնդիրներին՝ նշեմ, որ այսօր մենք ունենք բավարար փորձառու և պատրաստված կադրեր, տեխնիկական միջոցներ, և եթե խոսենք սայրիլյան պատերազմի ընթացքում մեր տեղեկատվական ակտիվությունից և գործունեությունից, ապա նշեմ, որ մենք կարողացանք աշխարհի տեղեկատվական ընհանուր հոսքերի մեջ առաջ տանել, ապացուցել մեր տեսակետներն ու դիրքորոշումը, միջազգային հանրությանը ներկայացնել իրական պատկերը, և դա վկայել է միջազգային մամուլը»:

«Ռազմինֆո» կայքի համակարգող Կարեն Վրթանեյանը խոսեց այն մասին, թե ռազմաքաղաքական արտակարգ իրավիճակների ժամանակ ինչպիսի խնդիրներ կարող են ի հայտ գալ ինչպես Հայաստանի, այնպես էլ Հայկական սփյուռքի լրագրողական դաշտում: Նա անդրադարձավ նաև սոցիալական ցանցերում ճշգրիտ և օպերատիվ տեղեկատվություն տարածելու հարցերին:

Մեդիա փորձագետ Միքայել Յալանուզյանը անդրադարձ կատարեց պատերազմական իրավիճակում լրագրողների գործունեության ազատություններին և սահմանափակումներին և առաջարկեց կարգավորել ոլորտը:

Ադրբեջանական մամուլի փորձագետ Անժելա Էլիբեկովան անդրադարձավ ադրբեջանական մամուլի ստահող քարոզչությանն ու կեղծարարությանը հակադարձելու մեխանիզմներին և ուղիներին:

Քննարկումներից հետո տեղի ունեցավ ակտիվ շահեկան քննարկումներ, մտքերի փոխանակություն:

Այնուհետև մեկնարկեց «Հեռուստատեսության, ռադիոյի և էլեկտրոնային մամուլի համագործակցության հեռանկարները» թեմայով չորրորդ նիստը, որը վարեցին Լիբանանի «Խոսնակ» ամսագրի գլխավոր խմբագիր Համբիկ Մարտիրոսյանը, ՌԳ «Երկրամաս» թերթի գլխավոր խմբագիր Տիգրան Թավադյանը, Չեխիայի «Օրեր» ամսագրի թղթակից Աննա Կարապետյանը, Հունաստանի

«Արձագանք» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Արտո Դավթյանը:

Հունաստանի «Նոր Աշխարհ» թերթի խմբագիր Չավեն Գրիգորյանը ելույթ ունեցավ «Հայաստանի և Արցախի անկախության 25-րդ տարեդարձի առթիվ. Հայրենի հողը, Հայրենիքը և Պետականությունը» թեմայով:

Հանրային հեռուստաընկերության 2013-2016թթ. գործունեությունը և իրականացվող բարեփոխումները համապարփակ ներկայացրեց Հանրային հեռուստաընկերության արտաքին կապերի պատասխանատու Էրիկ Անթառանյանը:

Նա անդրադարձավ Հանրային հեռուստաընկերության հորելյանական 60-րդ եթերաշրջանի ընթացքում հեռուստադիտողներին ներկայացված 15 նոր հաղորդումներին, տեխնիկական ձեռքբերումներին, Հանրային հեռուստաընկերության համար տարիներ շարունակ գերխնդիր համարվող արխիվի պահպանման և թվայնացման հարցին, ինչպես նաև «Մասս մեդիա» գիտակրթական կենտրոնի գործունեությանը:

Լիբանանի Ազգակ» օրաթերթի թղթակից Սիլվա Կարավարտանյանը անդրադարձավ Լրատվական համահայկական գործելաճի հիմնահարցերին:

Ուկրաինայի «Հայկական տեղեկատու» հանդեսի գլխավոր խմբագիր Արտեմ Կարայանը հանգամանորեն ներկայացրեց սփյուռքյան կառույցների հետ համագործակցության իրենց փորձը:

«Արևելք» կայքի լրատվական փորձը Հայեպահայերի դիմագրաված տագնապների մասին» գեկույցով հանդես եկավ Արևելք լրատվական կայքի գլխավոր խմբագիր Սագո Արեանը: Նա ներկայացրեց սիրահայերի հիմնախնդիրների ճշմարիտ արձարձման կարևորությունը լրատվամիջոցներում:

Արգենտինայի «Նոր դարաշրջան» թերթի գլխավոր խմբագիր Էդուարդո Նեստրո Բայանը խոսեց Հարավին Ամերիկայում Հայաստանն առավել ճանաչելի դարձնելու, հայ մշակույթն ու քաղաքակրթությունը պատշաճ ներկայացնելու հարցը:

Ելույթ ունեցավ Սփյուռքի նախարարության «Հայերն այսօր» էլեկտրոնային պարբերականի լրագրող Կարինե Ավագյանը: Նա ասանդրադարձավ Լրատվամիջոցներում տարածված լեզվական սխալներին և կոչ արեց առավել հետևողական լինել հայոց լեզվի հարստությունն ու ճկունությունը ըստ արժանվույն կրառելու հարցում:

Ամփոփելով համաժողովի՝ Հայաստանում տեղի ունեցած հատվածը, նիստավար Համբիկ Մարտիրոսյանը շնորհակալություն հայտնեց Սփյուռքի նախարարությանը և, մասնավորապես նախարար Հրանուշ Հակոբյանին Սփյուռքի լրատվամիջոցների հանդեպ ցուցաբերած ուշադրության, սերտ համագործակցության և նմանօրինակ համաժողովները կյանքի կոչելու համար, որոնցից յուրաքանչյուրը համահայկական տեղեկատվական դաշտի կատարելագործման, հայ լրագրողական հանրության համախմբման նոր հանգրվան է:

Լրագրողների համահայկական 8-րդ համաժողովի երևանյան երկօրյա նիստն ավարտվեց հետաքրքիր քննարկումներով, որից հետո ՀՀ սփյուռքի նախարարի տեղակալ Սերժ Սրապիոնյանը համաժողովի մասնակիցներին բարի երթ մաղթեց դեպի պատմական

Արցախ, որտեղ հոկտեմբերի 22-23-ը կշարունակվեն և կամփոփվեն համաժողովի աշխատանքները:

20.10.2016թ.

Քննարկվեցին Սփյուռքի և Հայաստանի լրագրության խնդիրներն ու մարտահրավերները

Լրագրողների համահայկական 8-րդ համաժողովի շրջանակներում սփյուռքյան լրատվամիջոցների ղեկավարները հանդիպեցին ՀՀ արտաքին գործերի նախարար Էդուարդ Նալբանդյանի հետ:

Համաժողովը շարունակեց աշխատանքը «ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների և սփյուռքյան կառույցների համագործակցության ուղիները» թեմատիկ նիստով, որը վարեցին ՀՀ սփյուռքի նախարարի տեղակալ Սերժ Սրապիոնյանը, լրագրող, հրապարակախոս Պայծիկ Գալաշյանը, «Վանա Ձայն» ռադիոյի տնօրեն Ավետիս Կիտանյանը:

«Հայաստանի և Իսրայելի դիվանագիտական անկայուն հարաբերություններն ու Իսրայելի հայկական կազմակերպությունների աջակցությունը հարաբերությունների զարգացման գործում» թեմայով գեկույց ներկայացրեց «Իսրայելահայեր» թերթի գլխավոր խմբագիր Արտյոմ Չերնամոյսանը: Նա անդրադարձավ հայ-իսրայելական դիվանագիտական հարաբերությունների պատմությանը, նշեց վերջին շրջանում դրանց ակտիվացման միտումներն ու դրական ազդեցությունը հայ համայնքի հեղինակության և վարկանիշի ամրապնդման վրա:

«ՀՀ դիվանագիտությունը, սփյուռքյան կառույցները, համագործակցության ուղիները և համշենահայերը» թեմայով գեկույցեց «Հայկական տեղեկատվական կենտրոն» կայքի թղթակից, համշենահայ կանանց միջազգային միության նախագահ Սաիդա Օհանյանը: Նա կարևորեց համշենահայերի խնդիրների լուծման հրատապությունը, անդրադարձավ համայնքային կառույցների և պետական մարմինների փոխհարաբերություններին:

«Անկախ և հետախուզական մամուլ»-ի էությանը և զարգացման ուղիներին անդրադարձավ լիբանանահայ լրագրող, հրապարակախոս Հակոբ Բայանը: Նա կարևորեց հայոց լեզվի մաքրության, տեղեկատվության ճշգրտության, թեմաների շրջանակի ընդլայնման անհրաժեշտությունը: «Մեր մամուլը հանրակրթարան է և՛ քաղաքական, և՛ մշակութային առումներով», - հավելեց նա:

«ՀՀ իմիջի ձևավորման բաղադրիչներն օտարալեզու ՉԼՄ-ներում» թեմայով գեկույցում ներկայացրեց «Հայկական Փի Ար ասոցիացիա» գիտատեղեկատվական ՀԿ նախագահ Աստղիկ Ավետիսյանը: Նա նշեց. «Այս համաժողովները կարևոր են ոչ միայն ինֆորմացիա փոխանակելու առումով, այլև հնարավորություն են տալիս շփվել միմյանց հետ ու հասկանալ, թե ինչպես ուղղորդել լրատվական դաշտը, ինչպես ներկայանալ աշխարհին»: Չեկուցողը կարևորեց դրական իմիջ ձևավորելու անհրաժեշտությունը:

Ելույթ ունեցավ նաև Լիբանանի «Արարատ» օրաթերթի ներկայացուցիչ Անի Թորանյանը: Նա կարևորեց համաժողովները՝ որպես ժողովրդի առջև ծառայած խնդիրների լուծման նպաստավոր հանգրվաններ, շեշտելով, որ հայկական լրատվական դաշտը մեկ գերակա դերակատարություն ունի՝ ծառայել հայրենիքին: Ավարտելով իր խոսքը՝ նա նշեց. «Մեր մաղթանքն է, որ այս համաժողովը

այդ ուղղությամբ վճռական քայլ կատարի: Յուրաքանչյուրը պետք է ընդունի, որ ինքն է հայրենիքի և՛ տերը, և՛ ծառան»: Տեղի ունեցան քննարկումներ մամուլի լեզվի, առաջնահերթությունների, նաև՝ ազգային խնդիրների վերհանման հարցերի շուրջ: Հնչեցին առաջարկներ: Երեկոյան սվյուռքյան լրատվամիջոցների ղեկավարները կհանդիպեն ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի հետ:

Վարդան Օսկանյան. Հանգուցյալ Քրոք Քրքրոյանի իր կտակում մեծ գումար է թողել Հայաստանին



«Համախմբում» կուսակցության նախագահ Վարդան Օսկանյանը Facebook-ի իր էջում գրել է, թե ամերիկահայ միլիարդատեր, հանգուցյալ Քրոք Քրքրոյանի իր կտակում մեծ գումար է թողել Հայաստանին:

«Այսօր կարդացի Քրոք Քրքրոյանի կտակը: Հասկացա հետևյալը՝ ժառանգություն է թողնվել 2 միլիարդ դոլարի կարգի գումար, որը բացառապես պետք է տրամադրվի մեկ կամ ավելի բարեգործական կազմակերպությունների, որոնք ունեն ԱՄՆ-ի հարկային ծառայության այսպես կոչված 501(C)3 արտոնությունը: Կտակը պետք է տնօրինվի անվանական նշված երեք անհատների կողմից, որոնցից հայազգի է միայն մեկը: Նրանք Քրքրոյանի մահվանից հետո երեք տարվա ընթացքում (որի մեկ տարին անցել է) պետք է արդեն այդ գումարի բաժանումը կատարած լինեն:

Չնայած այս եռյակի որոշման վրա որեւէ սահմանափակում չկա, բացառությամբ, որ որոշումները պետք է լինեն մեծամասնության սկզբունքով՝ ես այնուամենայնիվ կարծում եմ՝ այս անհատների վրա կա բարոյական պարտավորություն, որը բխում է Քրքրոյանի՝ հատկապես վերջին քսան տարիներին կատարած բարեգործական նվիրաբերումների առաջնայնություններից:

Քրոք Քրքրոյանը բարեգործական նվիրաբերումներ արել է երեք հիմնական ուղղություններով.

1-ին՝ ամերիկյան հաստատություններին, հատկապես՝ կրթական;

2-րդ՝ հայկական կազմակերպություններին՝ կրթական, մշակութային, հրատարակչական եւ այլ,

3-րդ, որը եղել է նրա նվիրաբերումների ամենաձավալուն մասը, Հայաստանին:

Ես համոզված եմ, որ այս հանգամանքը որոշակի պարտավորություններ է դնում կտակը տնօրինող անհատների վրա իրենց ընտրությունը կատարելու գործում: Ճիշտ կլինի՝ հնարավորինս արագ հայ ժողովրդի բացարձակ վստահությունը վայելող անհատներից բաղկացած հինգ-յոթ հոգանոց հանձնաժողով ստեղծել, որը, խորհրդակցություններ անցկացնելով ավելի լայն շրջանակների հետ, այդ թվում՝ Հայաստանի

կառավարության, առաջարկների փաթեթ կներկայացնի կտակը տնօրինող եռյակին: Հանձնաժողովի խնդիրը պետք է լինի հիմնավորել կտակի գումարների ստվար մասի ուղղումը հայկական նպատակներին, ինչպես նաև նախանշել այն կազմակերպություններն ու ծրագրերը, որոնց պետք է հատկացումներն անել:

Չի կարելի այս հարցը պատահականության թողնել: Չի կարելի նաև, որ անհատ մարդիկ եւ կազմակերպություններ, առանձին-առանձին՝ իրենց միջոցներով, հակասական առաջարկություններով, նեղ շահերից ելնելով, վանեն կտակը տնօրինող եռյակին»,- գրել է Օսկանյանը:


Մահացել է կինոռեժիսոր, սցենարիստ Ներսես Հովհաննիսյանը



78 տարեկանում մահացել է կինոռեժիսոր, սցենարիստ Ներսես Հովհաննիսյանը:

Մշակույթի նախարարությունից հայտնում են, որ Հովհաննիսյանի ֆիլմերից շատերն այնքան մեծ ժողովրդականություն էին վայելում, որ դրանցից շատ ֆրագներ մարդկանց շուրթերին էին. «Հարսնացուն հյուսիսից» (1975թ.), «Երջանկության մեխանիկա» (1982թ.), «Օտար խաղեր» (1986թ.), «Ձախորդ Փանոսը» (1969թ.) ... 1987թ. արժանացել է ՀԽՍՀ վաստակավոր գործչի կոչման , 2013թ.՝ «Հայակ» ազգային կինոյի մրցանակաբաշխության Հատուկ մրցանակի: Վերջին տարիներին նա բնակվում էր Մոսկվայում:

Արցախում աշխատանքն է շարունակում Լրագրողների 8-րդ համահայկական համաժողովը



ԼՂՀ մայրաքաղաք Ստեփանակերտում Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնում անցկացվել են Լրագրողների 8-րդ համահայկական համաժողովի հինգերորդ եւ վեցերորդ նիստերը: «Հայոց պետականությունը՝ միասնության առանցք» խորագրով համաժողովի աշխատանքները Արցախում շարունակվել են «Հայկական սվյուռքի գորակցությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային ճանաչման գործընթացին» եւ «Հայաստանի եւ Արցախի հանրապետությունների պաշտպանության

համակարգի հետ կապված խնդիրների լուսաբանումը ՁԼՄ-ում» թեմատիկ ուղղություններով:

«Ազդակ» օրաթերթի տնօրեն-գլխավոր խմբագիր, հայ լրագրողների համաժողովները համակարգող խորհրդի նախագահ Շահան Գանտահարյանը նշել է, որ համաժողովին մասնակցում են 31 երկրից. 90 մասնակից սփյուռքից, 34-ը՝ Արցախից ու Հայաստանից:

Ներկայացված գեկույցներից հետո ծավալվել են քննարկումներ. դրանք ուղղված էին Արցախում, Հայաստանի Հանրապետությունում եւ Սփյուռքում առկա խնդիրների լուծումը լրատվամիջոցների միջև համագործակցության միջոցով խթանելուն:

Նիստերի ընթացքում ցուցադրվել է հեռուստալրագրող Նաիրի Հոխիկյանի «Արևը ցեխով չես ծածկի» փաստավավերագրական ֆիլմը, որը պատմում է 1915 թվականի Օսմանյան Թուրքիայի կողմից իրագործած ոճրագործության եւ Թուրքիայում ազգային ինքնությունը պահպանած ավելի քան 4.5 մլն հայերի մասին: Համահայկական համաժողովի մասնակիցները նիստերից հետո այցելելու են նաև Արցախի առաջնագիծ՝ մոտիկից ծանոթանալու մեր դիրքապահների առօրյային:

Մահացել է Ռուբեն Հովսեփյանը

10:46, 27.10.2016



77 տարեկանում կյանքից հեռացել է թարգմանիչ, գրող Ռուբեն Հովսեփյանը:

1962 թվականին ավարտել է ԵՊՀ երկրաբանական ֆակուլտետը: 1982-1987 թվականներին եղել է «Սովետական գրող» (այժմ՝ «Նաիրի») հրատարակչության գլխավոր խմբագիր, 1988-1989 թվականներին ՀԳՄ քարտուղար, 1989 թվականից՝ «Նորք» ամսագրի գլխավոր խմբագիր: Հայաստանի Հանրապետության մշակույթի վաստակավոր գործիչ (2014):

Նրա պատմվածքներն ու վիպակները հատկանշվում են արժարժվող թեմաների արդիականությամբ /«Որոնումներ», 1965, «Երկու վիպակ: Ծիչ: Հայոց թաղ», 1970, «Հնձան», 1972 (համանուն կինոնկար, 1973), «Ամենատաք երկիրը», 1977 (համանուն կինոնկար, 1983), «Երկար, հրաշալի օր», 1980, «Ճայերը», 1980 (ժողովածուներ):

Հովսեփյանը թարգմանել է Լեւ Տոլստոյի ստեղծագործություններից, Գ.Գ. Մարկեսի «Հարյուր տարվա մենությունը»:

2015-2016թթ. ուստարում Հայաստանից հեռացել է ավելի քան 6 հազար աշակերտ

00:15, 30.10.2016



2015-2016թթ. ուսումնական տարում դպրոցականների թիվն ավելացել է շուրջ 5 հազարով: Այս մասին տեղեկանում ենք Կրթության եւ գիտության նախարարության Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (ԿՏԱԿ) կայքից:

Ըստ այդմ, նախորդ ուսումնական տարում դպրոցականների թիվը եղել է 364 հազար 3 հարյուր 98, նրանցից 172 հազար 9 հարյուր 72-ն աղջիկներ են: Նշենք, որ 2014-2015թթ. դպրոցականների թիվը եղել է 359 հազար 5 հարյուր 59, նրանցից 171 հազար 3 հարյուր 71:

Նշենք, 2015-2016թթ. Հայաստանից հեռացել է 6 հազար 5 հարյուր 62 աշակերտ: Նախորդող տարին երկրից հեռացել էր 5 հազար 8 հարյուր 38 աշակերտ:

Հնագետ. 2 տարում հնարավոր չեղավ 850 եվրո ճարել Տիգրանակերտում գտած ոսկրանյութի անալիզի համար

20:46, 04.11.2016



Լեռնային Ղարաբաղում Տիգրանակերտի պեղումների 10 տարիների ընթացքում պեղվել է քաղաքի տարածքի մոտ 3-4 տոկոսը, եւ աշխատանքի ծավալներն անբավարար են: Այս մասին նոյեմբերի 4-ին՝ մամուլի ասուլիսի ժամանակ, ասել է ԵՊՀ մշակութաբանության ամբիոնի վարիչ, ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արցախի հնագիտական արշավախմբի ղեկավար Համլետ Պետրոսյանը: Գիտնականի խոսքով եթե Հայաստանի ղեկավարության վերաբերմունքը Տիգրանակերտի եւ անձամբ իր նկատմամբ շարունակի նույնը մնալ, ապա ինքը «կարող է խելագարվել»:

Նրա խոսքով՝ Տիգրանակերտը մեծ նշանակություն ունի այն առումով, որ ապացուցում է, որ Դաշտային Արցախը բուն

հայկական հող է: Նա նշեց, որ Արցախի այդ շրջանների երկարատև բռնազավթումը հանգեցրել է նրան, որ միշտ չէ հնարավորություն եղել պատմականորեն ապացուցել դրանց հայկական պատկանելիությունը:

Մակայն չնայած այդ հսկայական կարելությունը՝ Տիգրանակերտը, մասնագետի խոսքով, մյուս հուշարձանների նման Հայաստանի մշակութային քաղաքականության գոհն է դառնում: Դրան գումարած այն, որ Լեռնային Ղարաբաղը չճանաչելու պատճառով այստեղ գիտական աշխատանքները գրեթե ոչ մի միջազգային դրամաշնորհի չեն ստանում, մնում է հույս դնել միայն առանձին արտասահմանցի գիտնականների բարի կամքի, անձնական կապերի եւ պաշտոնյաների քմահանույքների վրա:

Համլետ Պետրոսյանը պատմեց, որ ոսկրանյութը, որը հանվել է Տիգրանակերտում գտած դամբարանից, արդեն 2 տարի Մարսելում է, բայց ինքը ոչ մի կերպ չի կարողանում 850 եվրո գտնել, որպեսզի այդ ոսկրանյութի տարիքը պարզելու անալիզ անցկացնեն: Այս տարի պեղումների ժամանակ գտել են դամբանատեղ, որտեղից արծաթյա պարսկական դրահներ են հանել, բայց ոսկրանյութը դարձյալ անհնար է անալիզի ենթարկել փողի բացակայության պատճառով: Գիտնականը նշեց, որ անցյալ տարի Գիտության պետական կոմիտեն մերժել է Տիգրանակերտում աշխատանքների ֆինանսավորման հայտը:

Դաշտային Արցախում պեղումների ժամանակ, որը հին ժամանակներում մարդկանց տեղաշարժերի ակտիվ գոտի էր, գտել են նաև մարդանման արձաններ, որոնք մ.թ.ա 7-8-րդ դարերին են պատկանում: Դրանք սակական են կամ սկյութական: Ադրբեջանցիները փորձում են իրենց վերագրել դրանք: Եվ այդ պատճառով այդ տարածքում աշխատանքները կարելու են նաև այս տարածաշրջանի պատմամշակութային իրական պատկերի վերականգնման առումով, պնդում է Համլետ Պետրոսյանը:

Նա նշել է, որ Ադրբեջանն այսօր ոչ միայն կեղծ գիտնականների, այլ նաև մեղիա մասնագետների մեծ բանակ է պատրաստել, որը մոլորության մեջ է գցում անգամ հետազոտողներին: Անգամ հայ հասարակության մեջ կան մարդիկ, որոնք կուլ են տալիս այդ խայծը: Եվ իր արշավախումբը ստիպված է աշխատել նման աներեւակայելի պայմաններում:

Գիտնականի խոսքով՝ երբ թուրքերը բացեցին ուրարտական Հայանիս հուշարձանը, Թուրքիայի կառավարությունը հսկայական միջոցներ հատկացրեց այդ հուշարձանի ուսումնասիրության համար: Եվ այսօր վստահաբար կարելի է ասել, որ Թուրքիան առաջատար է ուրարտագիտության ոլորտում, թեպետ Հայաստանը բոլոր շանսերն ուներ դրա համար: «Հիմա նույն բանը տեղի է ունենում Տիգրանակերտի դեպքում: Ինչու՞ պետք է ամեն բան միայն իմ ուսերին լինի: Մա միայն ի՞նչ է: Եթե այսպես շարունակվի, ես կխելագարվեմ», - ասաց Համլետ Պետրոսյանը:

Instigate-ը մաադիր է ռոբոտեխնիկայի նոր խմբակներ բացել հեռավոր գյուղերի ու Ղարաբաղի դպրոցներում

2016-2017 թթ. Instigate Design ընկերությունը ուզում է ռոբոտեխնիկայի նոր խմբակներ բացել Հայաստանի

հեռավոր մարզերի ու Ղարաբաղի դպրոցներում: Այս մասին հայտնել է ընկերության հիմնադիր Վահագն Պողոսյանը :



Հայկական ՏՏ ընկերությունների աջակցությամբ ծրագրավորման ու ինժեներիայի խմբակներ են արդեն բացվել Հայաստանի ու Արցախի 135 դպրոցներում: Դրանց մեծ մասում տեղադրված են ոչ միայն հայկական օպերացիոն համակարգեր, այլև եռաչափ հաստիքներ ու ռոբոտաշինության կոմպլեկտներ:

«Սկզբում երեխաները կսովորեն ծրագրավորում մեր «Ադվետ» օպերացիոն համակարգով, հայկական ինտերֆեյսով, իսկ հետո պրակտիկայում կկիրառեն այդ հմտությունները: Սcom ընկերության աջակցությամբ մենք ստանձնել ենք ղեկավարություն Տավուշի ու Սյունիքի մարզերի դպրոցներում, որոնք հեռու են Երևանից: Տեխնիկա ենք հասցրել նաև Արցախի դպրոցներին, ուզում ենք շարունակել», - հայտնել է Պողոսյանը:

ՏԻՄ ընտրություններին մասնակցել է ընտրողների 50.87 տոկոսը



Սեպտեմբերի 18-ին, Գեղարքունիքի, Լոռիի, Կոտայքի, Ծիրակի, Սյունիքի, Վայոց ձորի մարզերի թվով 375 համայնքներում կայացել են տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ:

Տեղամասերն արդեն փակել են դռները, եւ հանձնաժողովները սկսում են ընտրությունների արդյունքների ամփոփումը:

Վանաձորում եւ Գյումրիում ընտրել են ավագանիներ՝ կուսակցությունների համամասնական ընտրացուցակներով, իսկ հաղթող ուժերը բավուք կստանան քաղաքապետ նշանակել իրենց ցուցակից:

ԿԸՀ մամուլի ծառայության փոխանցմամբ, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների քվեարկության մասնակիցների թիվը, նախնական տվյալներով, ժամը 20-ի դրությամբ 378557 է կամ 50.87%: Ընդամենը գրանցած էր 744217 ընտրողի անուն:

Մեւանում, նախնական տվյալներով, ընտրություններին մասնակցել է 11970 քաղաքացի կամ ընտրողների 61.30 տոկոսը, Մարտունիում՝ 5557 քաղաքացի կամ 54.74 տոկոսը, Արթիկում՝ 8524 քաղաքացի, կամ 55.56 տոկոսը, Կապանում՝ 18043 քաղաքացի, կամ 59.39 տոկոսը:

ՀՔԱՎ. Բանակում հունվար-սեպտեմբերին 146 զոհ է գրանցվել



ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2016 թ.-ի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում մահացությունների վերաբերյալ տվյալները հավաքագրվել են զանգվածային լրատվամիջոցներով եւ պաշտոնական աղբյուրներով տարածված, ինչպես նաեւ մահացած զինծառայողների հարազատների կողմից տրամադրված տեղեկություններից:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի փոխանցմամբ, ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ 2016 թ.-ի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում ՀՀ Չինված ուժերում եւ ԼՂ Պաշտպանության բանակում մահացել է 146 շարքային եւ պայմանագրային զինծառայող, ինչպես նաեւ քառօրյա պատերազմական գործողություններին մասնակցած կամավորականներ: 2016 թ.-ի ապրիլի 2-ին ռազմական գործողությունների ընթացքում արձանագրվել են նաեւ Թալիշում 4 քաղաքացիական անձանց զոհվելու դեպքեր:

Բացի նշվածներից՝ 2016 թ. օգոստոս ամսին տեղի ունեցած ավտովթարի պատճառով մահացել է ՌԴ ՍՉ Ն զորամասի պայմանագրային զինծառայող Արտակ Պետրոսյանը:

2016 թ. հունվար-սեպտեմբեր ամիսների մահացության 146 դեպքերից 77-ը ապրիլի 1-5-ը ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած պատերազմական գործողությունների հետեւանքով են, իսկ մահացության մյուս 69 դեպքերից 28-ը՝ հրադադարի ռեժիմի խախտման, 15-ը՝ դժբախտ պատահարի (5-ը՝ ավտովթարի, 3-ը՝ բնական աղետի /1-ը՝ ձնահոսքի, 2-ը՝ ջրհեղեղի/, 2-ը՝ բլինդաժի փլուզման, 2-ը՝ մեքենաներ վարելու, շահագործելու կանոնների խախտման, 1-ը՝ հոսանքահարման, 1-ը՝ ջրահեղձման, 1-ը՝ ականի պայթյունի), 12-ը՝ սպանության (5-ը՝ զենքի հետ վարվելու կանոնների, 3-ը՝ կանոնադրային հարաբերությունների խախտումների հետեւանքով, 3-ը՝ դեռեւս չհստակեցված հանգամանքներում, 1-ը՝ դիտավորյալ), 10-ը՝ ինքնասպանության կամ ինքնասպանության հասցնելու հետեւանքով, 3-ը՝ մարտական ծառայություն կրելու կանոնների խախտման հետեւանքով եւ 1-ը՝ առողջական խնդիրների՝ սրտի կաթվածի հետեւանքով:

Մահացության 2 դեպքերում (1 ավտովթար եւ 1 ինքնասպանություն) զինծառայողները չեն գտնվել ծառայության մեջ:

Համեմատության համար նշենք, որ 2015 թ.-ի նույն ժամանակահատվածում գրանցվել է 56 մահացության դեպք: 54 դեպքերից 31-ը հրադադարի ռեժիմի խախտման հետեւանքով են, 12-ը՝ դժբախտ պատահարի (11 ավտովթար, 1-ը դեռեւս չճշտված հանգամանքների), 5-ը՝

ինքնասպանության կամ ինքնասպանության հասցնելու, 3-ը՝ սպանության (1-ը՝ դիտավորյալ, 2-ը՝ մարտական ծառայություն կրելու կանոնների խախտման), 2-ը՝ առողջական խնդիրների հետեւանքով է, 1-ը՝ մարտական ծառայություն կրելու կանոնների խախտման հետեւանքով:

Ներկայացված տվյալներից եզրակացնում ենք, որ հրադադարի ռեժիմի խախտման դեպքերը 2016 թ.-ի նույն ժամանակահատվածում, առանց ապրիլյան մարտական գործողությունների եւ պատերազմական գործողություններից հետո հրադադարի ռեժիմի խախտման հետեւանքով զոհերի թվի, 3 անգամ նվազել են 2015 թ.-ի համեմատ:

Սակայն կտրուկ աճել է սպանության հետեւանքով մահացությունների թիվը՝ 4 անգամ (2015 թ.-ին՝ 3, 2016 թ.-ին՝ 12), ինքնասպանության դեպքերի թիվը՝ կրկնակի անգամ (2015 թ.-ին՝ 5, 2016 թ.-ին՝ 10):

2016 թ.-ի հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում հրադադարի ռեժիմի խախտման հետեւանքով 105 (ապրիլի 1-5-ի պատերազմական գործողությունների 77 դեպքերը եւ հրադադարի ռեժիմի խախտման հետեւանքով 28 մահվան դեպքերը) մահացության դեպքերից 2-ը տեղի են ունեցել ՀՀ-ում, որոնցից մեկը Տավուշի մարզի Ճամբարակ համայնքում, իսկ մյուսը Վայոց ձորի մարզում:

Արևմտյան Հայաստան

Համշենական ինքնությունը օսմանյան փաստաթղթերում



Համշենցիների պատմության մասին առաջին հայտնի հիշատակությունները պատկանում են հայ հոգևորականներ Ղևոնդին և Հովհան Մամիկոնյանին: Այդ երկու հեղինակների կողմից հիշատակվում է Համամի առաջնորդությամբ կատարված մի գաղթի մասին: Սակայն այդ գաղթի ճանապարհի և թվականի վերաբերյալ խառնաշփոթ կա: Ղևոնդի համաձայն՝ գաղթը կատարվել է 789-790 թվականների ընթացքում: Այդ տարիներին ապրած Եսայի կաթողիկոսի, արաբ ոստիկան Օբայդուլլահի և բյուզանդական կայսր Կոստանդին 4-րդի անունների հիշատակումը հաստատում է այդ տարեթիվը: Իսկ Հովհան Մամիկոնյանը հայտնում է, թե այդ գաղթը կատարվել է վերոնշյալ տարեթվից 160 տարի առաջ, այսինքն՝ 626 թվականին:

Համշենի պատմությանն անդրադարձած թուրք, հայ կամ արտասահմանցի գրեթե բոլոր պատմաբանները վկայակոչում են այդ գաղթի մասին: Բոլորի կողմից ընդունված տեսակետ է նաև, որ այդ գաղթն իրականացրած հանրությունը Հայ առաքելական եկեղեցու հետևորդ է եղել: Սակայն բանավեճի առարկա է Հայ առաքելական եկեղեցու հետևորդ եղած այդ խմբի էթնիկական կազմի հարցը: Թուրք

պատմաբանները համընդհանուր նախահայրը եղած Ամատունիներին համարում են տվյալ ժամանակաշրջանում քրիստոնեություն ընդունած թուրքեր: Համընդհանուր պատմության այդ դարաշրջանը փաստագրելը բավականին բարդ է և դուրս է սույն հոդվածի թեմայի շրջանակներից:

Համընդհանուր օսմանյան դարաշրջանում

Մինչև Օսմանյան կայսրության կողմից 1461 թ. Տրապիզոնի և շրջակա տարածքների գրավումը՝ Համընդհանուր բնակվող մարդիկ Հայ առաքելական եկեղեցու հետևորդ, հայերեն խոսող և իրենց հայ համարող անձինք էին: Մյուս կողմից, որ հետ նրանց առնչություններից ելնելով՝ կարելի է ենթադրել, որ նախքան օսմանյան ժամանակաշրջանը ևս այստեղ գրանցվել է սահմանափակ իսլամացում: Մակայն աղբյուրները ցույց են տալիս, որ այդ իսլամացումը գանգվածային բնույթ չի կրել: Օսմանյան փաստաթղթերի շնորհիվ հնարավոր է հետևել սույն շրջանի ժողովրդագրական պատկերի փոփոխմանը: Օրինակ՝ 1530 թ. Բալա և Չիր (Չիր-Ակունքի խմբ.) ամրոցներում աշխատող 70 մահմեդականների բացի, մնացած բնակչության 68 տոկոսը քրիստոնյա էր, իսկ 32 տոկոսը՝ մուսուլման:

1681 թ. Համընդհանուր հայերի տների թիվը 870 էր, իսկ մուսուլմանների՝ 209: Հայ բնակչության հարաբերակցությունը 80 տոկոս էր:

1842 թ. Համընդհանուր հայ տղամարդկանց թիվը 99 հոգի են կազմել:

Իսկ 1914 թ. Աթինայում (Փագարն ու Համընդհանուր ներառյալ) ընդամենը 28 հայ տղամարդ էր ապրում:

Բնակչության մասին տվյալները ցույց են տալիս, որ Համընդհանուր բնակիչները 18-րդ և 19-րդ դարերում գանգվածաբար իսլամացվել են: Լա՛վ, իսկ ինչպե՛ս է կատարվել այդ իսլամացումը: Կարելի է ասել, որ քրիստոնյա համընդհանուրները մի մասը գաղթել է դեպի արևմուտք, իսկ մյուս մասը՝ կրոնափոխվելով մահմեդականացվել: Հարկ է նշել, որ եղել են նաև մուսուլման լինելուց հետո տվյալ շրջանից արտագաղթած համընդհանուրներ: Միայն չի լինի նաև արձանագրել, որ Համընդհանուր մնացած բնակչության մեծ մասը կրոնափոխ համընդհանուր են: Քանզի չկա որևէ արձանագրություն, որը ցույց կտա, թե Համընդհանուր բնակչությունն արմատապես փոխվել է: Բացի այդ, չնայած որ իրենց ծագումը Համընդհանուր վերագրող Խոփայի և Բորչկայի համընդհանուրները խոսում են հայոց լեզվի՝ Համընդհանուր բարբառով, սակայն ներկայում նրանց ապրած շրջաններում չկան քրիստոնյա անցյալը հիշեցնող եկեղեցիներ կամ սրբատեղիներ: Բայց և այնպես, տվյալ շրջաններում կիրառվում են հարյուրավոր բառեր, արտահայտություններ և տեղանուններ, որոնք թե քրիստոնեության հետքերն են և թե համընդհանուրների ազդեցությունը: Այդ հանգամանքն էլ ենթադրել է տալիս, որ տվյալ խումբն իսլամաց(վ)ել է նախքան վերոհիշյալ բնակավայր գաղթելը: Հայերենի վերաբերյալ ուսումնասիրություններ կատարած լեզվաբանները բացահայտում են, որ Համընդհանուր բարբառը հայոց լեզվի տասնյակ բարբառներից մեկն է:

Բժշկյանից տեղեկանում ենք, որ մուսուլման համընդհանուրներն անձնա՝ Տրապիզոն գաղթած քրիստոնյա համընդհանուրները նույնպես խոսել են այդ բարբառով: 1817-1819 թթ. տվյալ բնակավայրում շրջած Մինաս Բժշկյանը հայտնում է. «(Տրապիզոնի) գյուղերում ևս Հաչոուր կոչվող մանր մզկիթներ կան: Քանզի որ գյուղական բնակչությունը

Համընդհանուր է, իսկ քաղաքայինը՝ Անիից, մեծ տարբերություն է առկա նրանց բարբառների միջև»:

Բժշկյանից բացի՝ Կոխը, Մառը, Ֆերուհան բեյը ևս նշում են, որ մուսուլման համընդհանուրները խոսում են հայերենի մի բարբառով:

Քանզի որ օսմանյան գրանցումներում միլլեթների համակարգը հիմնված է կրոնի վրա, չի նշվում մուսուլմանների ծագման մասին: Հետևաբար, բնակչության մեջ մահմեդականների թվի աճը որպես թուրքերի թվի աճ համարելը չափազանց սխալ կլինի: Տվյալ շրջանների բնակչության մեծ մասի լազ, վրացի, հույն կամ հայ բնակչության մահմեդականացված թոռները լինելու փաստը հաստատվում է այսօր անգամ այդ ժողովուրդների մի որոշակի հատվածի կողմից լեզվի պահպանման շնորհիվ:

Համընդհանուրների առումով բարեբախտաբար առկա է վերոնշյալ հանգամանքը բացահայտող մի քանի փաստաթուղթ:

Օսմանյան փաստաթղթերը

Օսմանյան կայսրության վերջին ժամանակաշրջանին պատկանող ներքոհիշյալ փաստաթղթերն ապացուցում են վերոնշյալը: Երկու փաստաթղթերը կապված են իրար հետ: Առաջին փաստաթուղթը Գլխավոր շտաբի նախագահության չորրորդ մասնաճյուղի կողմից Ներքին գործերի նախարարությանն ուղղված մի գրություն է: 1913 թ. հունիսի 1-ով թվագրված սույն գրության մեջ նշված է.

«Տրապիզոնի վիլայեթին ենթակա Խոփա գավառում գտնվող Խոփայի սահմանային գումարտակի շրջանի Չուրփիջի /Յուրթեր/, Արվալա /Էշմեքայա, Չիմենլի/, Չավուշու, Հայկի, Չարգինա /Գյունեշի/, Գարջի /Հենդեք/ գյուղերի բնակչությունը հայտնի է Համընդհանուր և բաղկացած է հայ կրոնափոխ մուսուլմաններից. մնացած բնակչությունը կազմված է մահմեդական լազերից: Քանզի որ համընդհանուրները միամիտ և անգրագետ են, որևէ միսիոներ կարող է հաջող կերպով գործունեություն ծավալել այնտեղ: Այդ պատճառով մեր տեղական իշխանությունների կողմից բնակչության նախագոյալացման և ուղեցույց լինելու անհրաժեշտությունը վերին աստիճանի կարևոր է: Այդ կարևորությունը շեշտվել է Ռուսաստանի հետ սահմանային կոմիսարության Խոփայի գումարտակին պատկանող զեկույցի մի պարբերության մեջ: Եվ մենք սույն հարցն ուշագրավ համարելով՝ ցանկանում ենք, որ անհրաժեշտն արվի այդ ուղղությամբ»:

Այս փաստաթղթի հետ կապված՝ Ներքին գործերի նախարարությունը 1913 թ. հունիսի 3-ին 388 համարի ներքո մի գրություն է ուղարկում Տրապիզոնի նահանգապետարան.

«Ծագումով հայ, սակայն կրոնափոխ եղած և Համընդհանուր անվամբ հայտնի Խոփայի սահմանային գումարտակի կողմերում գտնվող Չուրփիջի (Յուրթեր), Արվալա (Էշմեքայա, Չիմենլի), Հայկի, Չարգինա (Գյունեշի), Գարճի (Հենդեք) գյուղերը միամտության և անգրագիտության պատճառով կարող են տրվել միսիոներների խաբեություններին: Տեղական իշխանությունները պետք է լուսաբանեն համընդհանուրներին և նրանց ճիշտ ուղին ցույց տան: Այդ անհրաժեշտության մասին մեզ է հայտնել մեր Պաշտպանության նախարարությունը՝ Ռուսաստանի հետ սահմանին գտնվող մեր կոմիսարության գրության վրա հիմնվելով և ուշագրավ համարելով իրավիճակը

մեկնաբանող այդ գրությունը: Պետք է այդ ուղղությամբ անել այն, ինչ անրաժեշտ է»:

Ի՞նչ են նշանակում այս փաստաթղթերը

Մույն փաստաթղթերը նախկինում հրապարակվել են նաև սոցցանցերում, «Ակոս» շաբաթաթերթում և Ուղուր Բիրոյի «Մեծույան շրջանի անհետացող ինքնությունը» գրքում, որը տպագրվել է «Իլեթիշիմ» հրատարակչության կողմից: Մույն հրապարակումները զանազան քննարկումների տեղիք են տվել: Սակայն մեր կարծիքով՝ դրանք բավարար չափով չեն արժևորվել: Դժբախտաբար առավելապես տիրապետող է եղել ոչ թե փաստաթղթերի բացահայտած փաստերը քննարկելու, այլ դրանց արժեքը նվազեցնելու միտումը:

Մույն փաստաթղթերն արհամարհողները հիմնվում էին այն հանգամանքի վրա, թե դրանք մի «անգրագետ տեսչի գործն են եղել»: Այդ ենթադրությունը անհիմն է, քանի որ այն տարիներին, երբ պատերազմը մոտենում էր, խելքին մոտ չէ ենթադրել, թե այնպիսի չափազանց կարևոր պարտականություն, ինչպիսին էր սահմանային անվտանգության հսկողությունը, կարող էր վստահվել մի «անգրագետ տեսչի»: Եթե անգամ ենթադրենք՝ տեսուչն անգրագետ է եղել, ամբողջովին անհեթեթ է ասելը, թե «այդ անգրագետը» սուտ և սխալ տեղեկություններ է հաղորդել Գլխավոր շտաբի համապատասխան մարմնին, Ներքին գործերի նախարարությանը և Տրայիգոնի նահանգապետարանին:

Եթե, որպես առանձին քննարկման առարկա, մի կողմ թողնենք սույն փաստաթղթերում արտահայտված այն մտահոգությունը, թե համշենցիները կարող են խնդիր հարուցել անվտանգության տեսանկյունից, ապա դրանցում արձանագրված ամենաեական կետը կմնա համշենական ինքնության բնութագրումը, ըստ որի՝ համշենցիները «մահմեդական դարձած հայեր են, ովքեր հայտնի են Համշեն անվամբ»: Ըստ էության, այդ բնութագրումը մեզ բացատրում է նաև, թե ինչպես է ի հայտ եկել Համշեն անունը՝ որպես էթնիկ պատկանելիության անվանում:

Համշենի՝ քրիստոնյա մնացած հայերի համար Համշեն անունն առավելապես տեղանուն է: Նրանց համաձայն՝ ինչպես որ կարելի է վանեցի, ջանիկցի կամ արդվիցի լինել, նմանապես հնարավոր է լինել համշենցի: Այսինքն՝ առավելապես արտահայտում է համերկրացի լինելը: Լեզուն, որով խոսում են համշենցիները, մի առանձնահատուկ հայկական բարբառ է, որն ամրապնդում է քրիստոնյա և մուսուլման համշենցիների միջև առկա կապը:

Սակայն մահմեդական համշենցիների դեպքում պատկերն այլ է: Մուսուլման համշենցիների համար Համշենը էթնիկական պատկանելիություն է արտահայտում: Միայն չի լինի ենթադրել, թե Համշեն անունն սկսել է այդ իմաստը կրել համշենցիների մահմեդականացումից հետո: Մուսուլման դարձած համշենցիներն այդ ժամանակաշրջանում խուսափել են իրենց բնորոշել քրիստոնեության հետ նույնացվող ինքնություն ունեցող հայությամբ: Դա չափազանց հասկանալի իրավիճակ է: Սակայն մահմեդական համշենցիները մինևս ժամանակ ցանկացել են շեշտել, որ իրենք իրենց լեզվով և մշակույթով տարբերվում են մյուս մուսուլման ժողովուրդներից՝ թուրքերից, լազերից, քրդերից, իլյամացած հույներից և այլն: Ինչպես երևում է, նրանց այդ դիրքորոշումն էլ տեղիք է տվել, որ իրենց բնակավայրի

անվանումն սկսեն օգտագործել իրենց ինքնությունն արտահայտելու նպատակով:

Հոդվածը հրատարակվել է Ստամբուլում տպագրվող «Գոր» ամսագրի չորրորդ համարում: Թարգմանությունը Akunq.net-ի:

Թուրք գործարարը վերականգնել է հայկական գերեզմանը



Թուրքիայի Սիվաս (Սեբաստիա) նահանգի Չառայի շրջանում նախորդ տարի «Հայնար»-ի (Հայ ճարտարապետների ու ճարտարագետների միություն) կողմից հայտնաբերված հայկական գերեզմանոցը վերականգնվել ու խնամվել է:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոս»-ը, Սեբաստիայի Չառայի շրջանում հայկական գերեզմանը հայտնաբերվելուց հետո գործարար Չառայի բնակիչ, գործարար Ֆելթի Արասի հովանավորությամբ տեղի են ունեցել վերականգնման ու խնամքի աշխատանքներ:

Հոկտեմբերի 29-ին, տեր Չոհրապ Ջիվանյանի գլխավորությամբ տեղի է ունենալու Չառայի հայկական գերեզմանի բացման արարողությունը:

Նշենք, որ Չառայում մինչ 1915-ը հոծ հայ բնակչություն է սպրել:

Համշենահայ ուսումնասիրողն անդրադարձել է մայրենի լեզվի կարևորության խնդիրներին



Ներկայում Թուրքիայի տարածքում գտնվող Արդվիհի Խոփայում ծնված համշենահայ գրող, հետազոտող Հուրիյե Շահինը բոլոր համշենցիներին կոչ է անում առաջիկայում, առանց ժամանակ կորցնելու, մի լավ պատրաստված եւ համապարփակ համշենցիների կոնֆերանս կազմակերպել եւ բացահայտ կերպով քննարկել բոլոր խնդիրները: Այս մասին գրել է Akunq.net-ը:

Հետազոտող, գրող եւ ակտիվիստ Հուրիյե Շահինը, ով իրեն բնութագրում է որպես «համշենցի հայ», ծնվել է Արդվիհի Խոփայում: Շահինի հեղինակած «Ինչպե՛ս է ուժացման քաղաքականությունը վերացնում լեզուները. ի մասնավորի հայոց պատմությունը եւ Համշենի հայերը» վերնագրով գիրքը հրատարակվել է «Յորդամ» հրատարակչության

կողմից: Հուրիյե Շահինի հետ գրուցեցինք պատմության ընթացքում Համշենի եւ համշենահայության գլխին եկածների, ինչպես նաեւ գրքի գլխավոր թեմա հանդիսացած մայրենի լեզվի մասին:

Հուրիյե Շահինը նախ խոսքն սկսում է այն տարածքի աշխարհագրական սահմանները գծելով, որի անվանումը հայկական «Համշեն» է, եւ որն ուժացման քաղաքականության հետեւանքով վերածվել է «Հեմշինի»՝ «Ներկայիս Ռիզեն, Հեմշինը, Չամլիհեմշինը եւ Փագարն իրականում Համշենի շրջաններն են: Սակայն համշենցիները չեն ապրել միայն այս աշխարհագրական սահմաններում: Համշենցիները բնակվում էին նաեւ Արդվինի Խոփա եւ Բոքչկա գավառներում: Դարեր շարունակ ուժացման եւ ճնշման քաղաքականության հետեւանքով համշենցիները սփռվել են Թուրքիայի չորս կողմերով մեկ»:

Աշխարհասփյուռ համշենցիներ

Շահինը նշում է, որ Թուրքիայից դուրս՝ մասնավորապես Ռուսաստանում, համշենցիները հայտնվել են 1700-ական թթ. Արեւելյան Սեւ ծովի ժողովուրդների օսմանյան բռնի իսլամացման քաղաքականության շրջանակներում տեղի ունեցած կոտորածներից խուսափելու պատճառով. «Նրանց մի մասն էլ հաստատվել է Հայաստանում: Եվ դեռեւս այնտեղ է բնակվում: Վրաստանի Բաթում քաղաքում եւս կային իսլամացած համշենցիների 5 գյուղեր, որոնց բնակչությունը Ստալինի օրոք արքայազն Դազախաստան: Խորհրդային Միության փլուզումից հետո նրանք թեւեւ ցանկացել են վերադառնալ իրենց բնակավայրեր, սակայն այս անգամ էլ վրացիները թույլ չեն տվել: Հետեւաբար խոսքը գնում է աշխարհասփյուռ համշենցիների մասին»:

Շահինը հրապարակում է նաեւ համշեններն եւ թուրքերն «Համշենցու գոր» ամսագիրը, որտեղ անդրադառնում է Համշենի կյանքին, մշակույթին, կրոնին, լեզվին, անցյալում ստեղծված գրական արժեքներին՝ հեքիաթներ, ժողովրդական խաղիկներ՝ թյուրքյուններ: Շահինը հայտնում է, որ գիրքը լույս է ընծայել, որպեսզի կարողանա ուշադրություն հրավիրել այն թեմայի վրա, թե ուժացման քաղաքականությունն ինչպիսի ազդեցություն է ունենում լեզվի վրա:

«Թուրքերը եւս ուժացման են ենթարկվում»

Գրքում Շահինն անցում է կատարում ընդհանուրից մասնավորի՝ սկսելով ձուլման քաղաքականությունից, եւ հասնում է համշենահայերի ուժացմանը. «Գրքի նախաբանը նվիրված է մարդու ձեւավորման գործընթացին: Լեզուներն ինչպե՛ս են ստեղծվել: Մարդկանց աշխատանքի զարգացմանը զուգահեռ առաջացել է նրանց կրոնը: Ինչպե՛ս է քրիստոնեությանը եւ իսլամով սկսվել մարդկանց ուժացման գործընթացը: Հասկապես գրել եմ, թե օսմանցիներն ինչպես են թուրքերի նկատմամբ ուժացման քաղաքականություն վարել, քանի որ թուրքերի ուժացումը դեռեւս շարունակվում է: Որեւէ մեկն այս հարցը չի ուսումնասիրում, չի նկատում: Անդրադարձել եմ նաեւ, թե ինչպես են արեւիներին ձուլում սուննիներին»:

Ոչ թե կրոն, այլ՝ լեզու

Անդրադառնալով նաեւ «իսլամացված հայերի» թեմային՝ Շահինը նշում է. «Աշխարհում կան նաեւ այլ հանրություններ, որոնք միավորված են ոչ թե կրոնական, այլ՝ լեզվական գործոնի շուրջ: Կրոնը չպետք է խառնել էթնիկ ծագման հետ: «Մուսուլման հայ չի կարող լինել» պնդումը

ճիշտ եւ գիտական մոտեցում չէ: Մենք պարտավոր ենք այս ոչ շահավետ դրությունը հաղթահարել: Պետք է, որպես հայեր եւ համշենցիներ, առաջնային պլան մղենք ոչ թե մեր կրոնը, այլ՝ լեզուն»:

Հուրիյե Շահինը շեշտեց, որ շատ կարևոր է՝ «առաջիկայում, առանց ժամանակ կորցնելու, մի լավ պատրաստված եւ համապարփակ համշենցիների կոնֆերանս կազմակերպել եւ բացահայտ կերպով քննարկել այս բոլոր խնդիրները»:

Թուրք իմամը խնամում ու մաքրում է լքված հայկական եկեղեցին




Թուրքիայի Յոզգաթ նահանի Սարըքայայի շրջանում գտնվող հայկական եկեղեցին խնամում է տեղի մզկիթի իմամ Մեթին Հալըջըն:

Թուրքական Dunyabulteni կայքի փոխանցմամբ՝ Յոզգաթի Սարըքայայի շրջանի Թերզիլի թաղամասում գտնվող պատմական հայկական եկեղեցին հայերի հեռանալուց հետո լքվել է, որից հետո տեղի մզկիթի իմամ Մեթին Հալըջըն է սկսել խնամել:

Իմամը նշել է, որ երբ հոգևոր ծառայության է նշանակվել Սարըքայայում, շատ է զարմացել, էրբ տեսել է լքված հայկական եկեղեցին: Նա ասել է, թե ինքը սիրով սկսել է խնամել ու մաքրել եկեղեցին: «Եկեղեցին այնպես մաքուր ենք պահում, որ հայերը ամեն պահ կարող են գալ ու իրենց աղոթքն անել: Եկեղեցին խնամելու հարցում ինձ օգնում են կինս եւ երեխաներս», – ասել է իմամը:

Մեհմեդ Հալըջըի խոսքով եկեղեցի այցելող հայերը գոհ են մնում եկեղեցու վիճակից եւ իրեն շնորհակալություն են հայտնում: «Եկեղեցու կառուցման տարեթվի հետ կապված տեղեկություններ չկան, սակայն Տուրիզմի եւ մշակույթի նախարարության մասնագետները նշում են, որ այն կառուցվել է 120 թվականներին», – շեշտել է Մեհմեդ Հալըջըն:



**Վանի 200-ամյա ժայռափոր եկեղեցին
ավիրվում է գանձագողերի կողմից**



Վան նահանգի Բահչեսարայ գավառի Այթընդերն թաղամասի ճանապարհի վրա գտնվող 200-ամյա հայկական ժայռափոր եկեղեցին, որը հայտնի է նաև Դերա Գելի քրդական անվամբ, ավիրվում է գանձագողերի կողմից:

Ինչպես տեղեկացնում է Akunq.net-ը, եկեղեցու ներքին և արտաքին պատերին անպարկեշտ գրություններ են արված, կառույցի բազմաթիվ հատվածներ վնասվել են գանձ որոնողների կողմից, իսկ հովիվներն այն որպես ախոռ են օգտագործում: Աղբյուրի փոխանցմամբ, սույն հիասքանչ եկեղեցին թողնվել է ճակատագրի քմահաճույքին, իսկ իրավասուները ոչ մի բան չեն ձեռնարկում այն փրկելու ուղղությամբ:

Միյուռք

**Պոլսյ Պատրիարքական Աթոռին Համար Չորս
Թեկնածու Առաջադրուած Է**



ԵՐԵՒԱՆ, «Արևելք».- Պոլսյ Հայոց պատրիարքարանի Հոգևոր խորհուրդին որոշումով, պատրիարք Մեսրոպ արք. Մութաֆեանի հանգստեան կոչուելէն ետք, պատրիարքական աթոռին համար առաջադրուած է չորս թեկնածուներու անուն: Անոնք են՝ պատրիարքի ընդհանուր փոխանորդ Արամ արք. Աթէշեան, Կրօնական ժողովի ատենապետ Սահակ եպս. Մաշայեան, Գերմանահայոց թեմի առաջնորդ Գարեգին արք. Պեքճեան եւ Հայաստանի Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ արք. Չուլճեան:

**110-ամյա Ալեքսան Մարգարյանը Լուս
Անջելեսում կայացած միջոցառման ժամանակ
պատմել է Ցեղասպանության մասին**



Հայոց ցեղասպանությունը վերապրած 110-ամյա Ալեքսան Մարգարյանը Լուս Անջելեսում Իրավաբան ուսանողների հայկական ասոցիացիայի կազմակերպած միջոցառման հատուկ հյուրն է եղել: Այս մասին հաղորդում է FOX 11-ը:

Նա հավաքվածներին պատմել է Հայոց ցեղասպանության մասին հիշողությունները: 1915 թվականին նա 9 տարեկան է եղել:

Փոքրիկ Ալեքսանին ազատել են դեղատանն աշխատանքի՝ քրիստոնյա լինելու պատճառով: Մարգարյանը հիշում է, որ իրեն անհավատ էին կոչում: Կյանքը փրկելու համար նա հարկադրված է եղել իսլամ ընդունել:

**Հայերի վերքերի բուժման բանալին
Թուրքիայում է. Կարո Փայլան**

Հայերի վերքերի բուժման բանալին Թուրքիայում է: Այս մասին, «Ամերիկայի Չայն»-ի հետ զրույցում նշել է Թուրքիայի խորհրդարանի հայ պատգամավոր Կարո Փայլանը՝ հավելելով, որ հայերն ուշադիր հետևում են խարհրդարանում իր գործողություններին:

Կարո Փայլանին ԱՄՆ-ի հայ համայնքը դիմավորում է ջերմ ողջույններով եւ հոստնկայս ծափահարություններով: Ինքը Փայլանը պատմում է, որ Միացյալ Նահանգներ էր ժամանել ոչ միայն Թուրքիայի իրավիճակի վերաբերյալ իր տեսակետը հաղորդելու այլև՝ Արեւմուտքի տեսակետին ծանոթանալու նպատակով. «Իշխանության ղեկը ստանձնելուց հետո, Էրդողանը կոռուպցիայի խորացման եւ այլ խնդիրների տեղիք տվեց, որից հետո նա որոշեց բարձրացնել ազգայնականության ալիքը եւ դրա տակ ծածկել բոլոր խնդիրները:

Արեւմուտքն իր կողմից այժմ առաջնորդվում է այն գաղափարով, որ Արեւմուտքի եւ Արեւելքի միջեւ բաժանարար սահման կա, անվանենք այն քրիստոնյա աշխարհ եւ մահմեդական աշխարհ: 10 տարի առաջ Արեւմուտքում հավատում էին, որ մահմեդական աշխարհում նույնպես կարող են ժողովրդավար երկրներ լինել եւ Թուրքիան նման երկիր դառնալու թեկնածուն էր: Սակայն, մեր օրերում, ինչպես ես տեսնում եմ Վաշինգտոնում ոչ ոք այլևս չի կարծում, որ Թուրքիան կարող է ժողովրդավար երկիր դառնալ: Փոխարենը պատրաստ են համագործակցել բռնապետ ղեկավարների հետ: Դա սարսափելի է»:

Ստեղծված պայմաններում պատգամավորի խոսքով հայ-թուրքական հարաբերությունների բարելավման հեռանկարները նույնպես մշուշոտ են. «Պահպանողական հին Թուրքիայի գաղափարախոսները չեն ցանկանում որևէ հարաբերություններ հաստատել Հայաստանի հետ: Նրանք ընդամենը ցանկանում են Հայաստանը դիտարկել որպես սպառնալիք կամ չարիք: Թուրքիան նաև հայոց սփյուռքն է ներկայացնում որպես չարիք: Այսպիսով, հին Թուրքիայի պայմաններում, որի պատանդն է դարձել նաև Էրդոհանը, հնարավոր չէ հայ-թուրքական հարաբերությունների բարելավում»:

Ելքը, Կարո Փայլանի կարծիքով, Արեւմուտքի աջակցությունն է Թուրքիայի դեմոկրատական ուժերին. «Մենք միամիտ եւ ժոմանտիկ դեմոկրատներ ենք: Երբ մարդկանց ձեռքերում են զենքերը եւ դրանք կրակում են, դուք չունեք ձայն բարձրացնելու իրական հնարավորություն: Այսպիսով, մենք Արեւմուտքի, ամբողջ մարդկության աջակցության կարիքն ունենք: Եթե մենք մեր նպատակներին չհասնենք, ապա կդառնանք երրորդ աշխարհի երկիր: Թուրքիան Եվրամիության անդամակցության երբեմնի թեկնածու էր, իսկ այժմ անճանաչելի հեռացել է այդ գաղափարից: Եւ եթե համաշխարհային հանրություն ուզում է, որ մահմեդական աշխարհում լինի ժողովրդավար երկիր, այն պետք է աջակցի Թուրքիայի դեմոկրատներին»:

Կարո Փայլանը նաև հատուկ դիմեց նաև Հայաստանի եւ Սփյուռքի հայերին.

«Հիշենք, որ Թուրքիան նաև մեր հողն է եւ Թուրքիան ժողովրդավար երկիր դարձնելը մասամբ նաև բոլոր հայերի պատասխանատվությունն է: Անշուշտ, մենք ցեղասպանություն ենք վերապրել եւ հարյուր տարի մեր վերքը դեռևս չի կազդուրվել: Այն բուժելու բանալին Թուրքիայում է»:

Հալեպում հայ է մահացել



Հալեպում մահացել է հրթիռակոծության հետևանքով վիրավորված հայը՝ 1959 թվականի ծնված Հակոբ Չալաքյանը: Ինչպես հայտնում է «Գանձասարը», Չալաքյանը վիրավորվել էր Հալեպի հայաբնակ Նոր Գյուղ թաղամասում:

Հիշեցնենք, որ երեկ հրթիռակոծության հետևանքով զոհվել են 1986 թվականի ծնված Գասպար Շատոյանը եւ 1987

թվականի ծնված Մովսես Մովսիսյանը: Վիրավորվել էր Վարուժան Տոնապետյանը:

Հիշեցնենք նաև, որ սեպտեմբերի 30-ից ի վեր մինչ օրս ահաբեկիչները կրակի տակ են պահում Հալեպի հայկական թաղամասերը:

Հալեպահայերի 2728 ընտանիք առաջին հումանիտար օգնությունն է ստացել Հայաստանից



«Հ նախագահ Սերժ Սարգսյանի հոկտեմբերի 7-ին ստորագրված հրամանագրի համաձայն Սիրիայի եղբայրական ժողովրդին ուղարկված մարդասիրական օգնությունը Հալեպ է հասել:

40 տ կշռող մարդասիրական օգնության մի մասը տրամադրվել է Լաթաքիայի, Բեսաբի, Թարթուսի ու Դամասկոսի բնակչությանը, իսկ գերակշիռ մասը՝ Հալեպի բնակիչներին՝ թե՛ հայ, թե՛ արաբ:

Սիրիայում հրատարակվող Գանձասար թերթը տեղեկացնում է, որ Հալեպում ՀՀ Գլխավոր հյուպատոսի, ինչպես նաև տեղի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների ներկայությամբ բնակիչներին բաժանել են հագուստ, սնունդ ու ծխախոտ: Առաջին երեք օրերի ընթացքում մարդասիրական օգնություն է ստացել հալեպահայերի 2728 ընտանիքներ: Օգնության բաժանումը շարունակվում է:



Աբխազիայի հայերը քաղաքական բնույթի խնդիրներ չունեն. համայնքի ներկայացուցիչ
 Աբխազիայի հայերը քաղաքական բնույթի խնդիրներ չունեն: Այս մասին ասվել է Երեւան-Մոսկոյում հեռուստակամուրջի ժամանակ: Համայնքի ներկայացուցիչ Իսաչիկ Մինույանի խոսքով՝ Աբխազիայում ապրում է մոտ 42 հազար հայ: «Բոլոր

երկրների նման այստեղ նույնպես խնդիրներ ունեն միայն նրանք, ովքեր աշխատել չեն ուզում: Արխագիայի հայերը քաղաքական խնդիրներ չունեն, ինչպես եւ չեն ունեցել այստեղ հայերի բնակության 150 տարիների ընթացքում: Իսկ կենցաղային խնդիրներ ամենուր կան»,- վստահեցրել է համայնքի ներկայացուցիչը:



Արխագիայի խորհրդարանի փոխխոսնակ, Արխագիայի հերոս Վաղարշակ Քոչյանի խոսքով՝ հայերը բավականաչափ ինտեգրվել են հանրապետության հասարակական եւ տնտեսական կյանքին: «Այրում ենք ծովափնյա քաղաքի սովորական կյանքով»,- նշել է Քոչյանը: Պատգամավոր Լևոն Գալուստյանն արձանագրեց, որ հայերը բնիկ բնակչության հետ լիարժեք պետություն են կառուցում: Ընդ որում նա նշեց, որ Արխագիայի հայերը հույս ունեն, որ Հայաստանը կճանաչի իրենց հանրապետությունը, եւ հասկանում են դրա հետ կապված խնդիրները:

Նրա խոսքով՝ հայերը ներկայացված են ինչպես օրենսդրական, այնպես էլ գործադիր իշխանությունում: Խորհրդարանում համայնքը ներկայացնում է 3 պատգամավոր: Հերթական ընտրությունները կկայանան մարտին, իսկ հիմա քննարկվում է ընտրությունների խառը համակարգի անցնելու հարցը: Կարծիք կա, որ այդ ամենը կնեծացնի խորհրդարանում հայերի ներգրավվածությունը: Նշենք, որ դեկտեմբերի 15-ին համայնքում համագումարի արդյունքում Արխագիայի հայերի միության նախագահ կընտրվի:

BBC. Գլենդեյլի հայերը՝ անցյալի ստվերում

Բրիտանական **BBC**-ի թղթակից Էնթոնի Չուրկերը ներկայացրել է ծավալուն հոդված Լոս Անջելեսի 200 հազարանոց համայնքի ու մասնավորապես Գլենդեյլի մասին, որտեղ հայերը բնակչության 30 տոկոսն են կազմում: Հայերը սկսել են Քալիֆորնիա գալ 20-րդ դարի սկզբին ու հիմնականում աշխատել են նահանգի կենտրոնական մասում, ոմանք էլ Գլենդեյլում են բնակություն հաստատել: Ավելի ուշ այստեղ են սկսել գալ նաեւ նրանց հարազատները, այստեղ բացվել է եկեղեցի, հայկական խանութներ: Այստեղ ապրում են նրանք, ովքեր պատերազմներից ու տնտեսական կոլապսներից են փախել՝ ոմանք եկել են Իրանում հեղափոխությունից հետո, մյուսները Լիբանանում քաղաքացիական պատերազմներից են փախել կամ էլ Խորհրդային միության փլուզումից հետո են այստեղ տեղափոխվել: Հիմա այստեղ ապրում են նաեւ նրանք, ովքեր Իրաքում ու Սիրիայում սկսված պատերազմներից են

փախել: «Լոս Անջելեսի հայկական համայնքը կարկատաններով ծածկոց է, որը ստեղծված է գաղթելու տարբեր պատճառներով, ազգային տարբեր փորձերով, ասիմիլացման տարբեր փուլերում գտնվող ներգաղթյալներից»,- գրում է հեղինակը:

Նրանցից են նաեւ Քարդաշյանների գերդաստանը, եւ՝ Տիգրան Չաքարյանը, եւ՝ Քալիֆորնիայի նախկին նահանգապետ Ջորջ Դոքմեջյանը, եւ՝ չինովնիկ Արդի Քասախյանը. «Նրանց միավորում է Դեր Չորի փորձը: Հայ ժողովուրդը մինչեւ այսօր գտնվում է այդ իրադարձությունների ստվերում, դա ձեւավորում ու ստեղծում է նրանց քաղաքականությունը, նույնիսկ Գլենդեյլում»,- համարում է Չուրկերը:

Նրանք բոլորը հիշում են Հայոց ցեղասպանության մասին: «Ինձ համար դա շատ կարեւոր է, քանի որ իմ հոր ընտանիքին սպանել են Ցեղասպանության ժամանակ, եւ երբեք չեմ տեսել իմ պապիկին ու տատիկին, հորեղբորս ու մորաքրոջս: Մենք բոլորս ամերիկացիներ ենք, մենք կանենք ամեն ինչ այս երկրի համար, բայց երբեք չենք մոռանա Ցեղասպանության մասին»,- ասում է Գլենդեյլի բնակիչ Չավան Ղազազյանը:



Ինչպես նշում է հոդվածագիրը՝ Հայոց ցեղասպանությունը ճանաչելու՝ Վաշինգթոնի դժկամության հետ մեկտեղ տեղի հայերը իրենց ազգության պատճառով նաեւ այլ դժվարությունների են բախվում: Օրինակ հայ քաղաքական գործիչների համար դժվար է լինում ընտրվել իրենց ազգանվան պատճառով: Հանձախ նրանց ընդդիմախոսներին աջակցում է այն մասնավոր դպրոցների ասոցացիան, որոնց անդամ դպրոցները Ֆեյթուլահ Գյուլենն է հիմնադրել:

Հայերը Հայոց ցեղասպանության 100 -րդ տարեկիցի կապակցությամբ հիշատակի երթ էին կազմակերպել ու արել ամեն ինչ, որպեսզի ցեղասպանության մասին պատմեն դպրոցներում: Դա չի կարող դուր գալ թուրքական կազմակերպություններին: Արդի Քասախյանը առաջին անգամ դրան բախվել է համալսարանում: Քասախյանը ասում է, որ ինքը հերթական անգամ է առերեսվել նրան, որ դեմ է գնացել թուրքական շահերին: Նահանգի ասամբլեայում ընտրաքաղաքի ժամանակ նրա խոսքով իր ընդդիմախոսները միլիոնավոր դոլարներ են ծախսում: Մասնավորապես շատ գումար է ծախսվել ֆլայերներ բաժանելու համար, որոնցում խոսվում է ընտրությունների ընթացքում ձայների իբրեւ սխալ հաշվարկի մասին, երբ Քասախյանը Գլենդեյլի կերկ է ընտրվել:

Նրանց խոսքով Քալիֆորնիան թուրքամետ ուժերի ուշադրության կենտրոնում է:

Ստամբուլի քաղաքապետի մասնակցությամբ բացվել է հայտնի հայ ճարտարապետների ընտանեկան գերեզմանակոթողը



Ստամբուլի հայկական գերեզմանատանը հոկտեմբերի 1-ին տեղի է ունեցել պոլսահայ հայտնի ճարտարապետներ Պալյանների ընտանեկան գերեզմանակոթողի բացումը: Թուրքական Milliyet-ի փոխանցմամբ՝ Հրաչ եւ Հակոբ Քրմզյան եղբայրների հովանավորությամբ կառուցված Պալյանների գերեզմանակոթողի բացմանը մասնակցել են Պոլսոյ հայոց պատրիարքական ընդհանուր փոխանորդ, արք . Արամ Աթեշյանը, Ստամբուլի քաղաքապետ Քադիր Թոփբաշը, Թուրքիայի մշակույթի եւ տուրիզմի փոխնախարար Օմեր Արըսոյը, հայ համայնքի բազմաթիվ ներկայացուցիչներ եւ լրագրողներ:

Բացման ժամանակ ելույթով հանդես եկած Հրաչ Քրմզյանը հարցրել է, թե արդյոք հնարավոր է Ստամբուլի համար այդքան բան արած Պալյանների անունով փողոց կամ պողոտա կոչել: Այս խոսքերին ներկաները ծափերով են պատասխանել:

Ստամբուլի քաղաքապետ Քադիր Թոփբաշն իր խոսքում շեշտել է, որ Պալյանների ընտանիքի ճարտարապետները 18 եւ 19-րդ դարերում Ստամբուլում ճարտարապետական հրաշք կառույցներ են ստեղծել:

Գերեզմանակոթողը կառուցած Դավիթ Այնալըն նշել է, որ կոթողը կառուցել է Բեշիքթաշում Պալյանների կողմից կառուցված Սուրբ Աստվածածին եկեղեցու խորանի տեսքով:

Նշենք, որ Պալյանների ընտանիքի ճարտարապետների կառուցած պալատները, աշտարակները, եկեղեցիներն ու մզկիթները ներկայում Ստամբուլի զբոսաշրջության այցեքարտերն են համարվում:

Միջազգային

Իսպանիայի Մալագա քաղաքը ճանաչել է Հայոց ցեղասպանությունը

Իսպանիայի Մալագա քաղաքի խորհուրդը միաձայն ընդունել է հայտարարության, որով պաշտոնապես ճանաչում եւ դատապարտում է Հայոց ցեղասպանությունը: ԱԳՆ-ից հայտնում են, որ ընդունված հայտարարությունում նախորդ դարասկզբին տեղի ունեցածը բնորոշվում է որպես հանցագործություն մարդկության դեմ, որի հետևանքով ձեւավորվեց հայկական մեծ սփյուռքը:



Մալագայի քաղաքային խորհուրդն նաեւ իր գորակցությունն է հայտնում աշխարհասփյուռ հայությանը, միաժամանակ նշելով, որ մոտակա ժամանակահատվածում քաղաքապետարանը Մալագայի կենտրոնական զբոսայգում կտեղադրի հայկական խաչքար՝ նվիրված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին:

Լիբիական ցեղը խորհրդարանից պահանջել է հետևել հայերի օրինակին եւ դատի տալ Թուրքիային



Լիբիական ցեղերից մեկը խորհրդարանի խոսնակից պահանջել է բողոք ներկայացնել Թուրքիայի դեմ միջազգային ատյանների դատարան 199 տարի առաջ ցեղի ավազներին եւ շեյխերին դեմ ցեղասպանություն իրականացնելու համար: Այս մասին հայտնում է «Ախբար Լիբիա»-ն:

Ցեղի ներկայացուցիչները խորհրդարանից պահանջում են հետևել հայերի օրինակին եւ բողոք ներկայացնել Թուրքիայի դեմ 19-րդ դարում իրականացրած ցեղասպանության համար, որին զոհ են գնացել ցեղի հազարավոր անդամներ:

Թուրքական պարբերականն Ադրբեջանին «շինծու» է կոչել

Թուրքական Haberola.com լրատվական կայքն Ադրբեջանին «շինծու» է կոչել: Ըստ haqqin.az-ի՝ նման որակման պատճառ է դարձել այն, որ դիվանագիտական, ծառայողական եւ հատուկ անձնագրեր ունեցող Թուրքիայի քաղաքացիները կարող են Իրաք առանց վիզայի մտնել:



«Նույնիսկ շինծու Ադրբեջանը, որը խոսքով մեզ եղբայր է կոչում, թուրքերից վիզա է պահանջում: Քանի դեռ Ադրբեջանը պնդում է այդ ամոթալի որոշման հարցում, Թուրքիայի համար առանց վիզայի երկրների թվին ավելացավ նաև Իրաքը», - գրել է Haberola-ն:

Հասարակական

Քոլոր կողմերից տարածք հանձնելու ուղերձն է հղվում Արցախին և Հայաստանին. Արման Մելիքյան

ՀԱՊԿ գազաթափոցի արդյունքների, ՌԴ արտոգործնախարար Սերգեյ Լավրովի սկանդալային հայտարարության, ԼՂՀ հակամարտության կարգավորման համատեքստում նոր կառավարությունից ակնկալիքների եւ այլ հարցերի շուրջ NEWS.am-ը գրուցել է ԼՂՀ նախկին արտոգործնախարար Արման Մելիքյանի հետ:

Պարոն Մելիքյան, խնդրում եմ ամփոփեք Երևանում կայացած ՀԱՊԿ գազաթափոցը. ի՞նչ արդյունքներով հայկական կողմը դուրս եկավ այդ հանդիպումից:

Դժվարանում եմ ասել, թե ինչ էին ակնկալում գազաթափոցով մասնակիցները, թերևս դա հերթական հանդիպում էր, որ հատուկ հագեցվածություն չուներ: Ինձ համար, թերևս, առավել հետաքրքիր էր երեք հարց՝ արդյոք Արցախի հարցով որևէ խնդիր կարծարծվի, արդյոք կլինի նոր գլխավոր քարտուղարի նշանակում, որը ենթադրվում էր, որ պետք է լինի Հայաստանի ներկայացուցիչը, և երրորդ խնդիրը, որ ավելի տարածաշրջանային, քաղաքական բնույթ ուներ, այն էր, թե արդյոք օրակարգում կներառվեն ներկայումս Ռուսաստան-Արևմուտք խորացող դիմակայության հետ կապված ռազմական կարգի խնդիրներ:

Ըստ էության, վերջին հարցի վերաբերյալ որևէ կոնկրետ հայտարարություն չհնչեց: Արցախի խնդրի առնչությամբ բավական չեզոք հայտարարություն էր, որ պատրաստվեց. պարզապես անդամ պետությունների կողմից հավաստվեց, որ իրենք շարունակելու են մասնակցել, թե Մինսկի խմբի գործողություններին, թե այն որոշումների իրականացմանը, որոնք ընդունվեցին ապրիլյան քառօրյա պատերազմից հետո Վիեննայի և Սանկտ-Պետերբուրգի հանդիպումների ժամանակ: Մեծ հաշվով ես կարծում եմ, որ առայժմ Արցախի հետ կապված գործընթացը մնում է հին տրամաբանության շրջանակում, ինչը մեզ համար բացասական է, և ՀԱՊԿ-ի կողմից արված հայտարարությունը ևս այդ հին տրամաբանության դրսևորումներից մեկն էր, որը հանգում է նրան, որ հարցը պետք է լուծվի մադրիդյան սկզբունքների հիման վրա:

Վերջինիս կիրառման հետևողական ջանքերը, թերևս, որոշակիորեն հանգեցրին ապրիլյան քառօրյա պատերազմի սկզբնավորմանը և այսօր ծավալուն ռազմական գործողությունների վերսկսման վտանգը պահպանվում է, և կարող է աճել, եթե հայկական կողմերը նոր մոտեցումներ չնշակեն և չներդնեն շրջանառության մեջ, չառաջարկեն թե միջնորդներին, թե ադրբեջանցի գործընկերներին, որովհետև հին մոտեցումները լուծումներ, ըստ էության, չեն պարունակում, իսկ պատերազմի վտանգը աճում է:

Եվ ի վերջո անդրադառնալով նրան, թե ինչ ճակատագիր ունեցավ ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի պաշտոնի խնդիրը, տեսանք, որ մարդ չնշանակվեց Հայաստանից, հարցը հետաձգվեց: Ըստ էության, կարելի է ասել, որ այս հանդիպման միակ առարկայական արդյունքն այն էր, որ կազմակերպության նախագահությունը Հայաստանից փոխանցվեց Բելառուսին:

Ինչպե՞ս կմեկնաբանեք Սերգեյ Լավրովի հայտարարությունը, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման համար առանցքային է դարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում առաջընթացը:

Այստեղ մենք թերևս պետք է կապենք մի քանի խնդիրներ կամ դիվիզիաներ, որոնք տեղի ունեցան վերջերս: Անշուշտ, Արցախյան հիմնախնդրի կարգավորման գործընթացը այսօր ընթանում է քառօրյա պատերազմի քաղաքական հետևանքների, տարածքային կորուստների հետևանքների համատեքստում: Տեսնում ենք, որ մի կողմից մադրիդյան սկզբունքները ասում են այն մասին, որ կարգավորման բաղադրյալներից մեկը պետք է լինի տարածքների վերադարձը կամ հանձնումը Ադրբեջանին: Նույն պնդումը պարունակել են կազանյան մոտեցումը, որոնք մշակվել են հենց Ռուսաստանի կողմից, և բոլորովին վերջերս Թուրքիայի արտոգործնախարար Չավուշոյլուն հայտարարեց, որ հայ-թուրքական հարաբերությունների բարելավման հնարավորությունների դուռը կբացվի այն ժամանակ, երբ առաջընթաց կգրանցվի Արցախի հակամարտության կարգավորման գործում և այդ առաջընթացը պետք է լինի առնվազն հինգ շրջանների Ադրբեջանին հանձնելու տեսքով: Երբ պարոն Լավրովը խոսում է այն բանի մասին, որ հայ-թուրքական հարաբերությունների բարելավումը կախված է Ղարաբաղյան կարգավորման գործընթացում գրանցվող առաջընթացի հետ, ըստ էության, կրկին խոսքը տարածքային զիջումների մասին է, և փաստորեն, ստացվում է, որ Ռուսաստանը կքաջալերեր հայ-թուրքական հարաբերություններում առաջընթացը Արցախում հայկական կողմերի տարածք հանձնելու պատրաստակամության դրսևորման դեպքում: Այսինքն՝ մեծ հաշվով շրջանը փակվում է թե Թուրքիայի կողմից, թե Ռուսաստանի կողմից, թե Մինսկի խմբի համանախագահության կողմից նույն ուղերձն է հղվում Արցախին և Հայաստանին, որը փաստացի տարածք հանձնելու կոչ է պարունակում:

Ճիշտ է՝ այստեղ պայմանների որոշակի տարբերություն կա. Եթե Միացյալ Նահագները, Ֆրանսիան խոսում են այն մասին, որ Արցախը պետք է նոր կարգավիճակ ունենա, և այդ կարգավիճակը պետք է հիմնված լինի ինքնորոշման իրավունքի իրացման վրա, ապա Ռուսաստանը վերջերս ավելի շատ խոսում է միջանկյալ, ինչ-որ անորոշ

կարգավիճակի մասին, որը կարող է ցանկացած բան ենթադրել:

Այսօր Ալիևի հայտարարությունն այն մասին, որ իրենք հաջողություն կհամարեն, որ իրենց վերադարձվեն նախկին ԼՂԻՄի շուրջ եղած տարածքները, որ այսօր վերահսկվում են Ստեփանակերտի կողմից, և այդ հաջողությանը հասնելու դեպքում Ադրբեջանը կտրամադրի Արցախին որոշակի աստիճանի ինքնավարություն, անգամ ինքնավար հանրապետության կարգավիճակ, կրկին խոսում է տարածքների հանձնման մասին:

Կարգավիճակի խնդիրն անորոշ է, հայկական կողմի քաղաքական որոշումները լողված են և թույլ են տալիս, որպեսզի թե բանակցային սեղանի շուրջ, թե տարբեր միջազգային հարթակներում խոսվի այն մասին, որ Հայաստանը ագրեսոր պետություն է, և զավթել է Ադրբեջանի տարածքի զգալի մասը և դա, ըստ իս, անընդունելի է:

Մենք հնարավորություն ունենք իրավիճակը շտկելու և փոխելու, մենք հնարավորություն ունենք բանակցային գործընթացը նոր մոտեցումներով հագեցնելու համար և պարտավոր ենք դա անել: Սա անշուշտ գործող իշխանության խնդիրն է և այս առաջարկը ես հենց գործող իշխանությանն էլ հղում եմ:

Այսինքն՝ ըստ Ձեզ՝ Արցախյան հիմնախնդիրն ունի՞ բանակցային ճանապարհով լուծման ներուժ:

Միանշանակորեն: Բայց դրա համար հայկական կողմերը պետք է լքեցին աշխատեն: Ընդ որում Արցախն իր դերն ունի, ՀՀ-ն իր դերն ունի, բայց նրանց գործողություններն ու քայլերը պետք է փոխհամաձայնեցված լինեն, տրամաբանորեն շաղկապված լինեն և, ամենակարևորը, մենք պետք է կարողանանք նախապատրաստել և ներկայացնել միջնորդներին և ադրբեջանական կողմին այնպիսի մոտեցումներ, որոնք և՛ համահունչ լինեն միջազգային իրավունքներին, և՛ չհակասեն մեր արմատական շահերին, և միևնույն ժամանակ ապահովեն արժանապատիվ խաղաղության հեռանկարը թե մեզ համար, թե Ադրբեջանի համար: Իսկ դրա հնարավորությունը կա:

Իսկ Հայաստանը, լինելով ՀԱՊԿ-ի անդամ, արդյո՞ք կկարողանա առաջ քաշել նման մոտեցումներ:

Դա Հայաստանի իշխանությունների պահվածքի արդյունք է, և ես վստահ եմ, որ եթե համապատասխան քաղաքական կամքը դրսևորվի, մենք կկարողանանք համոզիչ փաստարկներ ներկայացնել բոլոր նրանց, ովքեր այսօր կարծես թե հակված չեն լուրջ դիտարկել մեր շահերը: Այս հնարավորությունները կան, սա իրական քաղաքականություն է, և պետք է սովորել այդ քաղաքականությունը վարել: Ընդ որում, այո, լինում են և շիսկեր, բայց այդ շիսկերն էլ են հաշվարկելի, և այդ շիսկերն էլ հնարավոր է ապահովագրել, բայց դրա համար տեղից շարժվել է պետք:

Պարոն Մելիքյան, Ձեր կարծիքով՝ նոր ձևավորված կառավարությունը կկարողանա՞ լուծել Հայաստանի առջև ծառայած խնդիրները:

Վաղ է այդ մասին խոսել, որովհետև ինքնին պաշտոնակալությունները որևէ բանի վկայություն չեն: Խնդիրը նրա մեջ չէ, թե ովքեր են փոխվել, խնդիրը նրա մեջ է, թե ինչի համար են փոխվել: Նորանշանակ վարչապետը բավական լուրջ հայտ ներկայացրեց համակարգային փոփոխություններ իրականացնելու մասով, դրա համար

տրված է առնվազն վեց ամիս ժամանակ: Բայց ակնհայտ է նաև, որ իր թիվ մեկ խնդիրն այսօր պետական բյուջեի ծախսերի կտրուկ կրճատումն է և նոր աշխատանքային մթնոլորտի ձևավորումը՝ այնպիսի մթնոլորտի, որ աշխատողը գնահատվելու է ոչ թե իր ազգակցական կապերի առկայությամբ կամ բացակայության հիման վրա, այլ գործնական որակների հիման վրա, բայց դրանք բոլորը առայժմ խոսքեր են, ես պետք է դեռ տեսնեմ դրանց առարկայական իրականացումը:

Սակայն մենք պետք է հաշվի առնենք նաև հետևյալը՝ արդյոք պարոն Կարապետյանը այս ծրագիրը ներկայացնելուց հետո, ներկայացնելով ավելի երկարաժամկետ ռազմավարական ծրագիր կմնա վարչապետի պաշտոնում ապրիլյան ընտրություններից հետո: Եթե չի մնալու՝ ուրեմն այս ամենը աչքակապություն է, իսկ եթե մնալու է, ապա մենք դրա երաշխիքները պետք է տեսնենք նախապես, որպեսզի հասկանանք, որ այդ մարդուն բերել են գործող իշխանության ընթացիկ պրոբլեմները լուծելու համար, թե բերել են իսկականից երկրում արմատապես իրավիճակը փոխելու համար: Գուցե նա եկել է երկրորդի համար՝ փոխելու համար, բայց քանի որ նա դեռ քաղաքական պատասխանատվություն չի կարող ստանձնել և այդ պատասխանատվությունն ընկած է իշխող կուալիցիայի վրա, ապա եթե նա մնալու է՝ այդ քաղաքական պատասխանատվությունն էլ պետք է ստանձնի. դրա առարկայական դրսևորումը մենք պետք է տեսնենք մինչև ապրիլյան ընտրությունները:

Ինչպե՞ս եք գնահատում Պաշտպանության նախարարությունում արված փոփոխությունները:

Դա թերևս ամենաձանր հարցերից մեկն է: Մեծ հաշվով քաղաքացիական անձին Պաշտպանության նախարարի պաշտոնում նշանակելը որոշակի առումով համահունչ է այս գերատեսչության արևմտյան տեսլականին: Միևնույն ժամանակ, ես չգիտեմ արդյոք ՀԱՊԿ-ի կազմում կա որևէ անդամ պետություն, որի պաշտպանության գերատեսչության նախարարը քաղաքացիական անձ է: Այնտեղ որքան հասկանում եմ բոլորն էլ զինվորականներ են, կադրային զինվորականներ, որոնք երկար ճանապարհ են անցել և հենց ՀԱՊԿ-ի շրջանակում մեր նորանշանակ նախարարի հանդեպ կարող է լինել շատ որոշակի վերապահումով վերաբերմունք, այսինքն զինվորականները այդ պաշտոնում նշանակված քաղաքացիական անձին կարող են ոչ լիարժեք գործընկեր դիտարկել: Իսկ քանի դեռ մենք ՀԱՊԿ-ի անդամ պետություն ենք, ռազմական ոլորտը այդ առումով ընդհանուր ինտեգրված տարածքի մասն է ՀԱՊԿ-ի մասով: Չգիտեմ որքանով է հաշվարկը ճիշտ եղել, երբ պարոն Սարգսյանի նշանակման մասին որոշում կայացվեց: Գուցե կան առավելություններ ևս, բայց դա ինքը պետք է իր աշխատանքով ցույց տա և ապացուցի, որ այդ նշանակումն իրավացիորեն է արված: Ամեն դեպքում մենք պետք է հստակ տեսնենք:

Վարչապետը տնտեսական բյուջով կարծես առանձնացված է հիմնական քաղաքական և արտաքին քաղաքական նշանակություն ունեցող երկու գերատեսչություններից, այսինքն ԱԳՆ և ՊՆ-ը այդ տեսանկյունից, որքան ես եմ հասկանում, վարչապետի պատասխանատվության գոտուց դուրս է, իսկ դա նշանակում է, որ միասնական ծրագիր կազմելը նրա համար բարդ կլինի: Դրա համար եմ ասում նա պետք է կարողանա ստանձնել ընդհանուր քաղաքական

պատասխանատվությունը ողջ գործունեության նկատմամբ, այդ թվում նաև պաշտպանության և արտաքին գործերի ոլորտների նկատմամբ: Առանց դրա տնտեսական բարեփոխումների ծրագրերը լուրջ արդյունք տալ չեն կարող:

Լրագրողների 8-րդ համահայկական համաժողովի ծրագիրը

20 հոկտեմբերի, հինգշաբթի

10:00-10:40

Մասնակիցների գրանցում (ՀՀ սփյուռքի նախարարություն, Վ.Սարգսյան 3, 9-րդ հարկ)

10:40-11:00

«Մրբուհի Տյուսաբ» նամականիշի հանդիսավոր մարում
11:00-11:40

Լրագրողների համահայկական 8-րդ համաժողովի հանդիսավոր բացում

- ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի բացման խոսքը
- ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի ուղերձը
- Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի օրհնությունը

11:40-12:30

Առաջին նիստ

Թեմա՝ Համահայկական տեղեկատվական միասնական ցանցի ձևավորման կառուցակարգերը և լրատվամիջոցների համագործակցության ուղիները ճգնաժամային պայմաններում Նիստավարներ - Աստղիկ Գևորգյան (Հայաստանի ժուռնալիստների միության նախագահ), Հակոբ Ավետիսյան («Ազգ» օրաթերթի գլխավոր խմբագիր), Վահագն Գարագաշյան («Հորիզոն» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր), Սևակ Հակոբյան («Չարթունք» օրաթերթի գլխավոր խմբագիր), Արարատ Ղուկասյան («Հայրենիք» շաբաթաթերթի խմբագիր)

Ծահան Գանտահարյան - («Ազդակ» օրաթերթի գլխավոր խմբագիր, Լիբանան) - «Ճգնաժամային տեղեկատվությունը և հայկական լրատվադաշտը»

Տիգրան Հարությունյան - («Նոյան տապան» մեդիա հոլդինգի տնօրեն, Հայաստան) - «Համահայկական տեղեկատվական ցանցի ձևավորման փուլերը և զարգացման առանձնահատկությունները արդի պայմաններում»

Աննա Կարապետյան - («Օրեր» ամսագրի թղթակից, Չեխիա) - «Տեղեկատվական անվտանգության մարտահրավերների հրատապ խնդիրներ»

Նադա Մարտիրոսյան - (ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան, Հայաստան) - «Հայկական տեղեկատվական դաշտը. խնդիրներ և մարտահրավերներ»

Արամ Անանյան - («Արմենպրես» լրատվական գործակալության տնօրեն) - «Լրատվության ապագան: Ժամանակակից լրատվական միտումները՝ համահայկական տեղեկատվական միասնական ցանցի ձևավորման համատեքստում»

Այլ գեկույցներ

12:30-13:20

Ճաշ

13:30-15:00

Հանդիպում ՀՀ արտաքին գործերի նախարար Էդուարդ Նալբանդյանի հետ (ՀՀ արտաքին գործերի նախարարություն, 1-ին հարկ, 104 սենյակ)

15:20-17:20

Երրորդ նիստ

Թեմա՝ ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների և սփյուռքային կառույցների համագործակցության ուղիները Նիստավարներ - ՀՀ սփյուռքի նախարարի տեղակալ Սերժ Մրապիտոյան, Նադա Մարտիրոսյան (ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան), Պայծիկ Գալաշյան (Լրագրող, հրապարակախոս), Չավեն Թորիկյան («Հայրենիք» շաբաթաթերթի

գլխավոր խմբագիր), Ավետիս Կիտանյան («Վանա Ջայն» ռադիոյի տնօրեն)

Արտյոմ Չերնամորյան («Բարայելահայեր» թերթի գլխավոր խմբագիր, Իսրայել) - «Հայաստանի և Իսրայելի դիվանագիտական անկայուն հարաբերություններն ու Իսրայելի հայկական կազմակերպությունների աջակցությունը հարաբերությունների զարգացման գործում»

Սաիրա Օհանյան («Հայկական տեղեկատվական կենտրոն» կայքի թղթակից, Ռուսաստան) - «ՀՀ դիվանագիտությունը, սփյուռքյան կառույցներ և համագործակցության ուղիները և համշենահայերը»

Հակոբ Բալայան - (Լրագրող, հրապարակախոս, Լիբանան) - «Անկախ և հետախուզական մամուլ»

Աստղիկ Ավետիսյան - («Հայկական Փի Ար ասոցիացիա» գիտատեղեկատվական ՀԿ նախագահ, Հայաստան) - «ՀՀ խմբի ձևավորման բաղադրիչներն օտարալեզու ՉԼՄ-ներում»

Այլ գեկույցներ

17:20-17:40

Քննարկում

17:40

Այց ՀՀ կառավարության № 1 մասնաշենք

18:30

Սփյուռքյան լրատվամիջոցների ղեկավարների հանդիպումը ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի հետ

21 հոկտեմբեր, ուրբաթ, Երևան

9:00 - 11:00

Այցելություն Ծիծեռնակաբերդի հուշահամալիր և Եռաբլուր

10:30-11:00

Մուրճ

11:00-13:00

Երրորդ նիստ

Թեմա՝ Սփյուռքի ներուժի ներգրավումը ՀՀ պետականաշինության գործում

Նիստավարներ - Արամ Անանյան («Արմենպրես» լրատվական գործակալության գործադիր տնօրեն), Հակոբ Ավետիսյան («Ազգ» օրաթերթի գլխավոր խմբագիր), Ծահան Գանտահարյան («Ազդակ» օրաթերթի գլխավոր խմբագիր), Սարգիս Յեղեյան («Յեղեյան» հեռուստաընկերության տնօրեն), Սիմոն Այնեյան («Գիբրահայեր» լրատվական կայքի գլխավոր խմբագիր)

Վահագն Գարագաշյան - («Հորիզոն» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր, Կանադա) - «Սփյուռքի ուժացման ու ձուլման հոլովոյթը»

Աննա Գիվարգիսյան - («Ժամ» ամսագրի գլխավոր խմբագիր, Ռուսաստան) - «Հայ պարբերական մամուլի դերը օտար միջավայրում ազգային և մշակութային արժեքների տարածման գործում»

Ռուբիկ Սարգսյան - («Համայնք» լրատվական ցանցի պատասխանատու, Իրան) - «Պետություն հասկացողությունը, սփյուռքի պոտենցիալ ուժի օգտագործման հնարավորությունը և առաջարկներ այդ ներուժի օգտագործման մեխանիզմի կապակցությամբ»

Տոնիկ Տոնապետյան - («Ազդակ» օրաթերթի թղթակից, Լիբանան) - «Սփյուռքի ներուժի ներգրավումը ՀՀ պետականաշինության գործում»

Տիգրան Փաշաբեկյան - («Լուսավոր Ավետիս» կայքի թղթակից, Փրանսիա) - «Հայաստան-Արցախ-Սփյուռք՝ 25-ամյա համագործակցության հանրագումարները հետագա անելիքները՝ Մերձավոր Արևելքում և հարակից տարածաշրջանում առկա մարտահրավերների պայմաններում»

Չավեն Գրիգորյան - («Նոր Աշխարհ» թերթի խմբագիր, Հունաստան) - «Հայաստանի և Արցախի անկախության 25-րդ տարեդարձի առթիվ. Հայրենի հողը, Հայրենիքը և Պետականությունը»

Այլ գեկույցներ

13:00-14:00

Ճաշ

14:00-15:00

Տեղեկատվական անվտանգության խնդիրներն արտակարգ իրավիճակներում (ինտերակտիվ քննարկում)

Փորձագետներ - Արման Սաղաթեյան, Սամվել Մարտիրոսյան, Կարեն Վրթանեսյան, Միքայել Յալանուզյան, Անժելա Էլիբեկովա
15:30-17:00

Չորրորդ նիստ

Թեմա՝ Հեռուստատեսության, ռադիոյի և էլեկտրոնային մամուլի համագործակցության հեռանկարները

Նիստավարներ - Տիգրան Հարությունյան («Նոյան Տապան» լրատվական գործակալության տնօրեն), Տիգրան Թավադյան («Երկրամաս» թերթի գլխավոր խմբագիր), Աննա Կարապետյան («Օրեր» ամսագրի թղթակից), Համբիկ Մարտիրոսյան («Խոսունակ» ամսագրի գլխավոր խմբագիր), Արտո Դավթյան («Արձագանք» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր)

Արարատ Ղուկասյան - («Հայրենիք» շաբաթաթերթի հիմնադիր-խմբագիր, Իսպանիա) - «Հայ ազգաբնակչության ուժացման խնդիրը Սփյուռքում»

Նաիրի Հոխիկյան - («Կենտրոն» հեռուստաընկերության լրագրող) - «Լրատվամիջոցների դերը 2016 թվականի ապրիլյան պատերազմի առաջնագծում»

Հակոբ Ավետիսյան - («Ազգ» օրաթերթի գլխավոր խմբագիր) - «Իսկական ժամանակն է պրոֆեսիոնալ լրագրության»

Միլվա Կարավարտանյան - («Ազգակ» օրաթերթի թղթակից, Լիբանան) - «Լրատվական համահայկական գործելաոճի հիմնահարցեր»

Արտեմ Կարայան - («Հայկական տեղեկատու» գլխավոր խմբագիր, Ուկրաինա) - «Հայկական լրատու հանդեսի փորձը սփյուռքյան կառույցների հետ համագործակցության ոլորտում»

Այլ գեկույցներ

17:30-18:00

Քննարկում

22 հոկտեմբեր, շաբաթ

9:00

Մեկնում Արցախ (Ստ. Ծահուճյանի անվան հրապարակից)

17:00-18:00

Տեղավորում հյուրանոցներում

18:30

Հանդիպում ԼՂՀ Նախագահ Բակո Սահակյանի և վարչապետ

Արա Հարությունյանի հետ

20:00

Հանդիսավոր ընթրիք

23 հոկտեմբեր, կիրակի, Ստեփանակերտ

9:30-11:00

Հինգերորդ նիստ

Թեմա՝ Հայկական սփյուռքի գորակցությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային ճանաչման գործընթացին

Նիստավարներ - Կիմ Գաբրիելյան (Արցախի ժուռնալիստների միության նախագահ), Դավիթ Հակոբյան («Երկիր մեդիա» հեռուստաընկերության գործադիր տնօրեն), Ալեքս Ավանեսյան (Հունգարիայի հայկական ռադիոժամի տնօրեն), Մովսես Քեչիշյան («Արաքս» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր), Ալեքս Ավանեսյան (Հունգարիայի հայկական ռադիոժամի տնօրեն)

Արմեն Հարեյան - (Լրագրող, ԱՄՆ) - «Լրագրողը քարոզիչ է - Եթե մենք մտել ենք մարդկային միտքը շարժելու գործի մեջ, ուրեմն պատասխանատու ենք դրա հետևանքի համար»

Վահրամ Պողոսյան - («Արցախայրես» լրատվական գործակալության տնօրեն, Արցախ) - «Էլեկտրոնային մամուլի կայացումն Արցախում և համահայկական լրատվադաշտի հետ համագործակցության հեռանկարները»

Համբիկ Մարտիրոսյան - («Խոսունակ» ամսագրի գլխավոր խմբագիր, Լիբանան) - «Արդեօ՞ք ազգովին հասած ենք եզրագիծ...»

արդեօ՞ք պիտի շարունակենք «նահանջը առանց երգի», թե՛ պիտի հետապնդենք որոնել նոր դեղագիր...»

Այլ գեկույցներ

11:00-11:30

Սուրճի ընդմիջում

11:30-13:30

Հինգերորդ նիստի շարունակություն

Այլ գեկույցներ

13:30-15:00

Ճաշ

15:00-17:30

Վեցերորդ նիստ

Թեմա՝ Հայաստանի և Արցախի հանրապետությունների պաշտպանության համակարգի հետ կապված խնդիրների լուսաբանումը ՉԼՄ-ում

Նիստավարներ՝ Վահրամ Պողոսյան («Արցախայրես» լրատվական գործակալության տնօրեն), Չավեն Գրիգորյան («Նոր աշխարհ» թերթի գլխավոր խմբագիր), Կարո Արսլանյան («Ազդարար» թերթի գլխավոր խմբագիր), Վան Բայբուրթյան («Վրաստան» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր), Գեորգի Սահակով («Դեպի ապագա» թերթի գլխավոր խմբագիր)

Պայծիկ Գալաշյան («Արմինյա միտք սփերթեյթթ» շաբաթաթերթի թղթակից, ԱՄՆ) - «Ազգային մարտահրաւերները դիմագրաւել հայավայել մարտունակութեամբ. Փորձ՝ իրականի պայծառատեսութեան մասին»

Էդիկ Բաղդասարյան («Լույս» ամսագրի գլխավոր խմբագիր, Իրան) - «Հայկական Հարցի ներկա խնդիրները»

Արա Վանյան (Արցախի հանրային հեռուստատեսության խորհրդի անդամ, Արցախ) - «Արցախի հանրային հեռուստատեսություն. նոր հրամայականներ, նոր մարտահրաւերներ»

Միքայել Հաջյան (Լրագրող, հրապարակախոս, Արցախ) - «Արցախյան մամուլը ներքին և արտաքին քարոզչության համատեքստում»

Այլ գեկույցներ

17:30-18:00

Քննարկում

18:00-18:40

Համաժողովի փակում, արդյունքների ամփոփում:

Հայտարարության ընդունում

19:00

Ընթրիք

24 հոկտեմբեր, երկուշաբթի, Ստեփանակերտ

8:00

Մեկնում Երևան

18:00

Սփյուռքյան լրատվամիջոցների ղեկավարների հանդիպումը

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի հետ

ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Արարական Միացյալ Էմիրություններ

Շաքե Մանկասարեան

ԱՅԳ ռադիոյի հիմնադիր

radioayk@gmail.com

Հրաչ Բալասահակյան

«Ազատ Հայ» կայքի հիմնադիր-խմբագիր

hrach@emirates.net.ae

Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Չավեն Թորիկյան

«Արմինյըն Ուիքլի» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր

armenianweekly@hairenik.com

Ռուբեն Չանբազյան

«Արմինյըն Ուիքլի» շաբաթաթերթի թղթակից

armenianweekly@hairenik.com

Պայծիկ Գալաջյան

«Արմինյուն միրըր սփերթեյթոր» շաբաթաթերթի թղթակից
baydzigk@gmail.com

Ռուզաննա Ավագյան

«Կալիֆոռնիա կուրիեր» շաբաթաթերթի հայաստանյան թղթակից
ruzavagyan@gmail.com

Աբո Պողիկյան

«Ասպարեզ» օրաթերթի գլխավոր խմբագիր
editor@asbarez.com

Արա Խաչատրյան

«Ասպարեզ» օրաթերթի թղթակից
english@asbarez.com

Խաժակ Մկրտչյան

Լրագրող, ծրագրավորող
khajag@hotmail.com

Արմեն Հարեյան

Լրագրող, հրապարակախոս
hareyan@emaxhealth.com

Հմայակ Հովհաննիսյան

«Նոյրան տապան» լրատվական գործակալության ամերիկյան
թղթակից

hamayag@yahoo.com

Մարիլինդա Պոզյան-Կրուկանկին

«Արմինյուն միրըր սփերթեյթոր» շաբաթաթերթի թղթակից
marylyndac@gmail.com

Ավատրախ

Մարգիտ Յեդելյան

«Յեդելյան» հեռուստաընկերության տնօրեն
sarkis@yedelian.com

Ավատրիա

Հայր Պողոս Գոճանյան

«Հանդես» ամսագրի գլխավոր խմբագիր
p.kodjanian@hotmail.com

Արզենտինա

Էդուարդո Նեստոր Բալյան

«Նոր դարաշրջան» թերթի գլխավոր խմբագիր
periodiconuevaepoca@gmail.com

Էդուարդո Մարտին Բալյան

«Նոր դարաշրջան» թերթի թղթակից
periodiconuevaepoca@gmail.com

Օսկար Լոմբոմբյան

«Հայկական ինտերացիա» ռադիոյի ղեկավար
interarmenia@hotmail.com

Բրազիլիա

Մարգիտ Կարամեկյան

Հայկական ռադիոժամի հիմնադիր տնօրեն
atendimento@armeniaeterna.com.br

Թուրքիա

Արա Գոչունյան

«Ժամանակ» օրաթերթի գլխավոր խմբագիր
jamanak@jamanak.com

Մաքրուհի Հակոբյան

«Նոր Մարմարա» օրաթերթի թղթակից
info@normarmara.com

Իսպանիա

Արարատ Դուկասյան

«Հայրենիք» շաբաթաթերթի հիմնադիր - խմբագիր
ararat_asociac@mail.ru

Իսրայել

Արտյոմ Չերնամորյան

«Իսրայելահայեր» թերթի գլխավոր խմբագիր
artiomhay@gmail.com

Իրան

Մովսես Քեշիշյան

«Արաքս» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր
arax_am@dpimail.net

Էդիկ Բաղդասարյան

«Լույս» ամսագրի գլխավոր խմբագիր
edbagh@yahoo.com

Էմմա Բեգիջանյան

«Լույս» ամսագրի թղթակից
edbagh@yahoo.com

Թամար Փանոսյան

«Ապագա» հանդեսի տնօրեն
apaga98@hotmail.com

Ռուբիկ Սարգսյան

«Համայնք» լրատվական ցանցի պատասխանատու
sardarianrubik@yahoo.com

Մելանյա Ղազարյան

«Համայնք» լրատվական ցանցի թղթակից
sardarianrubik@yahoo.com

Դերենիկ Մելիքյան

«Ալիք» օրաթերթի գլխավոր խմբագիր
alikh@mail@hyenet.ir

Արմինե Էլիագյան

«Ալիք» օրաթերթի թղթակից
armineheliazyan@yahoo.com

Արմինե Առաքելյան

«Պայման» լրատվական կայքի գլխավոր խմբագիր
info@paymanonline.com

Լիբանան

Շահան Գանտահարյան

«Ազդակ» օրաթերթի գլխավոր խմբագիր
info@aztagdaily.com

Միրվա Կարավարդանյան

«Ազդակ» օրաթերթի թղթակից
silvakaravartanian@live.com

Տոնիկ Տոնապետյան

«Ազդակ» օրաթերթի թղթակից
info@aztagdaily.com

Հակոբ Բալյան

Լրագրող, հրապարակախոս
hagop.balian@free.fr

Մարի Լուիզ Պալյան

Լրագրող, հրապարակախոս
hagop.balian@free.fr

Սեակ Հակոբյան

«Չարթոնք» օրաթերթի գլխավոր խմբագիր
hagopiansevag@gmail.com

Հայր Մեգուհ Կարապետյան

«Մասիս» ամսագրի թղթակից
headomassis@hotmail.com

Ահարոն Ծխրամյան

«Էրեբունի» լրատվական կայքի գլխավոր խմբագիր
aharonshekerdemia@gmail.com

Ավետիս Կիտանյան

«Վանա ձայն» ռադիոյի տնօրեն
info@voiceofvan.net

Բաֆֆի Դեմիրջյան

Լիբանանի Ազգային Առաջնորդարան
demirdjian.raffi@gmail.com

Ժիրայր Գանիեյան

«Կամար» հանդեսի գլխավոր խմբագիր
nemras@gmail.com

Անի Թորանյան

«Արարատ» օրաթերթի թղթակից

Համբիկ Մարտիրոսյան

«Խոսնակ» ամսագրի գլխավոր խմբագիր
hampigwardirossian@hotmail.com

Կանադա

Վահագն Գարագաշյան

«Հորիզոն» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր
editor@horizonweekly.ca

Նորա Յակոբեան

«Հորիզոն» շաբաթաթերթի թղթակից
nyacoubian@aol.com

Արիս Բաբիկյան

Լրագրող
aris.babikian.1@gmail.com

Սալբի Մադադեան

«Թորոնթոնիայ», «Եռագոյն» ամսագրերի թղթակից
ssalpy@hotmail.com

Կիպրոս

Միմոն Այնեջյան

«Գիրքահայեր» կայքի գլխավոր խմբագիր
simon@cytanet.com.cy

Արտո Գավթյան

«Արձագանք» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր
editor@artsakank.com.cy

Հունաստան

Չավեն Գրիգորյան

«Նոր Աշխարհ» թերթի խմբագիր
yeranouhig@gmail.com

Տիգրան Աբասեան

«Հայ կեանք» թերթի խմբագիր
dabassian@gmail.com

Խաչատուր Ադամեան

«Հայ կեանք» թերթի խմբագիր
atamiankhach@yahoo.gr

Մարգիս Գույունճյան

«Ազատ օր» օրաթերթի թղթակից
info@azator.gr

Հունգարիա

Ալեքս Ավանեսյան

Հունգարիայի հայկական ռադիոժամի տնօրեն
info@ararat.hu

Մոսի Մուսանյան

«Արմենիա» ամսագրի խմբագիր
kornetas@chello.hu

Մեծ Բրիտանիա

Հասմիկ Մովսիսյան

«MusicofArmenia» կայքի հիմնադիր-տնօրեն
info@musicofarmenia.com

Կարինե Ալեքսանյան

«Armenian Voice» ամսագրի թղթակից
alexanian@btinternet.com

Շվեյցարիա

Մարալ-Միմսար Թոմպայան

«Արձագանք» պարբերականի գլխավոր խմբագիր
artzakank@armenian.ch

Արա Միմսար

«Արձագանք» պարբերականի թղթակից
artzakank@armenian.ch

Չեխիա

Աննա Կարապետյան

«Օրեր» լրատվական կայքի խմբագիր
annaka@volny.cz

Ռումինիա

Մդեն Գարագաշյան

Լրագրող, թարգմանիչ
madeleinekaracasian@yahoo.com

Ռուսաստան

Աննա Գիվարգիզյան

«Ժամ» ամսագրի գլխավոր խմբագիր
zham@zham.ru

Անահիտ Խաչատրյան

«Օստրովոկ Նաիրի»
anaitarevik@mail.ru

Տիգրան Թավադյան

«Երկրամաս» թերթի գլխավոր խմբագիր
info@yerkramas.org

Օլեգ Մանվելյան

«Երկրամաս» թերթի ֆոտո-թղթակից
info@yerkramas.org

Սևոն Հովսեփյան

«Առազաստ» ամսագրի գլխավոր խմբագիր
oslevon@yandex.ru

Ֆելիքս Գևորգյան

«Նաիրի վ Կալինինգրադե» ամսաթերթի գլխավոր խմբագիր
armcentr-kld@mail.ru

Վադիմ Հարությունով

Լրագրող, բլոգեր
vadar@mail.ru

Դավիթ Բալայան

«Հյուսիսսփայլ» կայքի գլխավոր խմբագիր
husisapail@yahoo.com

Լիանա Չախարյան

«Կամուրջ» ամսագրի գլխավոր խմբագիր
kamurdj@mail.ru

Հասմիկ Գրիգորյան

«Հայաստանյայց եկեղեցի» ամսաթերթի գլխավոր խմբագիր
armchurch@gmail.com

Նատալյա Օհանովա

«Նոնվ կովկեզ» թերթի հայաստանյան թղթակից
natalya.oganova@mail.ru

Մաիդա Օհանյան

«Հայկական տեղեկատվական կենտրոն» կայքի թղթակից
arminfocenter@mail.ru

Աշոտ Գարեգինյան

«Ռուսաստան-Հայաստան» լրատվական կայքի հայաստանյան թղթակից

Սիրիա

Մարիա Գաբրիելյան

«Գանձասար» շաբաթաթերթի թղթակից
kantsasarweekly@hotmail.com

Վատիկան

Ռոբերտ Աթոթյան

«Վատիկան» ռադիոյի հայկական բաժնի տնօրեն
attarianro@gmail.com

Վրաստան

Էդուարդ Այվազյան

«Ախալցխայի վերածնունդ» կայքի հիմնադիր
info@akhaltskha.net

Վալերի Հունանյանց

Հույս Ամսագիր

«ArmenianArtHall» Էլեկտրոնային թերթի գլխավոր խմբագիր
vunanyants@mail.ru

Արտակ Գաբրիելյան

«A-TV 12» հեռուստաընկերության գլխավոր տնօրեն
news@a-info.org

Արթուր Հովհաննիսյան

«Արթուր» Էլեկտրոնային թերթի գլխավոր խմբագիր
minority_adjara@mail.ru

Մուսաննա Խաչատրյան

Լրագրող
hayartun@armenianchurch.ge

Վան Բայբուրդյան

«Վրաստան» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր
vrastan@caucasus.net

Արտավազ Սարեգյան

«Համշեն» պարբերաթերթի հիմնադիր-խմբագիր
abk-hamshen@yandex.ru

Ուզբեկասան

Գեորգի Սահակով

«Դեպի ապագա» թերթի գլխավոր խմբագիր
armcentuz@mail.ru

Ուկրաինա

Արտեմ Կարայան

«Հայկական տեղեկատու» թերթի խմբագրության ղեկավար
amctv@ukr.net

Արամ Մալամանյան

«Հայկական տեղեկատու» թերթի թղթակից
amctv@ukr.net

Ժենյա Ծերունյան

«Արագած» ամսագրի գլխավոր խմբագիր
ara@golos.com.ua

Քուվեյթ

Կարո Արսլանյան

«Ազդարար» թերթի գլխավոր խմբագիր
arslanian_g@hotmail.com

Ֆրանսիա

Չառա Նազարյան

«Նուվի դ'Արմենի» ամսագրի հայաստանյան թղթակից
nzara@yahoo.com

Տիգրան Փաշաբեգյան

«Լուսավոր Ավետիս» կայքի թղթակից
lousavor.avedis@gmail.com

Հայաստանի Հանրապետություն

Ռուբեն Ջաղինյան

Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահ

info@cptvrc.am

Վլադիմիր Հակոբյան

ՀՀ Նախագահի մամուլի քարտուղար

Շուշան Սարգսյան

ՀՀ վարչապետի խորհրդական

Կոդյուն Առաքելյան

Հայաստանի Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի անդամ

Դավիթ Հակոբյան

«Երկիր մեդիա» հեռուստաընկերության գործադիր տնօրեն
tvcompany@yerkirmedia.am

Արամ Ղազարյան

«Ար» հեռուստաընկերության տնօրեն
artv@artv.am

Արթուր Ղանդիսյան

Շիրակի հանրային հեռուստաընկերության տնօրեն

Արման Սաղաթեյան

Հայաստանի Հանրային ռադիոյի տնօրեն
info@armradio.am

Լիլիթ Մարտիրոսյան

Հանրային Հեռուստաընկերություն

Մարատ Օրդյան

Հանրային Հեռուստաընկերություն

Նատալյա Սարջանյան

Հանրային Հեռուստաընկերություն

Գևորգ Ալթունյան

Առաջին լրատվականի տնօրեն
gevorg.altunyan@armtv.com

Նվեր Մնացականյան

Հայաստանի Հանրային հեռուստաընկերության մեկնաբան
adclina.zargaryab@armtv.com

Եվա Մեհրաբյան

ԱԲ հեռուստաընկերության լրատվական ծառայության պետ
azdarar@artv.am

Գեղամ Մանուկյան

«Երկիր Մեդիա» հեռուստաընկերության լրատվական ծրագրի տնօրեն

news@yerkirmedia.am

Շավարշ Գևորգյան

«Հայկական երկրորդ հեռուստաալիքի» լրատվական ծրագրի տնօրեն

shavarsh@tv.am

Միրան Հակոբյան

«Արարատ» հեռուստաընկերության լուրերի տնօրեն
hakobyan1984@gmail.com

Արփեն Մովսիսյան

Հեռուստալրագրող
kvahan@list.ru

Նաիրի Հոխիկյան

«Կենտրոն» հեռուստաընկերության լրագրող

Չուլիետա Մարտիրոսյան

«Ավանգարդ» թերթի գլխավոր խմբագիր

avangard-1@rambler.ru

Մագդալինա Չատիկյան

«Голос Армении» թերթի թղթակից

gonline@arminco.com

Փիրուզա Մելիքսեթյան

«Իրատես դե ֆակտո» թերթի գլխավոր խմբագիր

Սթաֆիկ Սեյրանյան

«168 Ժամ» թերթի գլխավոր խմբագիր

ssevranyan@yahoo.com

Մենուա Հարությունյան

«Դե ֆակտո» ամսագրի գլխավոր խմբագիր

info@slaq.am

Թագուհի Թովմասյան

«Ժողովուրդ» օրաթերթի գլխավոր խմբագիր

info.zhoghovurd@gmail.com

Սերգեյ Վարդանյան

«Չայն Համշենական» ամսաթերթի գլխավոր խմբագիր

dzaynhamshenakan@yahoo.com

Նաղաշ Մարտիրոսյան

ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի ղեկան

n.martirosyan@ysu.am

Աստղիկ Գևորգյան

Հայաստանի ժուռնալիստների միության նախագահ

domjur3@rambler.ru

Գագիկ Հարությունյան

Նորավանք գիտակրթական հիմնադրամի տնօրեն

gagik@noravank.am

Անժելա Էլիբեկովա

«Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ

info@iprc.am

Տիգրան Աբրահամյան

Կառավարության աշխատակազմի վերլուծական-տեղեկատվական կենտրոնի տնօրեն

iac@np.am

Մհեր Հովհաննիսյան

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի փոխտնօրեն

mh@armin.am

Արամ Անանյան

«Արմենայրես» լրատվական գործակալության տնօրեն

aram.ananyan@gmail.com

Տիգրան Հարությունյան

Լրատվամիջոցների համահայկական ընկերակցության ղեկավար

tigranh@nt.am

Էմանուիլ Մկրտչյան

«Արմինֆո» Լրատվական գործակալության տնօրեն

news@arminfo.am

Բորիս Նավասարդյան

Երևանի մամուլի ակումբի նախագահ

boris@yps.am

Աստղիկ Ավետիսյան

Հայկական PR ասոցիացիայի տնօրեն

a_astghik@yahoo.com

Նունե Սարգսյան

Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի տնօրեն

nsarkissian@mediainitiatives.am

Մելիք Բաղդասարյան

«Փոտոլուր» լրատվական գործակալության տնօրեն

photorur@gmail.com

Արա Թադևոսյան

«Մեդիամաքս» Գործակալության տնօրեն

director@mediamax.am

Սամվել Մարտիրոսյան

Տեղեկատվական ոլորտի փորձագետ

Անահիտ Ոսկանյան

Panorama.am կայքի գլխավոր խմբագիր

editor@panorama.am

Մարիա Ասատրյան

news.am կայքի լրագրող

editor@news.am

Նարինե Գումանյան

«Եռագոյն» լրատվական գործակալության գլխավոր խմբագիր

Սասուն Խաչատրյան

Tert.am կայքի գլխավոր խմբագիր

editor@tert.am

Ազնես Խամոյան

Yerkir.am կայքի գլխավոր խմբագիր

news@yerkir.am

Էդիկ Բաղդասարյան

Hetq.am լրատվական գործակալության գլխավոր խմբագիր

Սագո Արեյան

«Արևելք» կայքի գլխավոր խմբագիր

sakoarian@gmail.com

Արթուր Նավասարդյան

Սփյուռքագետ

Խոսրով Խլղաթյան

«Գեղամա» թերթի գլխավոր խմբագիր

Ֆահրադ Ափուջանյան

Սպիտակի «Լուսարձակ» թերթի գլխավոր խմբագիր

Արցախի Հանրապետություն

Կիմ Գաբրիելյան

Արցախի ժուռնալիստների միության նախագահ

Լեոնիդ Մարտիրոսյան

«Ազատ Արցախ» հանրապետական թերթի գլխավոր խմբագիր

Նորել Գասպարյան

Արցախի հանրային հեռուստատեսության խորհրդի նախագահ

Արա Վանյան

Արցախի հանրային հեռուստատեսության խորհրդի անդամ,

ԱրժՄ վարչության անդամ

Նվարդ Ալեքսանյան

Արցախի հանրային ռադիոյի գլխավոր խմբագիր

Վահրամ Պողոսյան

«Արցախայրես» լրատվական գործակալության տնօրեն

Միքայել Հաջյան

Լրագրող, հրապարակախոս

Արիս Գրիգորյան

Արցախի ժուռնալիստների միության վարչության անդամ

Սվետլանա Խաչատրյան

«Լուսարար» թերթի գլխավոր խմբագիր

Սոֆյա Սարգսյան

«Ստեփանակերտ» թերթի գլխավոր խմբագիր

Հայկական Հարցի ներկա խնդիրները

Դր. Էդիկ Բաղդասարյան
Լույս և Ապագա թերթերի
գլխավոր խմբագիր

Հայկական հարցի էությունն անցյալում էլ, այժմ էլ նույնն է. հայ ժողովրդի իր հայրենիքում՝ Հայկական լեռնաշխարհում անկախ և ազատ ապրելու քաղաքական ու տարածքային պայմանների ստեղծում: Հայկական հարցի լուծումը կարող է լինել միայն մեկը՝ հայոց լիարժեք պետականության վերականգնում պատմական Հայաստանի առնվազն այնպիսի ընդարձակ մի հողատարածքում, որտեղ հայոց քաղաքակրթության երկարատև անվտանգ գոյությունը երաշխավորված կլինի:

Այլ կերպ ասած՝ Հայկական հարցը հայ ժողովրդի անվտանգության հարցն է, որը պահանջում է երկու նախադրյալի ապահովում. առաջին՝ հայկական լիարժեք և ամուր պետականության ստեղծում, երկրորդ՝ այդ պետականության անվտանգությունն ու կենսունակությունն ամրագրող հողային երաշխիքներ: Ընդ որում՝ մի նախադրյալի ապահովումն առանց մյուսի անիրագործելի է. ո՛չ հայկական պետությունն է ի վիճակի գոյատևել նախկին Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության 29.800 կմ² խիստ խոցելի, իր անպաշտպանունակությամբ ինքնըստինքյան «ագրեսիա հրավիրող» սահմաններում, ո՛չ էլ հայկական պետության բացակայությամբ հնարավոր կլինի հայ ժողովրդի գոյությունն առհասարակ:

Հայ ազգի և հայկական քաղաքակրթության գոյությունը վտանգված էին նախկինում, վտանգված են և այսօր, որովհետև չլուծված է մնում տարածքային հողային խնդիրը: Հետխորհրդային ժամանակաշրջանում Հայաստանը դարձյալ հայտնվել է «լինե՞լ, թե՞ չլինել»-ի դրույթի մեջ: Խորհրդային Միության փլուզման գործընթացին զուգընթաց, հայության դեմ թուրքիայի և

Մշակույթ

ներա կրտսեր դաշնակից Ադրբեջանի ծավալա-պաշտական բացահայտ նկրտումներն ու վայրագ գործողությունները ևս մեկ անգամ վտանգում են արդի Հայաստանի ֆիզիկական գոյությունը: Վերջին երկուսուկես տասնամյակի անկախ գոյության փորձը փաստել է, որ Հայաստանը կարողացել է գոյատևել՝ 42.000 քառ. կիլոմետրանոց բնական որոշակի սահմաններ ունեցող տարածքի վրա վերահսկողություն հաստատելու շնորհիվ միայն, ներառելով Հայաստանի Հանրապետությունն ու Արցախը՝ ազատագրված տարածքներով հանդերձ: Սա՛ է Հայաստանի անվտանգությունն ապահովող այն նվազագույն հողակտորը, որից պակաս տարածքում հայոց պետականության գոյությունն այլևս կարող է անհնարին լինել:

Սա է այն նվազագույն հողակտորը, որն ապահովում է Հայաստանի անվտանգությունը տարածաշրջանային ու միջազգային ուժերի քաղաքական, ռազմական, հոգեբանական ու աշխարհաքաղաքական շահերի բախումներում և փոխազդեցություններում: Միևնույն ժամանակ, ամենևին չի բացառվում, որ Թուրքիայի և Ադրբեջանի անհաշտ քաղաքականությունը և վերջինիս կողմից պատերազմի հավանական սանձազերծումը Հայաստանին այլ ելք չթողնեն, քան է՛լ ավելի ընդլայնելու հայոց ռազմաքաղաքական իշխանությունը հայրենիքի բռնազավթված տարածքների վրա, ընդհուպ մինչև այն կետը, երբ թշնամին այլևս կղաղարեցնի սպառնալն ու կհաշտվի հայերի՝ իրենց հայրենի հողի վրա պետություն ունենալու իրողության հետ¹:

Ուստի Հայկական հարցի լուծաման եւ Հայ ժողովրդի անվտանգության ապահովման ուղղությամբ հարկ է քննարկել եւ լուծել հետևյալ դրույթները.

- Ա - Հայ ժողովրդի պատմական հայրենիքի հողային ամբողջա-կանություն՝
 - Հայաստանի Հանրապետություն
 - Արցախ (Լեռնային եւ դաշտային)
 - Նախիջևան
 - Ախալքալաք
 - Արեւմտյան Հայաստանը ըստ Սեւրի Դաշնագրի
- Բ - Հայ ժողովրդի ազգային միացյալ պետականության ստեղծում, որի առանցքային մասն է կազմում Հայաստանի Հանրապետությունը:
- Գ - Հայկական Յեղասպանության ճանաչումը Թուրքիայի կողմից եւ փոխհատուցման հարցը:
- Դ - Արեւմտյան Հայաստանում եւ Անատոլիայում բնակվող ծածուկ հայերի մարդկային իրավունքների վերականգնում:
- Ե - Սփյուռքահայության ներգաղթը Հայրենի հող:
- Զ - Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող հայկական հողերի վրա մնացած մշակութային ժառանգության վերադարձը իրենց իսկական տիրոջ՝ Հայ ժողովրդին եւ նրանց պահպանումը:

Շար. 1

Վիշապաքար եւ լին Արարատյան դաշտում. 23 հնագիտական արշավ Հայաստանում (Ֆոտո) 16:36, 18.10.2016

Տարածաշրջան: Հայաստան
Թեմա: Հասարակություն



2016-ին ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտը 23 դաշտային ծրագիր է իրականացրել: Այս մասին լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասել է Ինստիտուտի տնօրեն Պավել Ավետիսյանը: Նրա խոսքով արշավներից մի քանիսը դեռեւս ընթանում են, բայց հիմնականում 2016-ի դաշտային սեզոնն արդեն փակ է:

Նա նշել է, որ Ինստիտուտը հետազոտում է ժամանակակից Հայաստանի տարածքը, այսինքն՝ պատմական Հայաստանի մի մասը՝ Արաքս գետից հյուսիս: Նրանք ուսումնասիրում են բազմաթիվ հուշարձաններ՝ սկսած մարդկանց ամենաախին բնակավայրերից մինչև ուշ միջնադարյան բնակատեղիներ: Ինստիտուտի տնօրենի խոսքով՝ ծրագրերի մի մասն իրականացվում է օտարերկրյա կենտրոնների հետ համագործակցությամբ: Մասնավորապես, այս տարի հայ հնագետների հետ աշխատել են 60 օտարերկրյա մասնագետներ: Արտասահմանցի գործընկերներն իրենց գիտելիքներից զատ Հայաստան են բերում նորագույն տեխնիկա, ինչը շատ է օգնում հնագույն հուշարձաններ փնտրելու գործին:



2016-ի պեղումների թվում են Արագած լեռան ստորոտին Գեղարոտ տեղանքի բազմաշերտ բնակատեղիի պեղումները, որոնք իրականացվում են «Արագած» նախագծի շրջանակներում: Այստեղ առաջին անգամ մ.թ.ա. 3-րդ

¹ - «Ապագա» Հանդես, համար 33, 2008 թ. Հունիս:

հազարամյակի 1-ին կեսի դամբարանների կողքին [գտել են](#) ենթադրաբար ծիսական շինություններ:

[Սոյակ-1 տեղավայրում](#)՝ Վանի թագավորության ժամանակների ամրոցում կատարված պեղումները նույնպես հնագետների մտորումների համար նոր նյութ են տվել: Այստեղ պեղել են պալատի ավերակները, եւ կառույցի պլանավորումը ճշգրիտ համընկնում է ուրարտական այլ պալատների պլանին, մասնավորապես՝ Թեյշեբաինի: Սակայն ուրարտական շինանյութի փոխարեն այստեղ կիրառվել է տեղական շինանյութ:



Հայ-գերմանական արշավախումբը շարունակել է Արագածի լանջերի հետազոտությունը, եւ մոտ 3 հազար մետր բարձրությամբ հայտնաբերել է [նոր վիշապաքար](#):



Ինչպես պարզաբանեց Պավել Ավետիսյանը, վիշապաքարերը հանդիպում են բացառապես Հայկական լեռնաշխարհում: Այդ քարերի այսօր մեզ հայտնի տարիքը թվագրվում է մ.թ.ա. երրորդ հազարամյակի վերջին քառորդով, ավելի ճշգրիտ՝ ստույգ հայտնի է, որ այդ ժամանակ դրանք այս տարածքում արդեն գոյություն են ունեցել: Սակայն հնարավոր է, որ ավելի վաղ էլ են եղել, եւ նոր գտածոն կարող է լույս սփռել այս հարցի վրա: Բանն այն է, որ, ինչպես պարզաբանեց Պավել Ավետիսյանը, նախկինում հայտնաբերված բոլոր վիշապաքարերը տեղափոխվել են իրենց տեղադրման վայրից, օրինակ՝ թանգարաններ: Իսկ այժմ եզակի հնարավորություն է ընձեռվել հուշարձանն այն վայրում հետազոտելու, որտեղ այն կանգնեցվել է: Ակնհայտ է, որ սա ծիսական կառույց է, այն կապում են ջրի պաշտամունքի կամ Աստղիկ աստվածուհու հետ: Սակայն այս քարերի վերաբերյալ դեռևս շատ բան պարզված չէ: Օրինակ, ինչպես նշեց Պավել Ավետիսյանը, բոլոր վիշապաքարերը տեղադրվում էին ծովի մակերևույթից 3000 մետր բարձրությամբ, եւ դեռևս պետք է պարզել ինչու:



Ինստիտուտի տնօրենը հիշեցրեց, որ այս տարի շարունակվել են [Քարաշամբի բրոնզե դարի դամբարանադաշտի պեղումները](#), եւ այստեղ հայտնաբերված գտածոները վկայում են այն մասին, որ որոշ գերեզմանափոսերում թաղվել են բավական ազդեցիկ մարդիկ, կարելի է ասել՝ արքաներ: Դա վկայում է, որ մ.թ.ա. 24-23-րդ դարերում այս տարածքում արդեն իսկ գոյություն է ունեցել պետական կառուցվածք:



2016 թվականին աշխատանքները շարունակվեցին նաև Հայաստանի հնագույն մայրաքաղաքներ Դվինում և Արտաշատում: Պավել Ավետիսյանի խոսքով այստեղ իրականացվում են վերականգնողական և ամրացման աշխատանքներ: Դվինը պատմամշակութային արգելոց դարձնելու ծրագիր կա, և այդ ժամանակ այն բաց կլինի զբոսաշրջիկների այցելությունների համար: Մասնագետը նշեց, որ այժմ այնտեղ ոչինչ հնարավոր չէ տեսնել, քանի որ հնագետները պեղված շերտերը կրկին հողով են ծածկում, որպեսզի չկործանվեն:

Նրա խոսքով Արտաշատում խճանկարե հատակով հասարակական բաղնիք է հայտնաբերվել, նաև հնագույն որմնանկարներ, բայց դրանց սպառնում է ջուրը, այդ պատճառով հիմա խճանկարները և որմնանկարները տարհանվում են:

Այս տարի Արենիի հայտնի քարանձավում աշխատանքները շարունակվել են ԱՄՆ դեսպանատան տրամադրած դրամաշնորհի շրջանակում: Այն ևս պատրաստվում է զբոսաշրջիկներ ընդունելու համար, նշեց ինստիտուտի տնօրենը:

Խոսելով այն մասին, թե Հայաստանում կատարվող պեղումներն ինչ նշանակություն ունեն համաշխարհային պատմական գիտության համար, Պավել Ավետիսյանը նշեց, որ [որոշ գտածոներ](#) հիմք են տալիս վերանայելու նախամարդու ծնունդի և այդ ժամանակների միգրացիոն գործընթացների մասին հաստատված պատկերացումները: Օրինակ՝ Ակնաշենի պեղումները ցույց են տվել, որ մ.թ.ա. 7-րդ դարից մինչև 6-րդ դարասկիզբ [Արարատյան դաշտավայրի տարածքում լին է եղել](#):



Պավել Ավետիսյանի խոսքով այդ լճի ափերի հետազոտությունը, դրա քարտեզի կազմումը հնարավորություն կտա լրացնել հնագույն աշխարհի և մարդության տեղաբաշխման գործընթացի մասին պատկերացումներում առկա բացը:



Արաղանի Հայ Գաղութը

Միդդաո Մարտիրոսյան

Արաղանի Հայ Համայնքը և Հայոց Դպրոցը

Արաղան քաղաքը գտնում է Իրանի հարավ արևմուտքում, Պարսից ծոցի ափին, որը դարձել է կղզի, հիսսիսայն կողմից մեծ գետով, շրջապատված Արվանդ ջրուղիով նաև Բահմանշիր թաղամասով:

Արաղանում հայերը հաստատվել են 1909 թվականից, երբ Անգլո-Իրանական նաֆթային ընկերության հիմնարկում ծառայության են անցել Չարմահայից, նոր Ջուդայից, Թեհրանից Թալիզից մի խումբ հայեր, նաև նրանց են միացել, առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Արևմտեան հայաստանից, մասնաւորապէս Վանից գաղթած մի խումբ հայեր: Նրանք հիմնականում աշխատում էին նաֆթարդիւնաբերութեան հիմնարկներում, նաև քաղաքում տարբեր ազատ աշխատանքով:

«Այլք օրաթերթ Շարաթ, 14 Յունիս 2014: Ստացւած գրութիւն,Արևմտահայերը Արաղանում»:

«Հայ ժողովուրդը իր եղերական ճակատագրի հետևանքով, ցրել է աշխարհի չորս կողմերը և ահա իր իսկ պապենական հողերից հալածված, հային ենք հանդիպում, Իրանի Արաղան քաղաքում: Ինչն է նրանց բերել և ինչպես են նրանք հասել այնտեղ, այս մասին կան մի շարք բռնագաղթած հայորդիների վկայությունները, որոնց այժմ ուզում ենք անդրադառնալ:

1915 թվականին, Թուրքական պետության կողմից կազմակերպված և իրագործված սոսկալի ոճիրի բերումով, Հայ ժողովրդին բռնի տեղահան էին անում իսրեկ բնակավայրերից և բնաջնջում: Այդ եղեռական օրերին, Անգլիական կառավարությունը, հայ երախտաւոր Լևոն Փաշա Շաղոյեանի միջնորդութեամբ, Բասրայի մօտ անապատում, բռնագաղթած հայերին բնակեցնելու համար վրաններ էր տրամադրել: Նրանք հողում էին հայերի կարիքները և առատ սնունդ տալիս: Այստեղ ժամանաւորապէս իրենց ապաստան գտան թուրք եաթաղանից մագապուրծ եղած հայեր:

1926 թվականին, Անգլիական Նաւթային ընկերութիւնը, Արաղանում դժգոհ լինելով իր Հնդկի գործաւորութիւնից, որոնց բերել էր Հնդկաստանից և լսելով հայերի բռնագաղթի և Իրաքում եղած գաղթականների մասին, մարդ է ուղարկում նրանց մօտ և խրախուսում նրանց ոտքով գալ մինչև Միջագետքի ափը, որտեղից Արաբները նրանց նաւերով կտեղափոխեն Իրան: Արաբները տեսնելով տարագիր հայերի տանջալի վիճակը, անվճար կատարում են նրանց փոխադրումը Իրան:Անգլիական Նաւթային ընկերութիւնը Իրան

փախադրած հայերին աշխատանքի է վերցնում, տրամադրելով բնակարան, վճարելով բարձր աշխատավարձ: Իրան տեղափոխված հայերի թւում էին Պլուզեանները, Խաչիկ Յունանեանը ընտանիքով, Ալեքսան Պետրոսեանը, ազգային գործիչ Բարսեղ Շաղոյեանը, եղբայրներ Ներսէսը, Յովհաննէս և Յակոբ Գրիգորեանները և Խաչիկ Ասատրեանը»:

Վերջիններիս Իրան տեղափոխման գործում, յիշատակում է նաև Յովհաննիսեան կամ Մեսրոպեան ազգանունով մի հայ ևս: Որպէս ասածի վկայութիւն, ցանկանում ենք մէջբերել ականատես Պետրոս Գեորգեանի յիշողութիւնները:

«Մենք լսելով, Արաղանում Անգլիցիների ձեռնարկած մեծ գործի մասին, սկսեցինք ոտքով գալ մինչև միջագետք, ուր Արաբները մեզ խղճացին և գետը անց կացրեցին: Մենք քայլելով հասանք

Աբադան: 1926 թվականն էր, մենք Աբադանում էինք, որտեղ բարձր պաշտօնեաներին օրական 6 ռիալ աշխատավարձ էին վճարում, իսկ ինձ որ փոքր էի «ես 12 տարեկան էի» օրական 4 ռիալ առանց սենեակի»:

Արևմտահայերը Աբադանում Այլը օրաթերթ Յունիս 14- 2014

Հովիկ Էդգարեան

Մովորաբար քաղաքներում նորեկը, երկար ժամանակ դրսեցի է համարում, բայց Աբադանի համայնքը, բոլորն էլ շրջաններից եկածներ էին, բոլորն էլ միասին կոչւեցին Աբադանցի:

Տիգրերում, արբանեակներ յանկարձ երևան են գալիս, առ ժամանակ շրջապատում աստղերով, լույս սփռելով շրջապատը, գոյատևում երկար տարիներ, ապա պայմանների բերումով յանկարձ անհետանում են:

Աբադանի հայ համայնքն էլ նման արբանեակների, պայմանների բերումով, 1909 թվականին յայտնւեցին Աբադանում, աշխատեցին նաֆտային ընկերություն հիմնարկում, աճեցին զարգացան, հիմնեցին դպրոցներ, եկեղեցի համայնք և 1980 թվականին յանկարձ պատերազմի բերումով ցրիւ եկան սփիւռս աշխարհի, թողնելով երկու դպրոց մի սրահ մի եկեղեցի և անցնալի վառ յուշեր:

Աբադանում հայերը հաստատուել են 1909 թվականից, բայց որպէս համայնք գոյություն են կոչւել 1922-23 թվականից, երբ հիմնել են հայոց դպրոցը:

